

301

L-79

1053

0081010910

11823

03 MAY 2013

1 DEC 2009

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Գ. ԳԱԼՍՏԵԱՆԻ № 36

25 SEP 2006

300

ԱԽԻԼԼ ԼՕՌԻԱ

1320-ԼՕ

301

5-79

uy

Ս Օ Ց Ի Օ Լ Օ Գ Ի Ա

Զբաղման առարկան, դպրոցները եւ նորագոյն
յառաջադիմութիւնները.

1003
11803

Դասախօսութիւններ կարդացուած Պաղտայի հա-
մալարանում 1900 թուի յունուարից մինչեւ
մայիս:

Գերմաներէնից Թարգմանեց

Pessimist



Թ. Ի. Ֆ. Լ. Ի. Ս.

ԷԼԷՄԵՆՏԱՐԻ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն ԱՂԱՆԵԱՆԻ ՊՕԼԻՑ. Դ.
1909

ՀԵՂԻՆԱԿԻ ՅԱՌԱՋԱԲԱՆԸ ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ՀՐԱ-
ՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

«Մի գիտութիւն, որ դեռ Գերմանիայում չի գրաւել այն տեղը, որ նրան պիտի յատկացուի, սօցիոլոգիան է: Գերմանիայում նրա վրայ դեռ ևս կասկածոտ աչքով են նայում. նրա ընթացքը, գործը, մեթոդը, բոլորը դեռևս քննադատութեան և վէճի նիւթ է»: Այս խօսքերը, որ Լէքսիսը իւր 1900 թուին Փարիզում տեղի ունեցած Congrès international de l'enseignement des sciences sociales *) ժողովում տուած գիտական տեղեկագրում գրում է, ցոյց են տալի այն կիսաքուն գրութիւնը, որի մէջ զտնւում է այժմ Գերմանիայում սօցիոլոգիան: Յիրաւի, թէև այժմ Գերմանիայում կան համարձակ գրողներ, որոնք նոր գիտութիւնը խորագնին հետազօտութեան նիւթ են դարձրել, թէև նրա արժէքը, իբրև անկախ գիտութեան, մի քանի նորագոյն աշխատութիւններում պարզապէս ընդունուել է—այնուամենայնիւ չպէտք է ուրանալ, որ գերմանական ազգը անտարբեր կամ ժխտող է մնացել այն մեծ, փառաւոր շարժման վերաբերմամբ, որ սօցիոլոգիական միտքը առաջ է բերել Եւրոպայի արևմուտքում և Միացեալ Նահանգներում:

Սա մի բաց է, որի համար պէտք է ցաւել և շատ

*) Միջազգային կօնգրէս սօցիալական գիտութիւնների դասաւանդութեան:

հիմքեր կան այդ բանի համար: Նախ որովհետև Գերմանիայի աշակցութիւնը գիտական արտադրութիւնների խնդրում, հետազոտութիւնների դանադան ասպարէզներում աւելի քան կարևոր է և այդպիսի մի աշակցութեան պակասութեան այն հիմնական գիտակարգի վերաբերմամբ, որին պատկանում է այժմ խօսքը, անտարբերութեամբ չի կարելի նայել: Ինչպէս մի տընտեսական նորութիւն, որից եթէ հեռու մնայ Անգլիան, անպտղաբերութեան կղատապարտուի, նոյնպէս մի գիտական նորութիւն, որից հեռու մնայ Գերմանիան, միշտ էլ անպտուղ կմնայ: Այն կօնկրէտ փաստը, որ Գերմանիան նոր գիտութեամբ չի հետաքրքրւում, աւելի քան ցաւալի է. երբ մարդ մտածում է, որ սօցիօլոգիան իւր վճռական յառաջադիմութիւնը պատմութեան և քաղաքատնտեսութեան ջանքերից է սպասում, այսինքն այն գիտութիւններից, որոնք Գերմանիայում ամենափառաւոր և փայլուն հետեւանքների են հասել հակառակ Անգլիայի և Ֆրանսիայի, որտեղ սօցիալական ուսումնասիրութիւններում նախապատմական և կենսաբանական ուղղութիւններն են իշխողները: Այս պատճառով շատ ցանկալի է յօգուտ ընդհանուր գիտական յառաջադիմութեան և նոր գիտութեան վերջնականապէս հիմնաւորման, որ վերջապէս այն սառը կասկածը, որով գիտական Գերմանիան սօցիօլոգիայի սկզբնաւորութիւնը ողջունեց, վերջնաւոր և որ ուժեղ գերմանական հոգիները տաք կերպով նուիրուէին նրա օրէնքների հետախուզութեան, նրա հետեւանքների կարգաւորման և հիմնաւորման:

Իրերի այսպիսի դրութեան ըննութիւնը և սրան օգնութիւն հասցնելու անհրաժեշտութիւնն էր անշուշտ պատճառ, որ Դր. Կլ. Հայսը միտք յղացաւ այս փոքրիկ գիրքը գերմաներէն հրատարակել: Պաղուայի

համալսարանի բոլոր մասնաճիւղերի ուսանողների խնդիրը առիթ է դառնում նոր սօցիօլոգիական գիտութեան ամենաընդհանուր գաղափարները բացատրել, նրա գլխաւոր դպրոցները, կարևոր ուսմունքները և նրա աչքի ընկնող յառաջադիմութիւնը թեթև և հեշտ ձևով արտայայտել. ահա այս գրքի նպատակը: Ես գիտեմ և ընդունում եմ, որ այս գրքի էջերում նոր գիտութեան դրած դժուարին և ընդարձակ պրօբլէմների խորիմաստ ըննութիւնը չկայ և սրանց մասին սուղ տեղում միայն աղօտ և անկատար բացատրութիւն կարող եմ տալ: Սակայն թոյլ տրուի ինձ հաւատալ, այս գործը, չնայած իւր հեշտութեանը մեծ դժուարութեամբ եմ կատարել. (մի հին իտալացի երաժիշտ ասում է. շատ դժուար է գիրք մը բռնելի լինել.) այս գործը նրանց համար անօգուտ չի լինի, որոնք նոր գիտութեամբ, հրապարակի տաք կռուի նիւթով են ուղում զբաղուել: Թոյլ տրուի ինձ հաւատալու, որ այս գիրքը բախտ կունենայ Գերմանիայում մի հասկացող և բարեխիղճ քննադատ գտնելու, առնուազն կցրի գերմանական ազգի կապածամտութիւնը ընդդէմ նոր գիտութեան և մտածողների ժողովրդի կողմից իբրև նոր ուսումնասիրութեան ասպարէզ համակրութեան և մասնակցութեան կարժանանայ: Այսպիսի մի յոյսի իրականացումը կլինի իմ մեծ վարձատրութիւնը. աշխատանքիս համար ցանկալի պսակը:

Ախիլ Լօռիս

Յունիս, 1901.



Ե Ր Կ Ո Ւ Խ Օ Ս Ք

Հասարակութեան միտքը մեղանում օրէցօր արթնանում է, բայց դժբախտաբար մեր հասարակութեան կարող գործիչները չեն տալի այդ մտքին յարմար կերակուր, հնարաւորութիւն տալու համար անսայթաք և զինուած առաջ դնալու: Հասարակական խնդիրներին վերաբերեալ եղած գրականութիւնը աւելի շատ թեթև, բըօշիւրային բնոյթ ունի, մինչդեռ անհրաժեշտ է փոքրի շատէ լուրջ, գիտական գրուածքներ առաջադրել հասարակութեանը յախուռն և միակողմանի բայլերից զերծ պահելու նրան: Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ հասարակութեան ինքնագիտակցութեան համար աւելի քան կարևոր է զբաղուել ըստ էութեան այն խնդրի հետ, թէ ի՞նչ է ընդհանրապէս հասարակութիւնը ինքը, ի՞նչպէս է կազմուած, ի՞նչ ոյժերով կառավարուած, կարևոր եմ համարում լոյս ընծայել մի փոքրիկ թարգմանական աշխատանք:

Այս գրքիցին էլ պէտք է ասել, ինչպէս հեղինակն է խոստովանում, խիստ գիտական չէ, բայց սրա առաւելութիւնն այն է, որ կարճ և ամփոփ կերպով առաջադրում է այս հարցի մասին եղած գլխաւոր հայեցակէտերի էութիւնը և տալիս է նրանց քննադատութիւնը:

Պարտք եմ համարում յայտնել, որ ինքս հեղինակի պաշտպանած հայեցակէտի հետ համաձայն չեմ:

Թարգմանիչ

27 փետր., 1909.

Շուշի:



ԱՌԱՋԻՆ ԳԼՍԱԼԵՍՍՈՒԹԻՒՆ

Սօցիօլօգիայի զբաղման առարկան

Սօցիօլօգիան նոր ժամանակի գիտութիւն է և այսօր իրաւամբ նոր գիտութիւն ածականին արժանի. այսպէս է անուանում իւրաքանչիւր դար այն ուսմունքներին, որոնք սկիզբն են առնում այդ դարի հետ: 18-րդ դարում այդպէս են անուանել ժանրատիստ վիկօն պատմութեան փիլիսոփայութիւնը և Դիւպօն դ'էնէմուրը քաղաքատնտեսութիւնը: Գուցէ և հակասական երևայ, բայց պէտք է աւելացնեմ, որ սօցիօլօգիան թէև սօցիալական գիտութիւնների մէջ ամենանորն է, միաժամանակ նաև ամենահինն է: Արդեօք այս ի՞նչպէս է հնարաւոր: Այս բանի հիմքը հեշտ կը հասկանայ և չի զարմանայ նա, ով մարդկային մտքի զարգացումը իւր մտածողութեան նիւթ է դարձրել: Այստեղ երևում է իսկապէս մի շատ պարզ և հիմնական ճշմարտութիւն. մարդը բնութիւնից արդէն հանրագիտակ է և հակուած է ընդհանրացման. միայն երկար զարգացման պրօցէսը նրա մէջ զարթեցնում է վերլուծելու և մասնաւորելու ունակութիւն: Բնութիւնը ստեղծում է հանրագէտներ, միայն կրթութիւնն է տալի մասնագէտներ: Այլքսանդր Դիւման իրաւունք ունէր նուրբ սրամտութեամբ նշկատելու, որ մասնագէտը մեր նորագոյն կրթութեան ապուշն է և այս մի փոքր կոպիտ նախադասութեան

մէջ կայ մի անժխտելի ճշմարտութիւն՝ որ մարդը իւր բանականութիւնով բնութիւնից անվտանգ է ելնում և միայն պատմութեան երկար աշխատանքը ծնում է կրթութեամբ մարդուն իւր փոքր, հատ ու կտոր և նուազ խելքով: Այս է պատճառը, որ մարդկային մտքի առաջին արտայայտութիւնները զանազան ճիւղերում ոչ թէ մասնակի, այլ ընդհանուր բնաւորութիւն ունին. այդ արտայայտութիւնները ոչ թէ երևոյթի մի կողմին կամ միայն մի երևոյթի են վերաբերում, այլ դիտողին երեացող երևոյթի ամբողջութեանը: Միայն աւելի ուշ շրջանում երևում են այն մակերևոյթային և պակասաւոր դրութիւնները, որոնցից չի կարողանում ազատ մնալ սկզբնական և կոպիտ հանրագիտութիւնը. այս պատճառով սկսում է համբերատար մասնագիտական աշխատանք, որը սկզբում ուսումնասիրած բազմածալ երևոյթները իւր հետախուզութեան շրջանն է առնում, որպէսզի կարողանայ եղած բացատրութիւնները երկար, ջանասէր քննութեան ենթարկել: Այսպիսով միտքը թէև ծաւալով նեղանում է, բայց դրա փոխարէն խտանում է և հնարաւոր է դառնում երևոյթների ներքին կողմի բացատրութիւնը, նորից կրկնում է միևնոյն պրօցէսը մի այլ յատուկ երևոյթի վերաբերմամբ, ապա կրկին մի ուրիշի վերաբերմամբ: Այսպէս կարող է ամեն ոք բնութիւնը և նրա ընթացքը պարզ կերպով որոշել: Միայն այն դէպքում կարելի է դիմել բոլոր երևոյթների համադրական (սինտետիկ) ուսումնասիրութեանը, երբ այդ երևոյթները առանձին առանձին յատկապէս և խորը ուսումնասիրուել են. միայն այդ ժամանակ հնարաւոր է դարեր շարունակ կատարած զատումները միացման վերածել. միայն այդ ժամանակ կարելի է և պէտք է սկզբնական հանրագիտութիւնը վերա-

կանգնել, որը սակայն առաջինի նման մակերևոյթային և անգէտ չէ, այլ որոշ մեթոդով է և գիտականօրէն ամրապնդուած դրական և փորձնական հետազօտութիւններից ստացած վստահելի աղբիւրների վրայ:

Այս երևոյթը մարդկային մտքի մի հրաշալի նշմանութիւնն է. սա մի երկանդամ (բինոմ) օրէնք է, որը մարդու մտքի և կեանքի այս ու այն արտայայտութիւններում երևան է գալի: Մարդը սկսում է իւր կեանքը հանրագիտութեամբ և հպարտութեամբ պընդում է homo sum, humani nihil a me alienum esse puto *): Այնուհետև ձանձրացած մակերևոյթային և անպտղաբեր հանրագիտութիւնից սկսում է մասնագէտ դառնալ և հետզհետէ սկսում է մասնագիտական աշխատանքներով պարզել և բաց անել ընդհանուր երևոյթների մասնաւոր տարրերը. վերջապէս, երբ այս աշխատանքը որոշ չափով կատարւած է լինում, նոր հետախուզողը սկսում է ձեռք բերուած արդիւնքների մի համադրութիւն և վերականգնում է հանրագիտութիւնը, սակայն ոչ նախկին յախուռն ձևով, այլ լաւ մտածուած և գիտական հանրագիտութիւն, որը հիմնւում է ամենաընտիր հետազօտական մեթոդների և յատուկ ուսմունքների ձեռք բերած տեղեկութիւնների վրայ: Այս է պատճառը, որ բոլոր գիտութիւններն էլ, երբ առանձին երևոյթները հիմնաւորապէս վեր են լուծում և նրանց վերջնական պատճառները գտնում, միայն այն ժամանակ սկսում են իրենց փայլուն և գիտական համադրական աշխատանքը, որը և յեղափոխականացնում է մարդկային միտքը հետա-

*) Մարդ եմ և կարծում եմ, ոչինչ մարդկային ինձ խորթ չէ:

խուզութեան աւելի ընդարձակ անհամաների համար: Կամ թէ մեծ թանկարժեքները սկսուած են հէնց այն ժամանակ, երբ վերաբերութիւնը (անալիզ) յառաջագիծութեան ամենամեծ քայլերն է արել: Այս բանը բնական է, քանի որ երկու տրամաբանական գործողութիւններն էլ միմեանց հետ ամենասերտ կերպով կապուած են: Երբ հնարաւոր է դառնում ամենամանր երևոյթները ըմբռնել, կարելի է դառնում նիւթի բոլոր արտայայտութիւնները ընդգրկել և այսպիսով նրան մի ընդհանուր ձևի տակ միացնել:

Այս բոլորի համար ամենալաւ ապացոյցը սօցիօլօգիայի կատարած ընթացքն է: Մարդկային հետախուզութիւնների արշալոյսին սօցիալական երևոյթներով զբաղուող մտածողները ուսումնասիրում էին ոչ թէ այս կամ այն երևոյթը, օրինակ իրաւական, քաղաքական կամ կրօնական, այլ սօցիալական կեանքը ամբողջապէս խորհրդածութեան նիւթ էին դարձնում, հետազօտում էին նրա էութիւնը և նրա օրէնքները: Ուրիշ խօսքով հին դարու մտածողները, որոնք մարդկութեան ընդհանուր երևոյթներով են զբաղուել, իսկապէս սօցիօլօգներ են եղել և գրել են սօցիօլօգիա, ինչպէս Մոլիեռի մի հերոսը, պ. Ժուրդէնը արձակ գրութեանը է գրում, առանց իմանալու, որ իր գրութեանը արձակ է: Մարդկային ցեղի երկու ուսուցիչները, Պլատոն և Արիստոտելը, իրենց գրութեանները անուանել են «պօլիտիկա»-ներ, թէև իրօք այդ գրութեանները սօցիօլօգիային են վերաբերում, որովհետև նրանք ներփակում են և գրաւում են սօցիալական կեանքի բազմազան երևոյթները, որովհետև նրանք հաւասարաչափ անկողնասպանութեամբ զբաղուում են իրաւական, տնտեսական, բարոյական, քաղաքական և այլ երևոյթներով, պարզ պերճախօսութեամբ բացա-

տրում են նրանց փոխադարձ ազդեցութիւնները և նրանց խճճուած դրութիւնը: Յիրաւի հին դարի սօցիօլօգիական համադրութիւնը հասկանալի պատճառով մակերևոյթային էր, շատ անգամ երեխայական, աւելի համապատասխան մի շրջանի, երբ, Մակօլէյի խօսքով ասած, իրերի փիլիսոփայութիւնից առաջ իշխում էր խօսքերի փիլիսոփայութիւնը: Այնուհետև հետեւեալ մտածողը չդանդաղեց ճանաչելու այն անհրաժեշտութիւնը, որ դատարկ և անպտուղ ընդհանրացումները պէտք է թողնել և գալ սօցիալական երևոյթների մանրակրկիտ և համբերութիւն պահանջող վերլուծութեան: Արդէն հին Հռոմում մենք չենք պատկերում այլևս հանրագէտների, որոնք ուսումնասիրում են մարդկային հասարակութեան կազմն ու օրէնքները, այլ տեսնում ենք մի խումբ մասնագէտներ, որոնք սօցիալական երևոյթներից միայն մէկն են հետազօտում, այն է իրաւունքը: Նոյնպէս միջին դարում եղել են մասնագէտներ, որոնք մանրակրկտութեան հասցրած հանգստութեամբ այս կամ այն երևոյթը հետախուզել են, օրինակ եղել են աստուածաբաններ, եկեղեցական իրաւաբաններ: Այսպիսով պատմութեան երկար աշխատանքը յունական փիլիսոփայութեան դուրեկան և համաչափ ձևերի մէջ մտցրեց լատին իրաւաբանների և միջնադարեան մեկնիչների անկիւնաւոր և խորդ ու բորդ ձևերը: Վերածնութեան դարում, երբ կազմում են բացարձակ և կեդրոնական կառավարութիւններով պետութիւններ, հանդէս են գալի քաղաքագէտներ, որոնք աւելի կամ պակաս բախտով մի աւելի լաւ կառավարութեան օրէնքներ են մշակում: Նրանց կողքին ծաղկում են պատմագիրներ, պատմութեան փիլիսոփաներ, որոնք քաղաքագիտութեան գլխաւոր և որոշ օրէնքներն են հետախուզում: Աւելի ուշ, երբ

կապիտալը իւր դիւթական գաւազանով հանդէս է բերում խոշոր գործարաններ իրենց բազմերանգ հետեւանքներով, ճոխութիւն, թշուառութիւն, սով, ծաղկում է քաղաքատնտեսութիւնը, որը իւր խնդիրն է դարձնում ուսումնասիրել այն օրէնքները, որոնց հիման վրայ ստեղծւում է և բաժանւում հարստութիւնը՝ Վաճառականութեան զարգանալը առաջ է բերում վաճառականութեան օրէնքները. նոր կապիտալիստական կոլտուրայի թունաւոր պտուղ յանցաւորների շատանալը պատժական օրէնքը գիտութեան աստիճանին է բարձրացնում:

Սօցիալական կեանքի զանազան երևոյթների այս ձևով վերլուծութիւնից առաջ եկած գիտութիւնները, զարգացան միմեանցից անկախ և զանազան ուղղութիւններով, առանց մէկը միւսի մասին մի բան իմանալու: Ծիշտ է այնուամենայնիւ, որ իւրաքանչիւր գիտութեան վերաբերեալ ձանձրալի դասագրքերը միշտ հնուց մնացած սովորութիւնը—մի պոլսի նուիրել զանազան գիտութիւնների միմեանց հետ ունեցած առնչութիւնների մասին — պահում էին. սակայն այս բացառապէս քննութիւն տուողների զուարճութեան համար կազմուած սխօյաստիքական վարժութիւններ են, որոնց մէջ միայն շատ աղօտ տեսութիւն է տրւում այն օրգանական կապի մասին, որը սօցիալական գիտութիւնները կապում է նրանց ուսումնասիրութեան նիւթ կազմող երևոյթների հետ: Կայ, այսպէս կոչուած, իրաւունքի փիլիսոփայութիւն, որը պահանջ է դնում իրաւաբանական զանազան գիտութիւնները վերածել միայն մի դօգմատիկ միութեան: Մի կողմ թողնելով այս տեսակ միացման հատուկ կողմ բնաւորութիւնը, այս վարդապետութիւնը, որ պահանջ էր դնում իրաւաբանական գիտութիւնները

միացնել, ոչ այլ ինչ էր, քան եթէ դատարկ մետաֆիզիկա, որը առաջ էր եկել կամայական հիմքերից և դրական մեթոդի ամենատարրական պահանջների հետ ծանօթ չէր: Վերջապէս ինչ վերաբերում է միւս սօցիալական գիտութիւններին, նորա մի միացնող համադրութեան ամենափոքր կարիքն անգամ չզգացին և բաւականացան նրանով միայն, որ սօցիալական իւրաքանչիւր յարաբերութիւն երկու կերպ արտայայտեն, մէկ նկարագրական գիտութեամբ և մէկ էլ նրա յարաբերութիւնները ուսումնասիրող փիլիսոփայութեամբ. այսպիսով նրանք տեղ բաց արին պատմութեան և պատմութեան փիլիսոփայութեան, ստատիստիկայի և ստատիստիկայի փիլիսոփայութեան, աշխարհագրութեան և աշխարհագրութեան փիլիսոփայութեան, քաղաքատնտեսութեան և սրա փիլիսոփայութեան և այլն համար. սրանցից առաջինները նոյնքան ծեծուած և փորձնական էին, որքան երկրորդները դատարկ և ծիծաղելի:

Որքան մասնագիտական աշխատանքը առաջ է դնում, որքան շատանում են այն իրականութիւնները, որոնց վրայ մասնագէտները փորձում էին իրենց արուեստը, այնքան աւելի կարիք է զգացւում մի արքայական պողոտայի, որը հետազօտութիւնների զատ զատ շրջանները պէտք է միմեանց հետ կապէ: Ուրիշ խօսքով վերլուծական աշխատանքի յառաջադիմութիւնը մի որոշ կէտում արդէն մի համադրական աշխատանքի անհրաժեշտութեան կարիքը զգացնել տուեց: Այս ձևով պէտք էր վերջապէս առանձին առանձին—իրաւունքի, բարոյականութեան, քաղաքագիտութեան, ստատիստիկայի վերաբերեալ—գիտութիւններից բարձրանալ հասարակութեան մէջ կատարուող բոլոր երևոյթները ուսումնասիրող մի գի-

տուութեան կամ մի ընդհանուր սօցիօլօգիական գիտութեան: Այս ձևով նորից առաջ եկաւ Պլատոնի և Արիստոտելի համադրական գիտութիւնը, բայց որքան տարբեր նրանից: Յիրաւի այլ ևս չկայ մի դարդարուն գիտութիւն, ամբողջապէս ճարտասանութիւն և ֆրագներ, որ տուել էին նրան այն հետորները, այլ մի գիտութիւն, որ առաջ էր եկել իրականութիւնից և թուերից, զինուած հաշուի և դիտողութեան: Բոլոր միջոցներով, հարստացած անթիւ դրական ապացոյցներով, որոնց հասել էին առանձին գիտութիւնները իրենց հարկւրամեայ զարգացման ընթացքում:

Այն միութիւնը, որը սպասուում է այս գիտութիւնից, այլևս հին գիտութեան տրուած չման վերացական և մետաֆիզիկ չէ, այլ դրական և թանձրացեալ. նա այլևս բարձրից ցած չէ իջնում, այլ խորից վեր է բարձրանում. նա այլևս մի կամայական իդէաից չի սերուի, այլ իրականութեան վրայ կհաստատուի: Խնդիրն ուրեմն այն չէ, որ զանազան սօցիալական երևոյթները մի միակ և մշտական, վերացական սկզբունքով միմեանց հետ կապուին, այլ խնդիրն այն է, գտնել այն մի և միակ բճիճը, որտեղ զանազան սօցիալական երևոյթները իրենց սկիզբն են առնում, գտնել այն պարզ և սկզբնական միակ երևոյթը, որից զարգացել են և կատարելագործուել զանազան սօցիալական իրականութիւններ, վերջապէս այս բոլոր իրականութիւնները մի ընդհանուր իշխող, հիմնական գաղափարի վերածել: Բաց անել այն բճիճային երևոյթը, այլև նախընթացքը որոշել, որի օգնութեամբ զանազան սօցիալական երևոյթներ դուրս են եկել, պարզել այն օրգանական կապը, որը եղել է նրանց մէջ շնորհիւ նրանց մէջ եղած փոխադարձ ազդակցութեան, կամ սկզբնական նոյնութեան, վերջապէս բճիճային երե-

ւոյթի կազմից և փոխակերպութիւնից դուրս բերել սօցիալական օրգանիզմի կազմն ու փոփոխութիւնները, այս է սօցիօլօգիայի գործը, այս է նրա նպատակը: Սօցիօլօգիան իւր նորագոյն ձևով այն գիտութիւնն է, որը նպատակ ունի ուսումնասիրելու սօցիալական երևոյթների միատեսակ ծագումը, նոցա փոխադարձ կապը, նրանց կազմն ու լիակատար զարգացումը, հետախուզելու հասարակութեան ստատիկ (statik) ու դինամիկը (dunamik). այն շրջանները ու կեանքի պայմանները, որոնցով նա անցել է. նրա զանազան նշանները և յառաջագիմութեան օրէնքները և նրա հնարաբաւոր զարգացումը:

Նրա ամենաբարձր խնդիրը գերակշռում է մինչև նա հղած զանազան սօցիալական գիտութիւններից տրուած խնդիրներից. նա այնպիսի բնաւորութիւն ունի, որ առաջին հայեացքից թւում է, թէ ոչ միայն մի մարդու, այլ և նոյնիսկ մի քանի սերունդների ոյժերից վեր է: Այս, հաղիւ նոր ծնունդ գիտութեան, վերջնական ամրապնդումը այնուամենայնիւ. ոչ մի մարդի և ոչ էլ մի սերնդի գործ է, թէև այս բանը շատ աշխատանք կարող է պահանջել և դժուար լինել, թէև գոցէ պահանջէ հետազոտողների շարքերի միացեալ ոյժ, այնուամենայնիւ նա կարող է անպայման այս խնդիրը իրականացնել, որովհետև համապատասխանում է մեր ժամանակի մի անպայման կարիքի, որովհետև նա մեր ժամանակի կուլտուրայի ցաւոտ բացի արտայայտութիւնն է. այն պատճառով է նա անխուսափելի, որ ինքն իրեն լրացնում է և յաղթանակում, Պարզ է, որ նոր գիտութիւնը դեռ չէ գտել իւր Նիւտոնին և Կիպլերին, բայց նրա երևալը արդէն չի թողնի, որ նրանք երկար սպասեն: Կարելի է ասել, որ սօցիօլօգիայի վերջնական ամրապնդումը 20-րդ դարու փառքն

է կազմելու, ինչպէս տնտեսագիտութիւնը 19-րդ դարունը և քաղաքական գիտութիւնները 18-րդ դարուն են եղել:

Նոր գիտութեան բնոյթը, բնաւորութիւնը, բովանդակութիւնը, պարզ կերևայ այն ժամանակ, երբ քննենք այն երեք դպրոցները, որոնք իրար ետևից ասպարէզը կուռի տեղ են դարձրել և նրան տալիս են իրենց դրոշմը և ուղղութիւնը: Իմացական դպրոց Օգիստ Կոստի, կենսաբանական (biologisch) Հերբերտ Սպենսերի և տնտեսական, որը կապուած է սովորաբար Կ. Մարքսի անունին հետ: Այս ուսումնասիրութիւնը անելուց առաջ պէտք է մի քանի թիւը կարծիքներ փարատել, որոնք սօցիոլոգիայի բնաւորութեան և նրա արտաքինի ազդեցութեան տակ դեռ ևս կիրառութեան մէջ են:

Մի քանիսները պնդում են, որ սօցիոլոգիան և պատմութեան փիլիսոփայութիւնը իրար ծածկում են, ուստի և սօցիոլոգիան մի աւելորդ գիտական յղացումն է, կամ մի ուրիշ բան չի անում քան թէ այն, ինչ որ վաղուց ի վեր գոյութիւն ունեցող մի գիտութիւն անպտուղ արել է: Սակայն անիրաւացի տեղը. նախ նոր գիտութիւնը պատմութեան փիլիսոփայութիւնից ջնկում է նրանով, որ վերջինս հասարակութիւնը վեր է լուծում միայն նրա շարժման ժամանակ, նրանից այն կողմը սակայն լսմանական երևոյթները ոչ միայն շարժման, այլև կանգնած ժամանակները ուսումնասիրողը սօցիոլոգիան է: Կասկած չկայ, որ սօցիոլոգիան դիւնամիկին (շարժմանը) աւելի մեծ կարևորութիւն է տալի քան շտատիկին (կանգնածը). այն ժամանակից, երբ այն հիմնական դրութիւնը, որին յարում են նրա ներկայացուցիչների ամենախորը հետախուզութիւնները, զարգացման օրէնք է ճանա-

չուել: Սակայն այս բանը ոչ միայն 17-18-րդ դարի տախտկութեան ներկայ դրութեան մի պատահական արդիւնք կամ հեղինակների ստացած գիտականութիւն, որը նրանց մէջ պատահաբար գերակշռում է, և ոչ թէ մշտական իշխող նշան է նոր գիտութեան, որի դաւանանքները անմիջապէս գործադրելի են միայն մի պատմական ու կանգնած հասարակութեան վրայ: Բացի այդ սօցիոլոգիան պատմութեան փիլիսոփայութիւնից տարբերում է նաև այն բանով, որ նա ոչ միայն պատմական փաստերն է ի նկատի ունենում, այլ ստատիստիքական, բարոյական, իրաւական, ընդհանրապէս մարդկային հասարակութեան բոլոր հիմնական երևոյթները: Այնուհետև պատմութեան փիլիսոփայութիւնը պնդում է, որ իւր ուսումնասիրած փաստերը մի ընդհանուր միութեան է վերածում, դնելով մի վերացական, մետաֆիզիկ, գերզգայական սկզբունքի դրօշակի տակ, մինչդեռ սօցիոլոգիան ոչ մի այդպիսի սկզբունք օգնութեան չի կանչում, չի պարունակում իւր մէջ ոչ մի ապրիորի կամ կամայական բան, այլ եզակի սօցիալական երևոյթները միութեան է վերածում, չամփոփելով այդ բոլորը մի իդէայի տակ, այլ մի փաստի կամ մի շարք շօշափելի, պարտաճանաչ կերպով ուսումնասիրուած և հաստատուած փաստերի:

Աւելի ևս քիչ կարելի է համաձայնել նրանց հետ, թէ սօցիոլոգիային փոխարինում է իրաւունքի փիլիսոփայութիւնը և այսպէս ասած նրա ժառանգն է դառնում: Իսկապէս այս հայեացքը իւր ականաւոր պաշտպանութիւնը գտնում է յանձին մեր նշանաւոր Արդի-գօի, որը ընդորոշում է սօցիոլոգիան իբրև մի ուսմունք արդարադատութեան բնական բաժանմունքի կամ ընդհանրապէս իրաւունքի: Սակայն մեր կարծիքով իրաւունքի բնական բաժանմունքի ուսումնասիրութիւնը

1003
11805



սօցիօլօգիայի խնդրի միայն մի մասն է և նա ներկա-
կում է հասարակական կեանքի բազմապիսի արտա-
յայտութիւնների վերլուծութիւնը:

Այս պատճառով պէտք է ճշմարտութիւնը խոս-
տովանել, որ սօցիօլօգիան փոխարինում է թէ իրա-
ւունքի և թէ պատմութեան փիլիսոփայութիւնները,
որովհետեւ ինչոր սոքա խոստացել են և նոյն իսկ էլ
աւելին է տալի. նոյնպէս քիչ բան կարող են ասել այս
առթիւ փիլիսոփայութիւնը, աշխարհագրութիւնը, տըն-
տեսութեան փիլիսոփայութիւնը և այլն, որոնք իբրեւ
յադթուած և մեռած գիտութիւններ պէտք է նկա-
տուեն, որոնց դիրքերը նոր սկսող գիտութիւնը ան-
կասկած գրաւելու է: Որոշ մտքով կարելի է պնդել,
որ սօցիօլօգիան այս գիտութիւնների մահուան վճիռն
է ստորագրել, բայց գուցէ աւելի ճիշտ կլինէր ասել
որ նրանք արդէն վաղուց մեռած էին և սօցիօլօգիան
հաղիւ ժամանակին նրանց մահը հաստատեց:

Զի արդարանում այն երկիւղը, որ շատ կողմերից
է լսում, թէ սօցիօլօգիան զանազան եղակի սօցիալա-
կան գիտութիւնների շրջաններում ռանգութիւններ է
անում կամ նրանց անշափ ոլորումներում շնչարգել է
լինում: Իսկապէս Կօնտը ուշադրութիւն է հրաւիրել
այն բանի վրայ, որ նման տեսակի երևոյթների եղա-
կի խմբակցութիւնները ուսումնասիրող գիտութիւննե-
րի շարքում դեռ տեղ կայ նրանց համար, որոնք զա-
նազան գիտութիւնների, գիտնականների գիւտերն են
կարգի դնում և սիստեմի վերածում: Այժմ հէնց սօ-
ցիօլօգիայի խնդիրն է զանազան սօցիալական գիտու-
թիւնների արդիւնքները սիստեմի տակ դնել և կար-
գաւորել. նա այս բոլորը մի յայտարարի է բերում և
բացատրում նոցա անպայման ծագումը միատեսակ
պատճառների կամ առաջ բերող երևոյթների խմբերից:

Այսպիսի դրութիւնը ոչ միայն շատ հեռու է մինչև
այժմ զատ զատ սօցիալական փաստերը ուսումնասի-
րող գիտութիւնների ամբողջութեանը և անկախու-
թեանը սպառնալուց, այլ և իրենից առաջ նրանց գո-
յութիւնն է ենթադրում և նրանց վրայ հիմնում:
Աւելի սխալ կարծիք չի կարող լինել քան այն, որ
հէնց Կօնտը առաջ է բերել, թէ քաղաքատնտեսու-
թիւնը պէտք է մտնի նոր գիտութեան-սօցիօլօգիայի
մէջ և լուծուի նրա մէջ, որովհետեւ քաղաքատնտեսու-
թեան և սօցիօլօգիայի յարաբերութիւնը նոյնն է, ինչ
որ եզրակացութեան և մէկ նախադրեալի: Սօցիօլօ-
գիան երբէք չի կարող ոչ քաղաքատնտեսութիւնը վեր-
ջացնել և ոչ էլ նրան փոխարինել: Դրա հակառակ աւե-
լի հաւանական է, որ սօցիալական գիտութիւններից
ամեն մէկը սօցիօլօգիայի հաստատուելուց յետոյ թէև
հետզհետէ կ'փոխուի, բայց իւր սեփական գոյութեան
իրաւունքը և անկրճատ գործունէութեան շրջանը
կ'պահպանի:

Դեռ աւելին. բաւական չէ, որ սօցիօլօգիան զատ
զատ սօցիալական գիտութիւններին չի ճնշի, այլ և բա-
ցի այն, որ նրանց կենդանութիւն կ'տայ, պտղաբեր կը
դարձնի և կ'ընդարձակի, նա նրանց կ'տայ դրանց հետ
միասին նաև նոր մթնոլորտ և կ'բարձրացնէ նրանց
աւելի բարձր համադրութեան աստիճանի: Նա շրջող
աւիշ է (lymphe) որը բազմապիսի սօցիալական երե-
ւոյթների մէջ պտտում է և նրանց հաղորդում, հետա-
խուղում և բացատրում է այն ծածուկ պատճառ-
ները, որոնք պատճառ են անընդհատ զարգացման ըն-
թացքի և անվերջ փոխոխութեան. եթէ նա շօշափում
է զատ զատ սօցիալական գիտութիւնների հետեանք-
ների էութիւնը, դրա փոխարէն նա կազմում է բոլորի
համար ներածութիւն և անգնահատելի հետախուղու-

թեան մի շար: Արդէն սկսել են հէն մասնագիտական գիտութիւնները նոր սօցիալական համադրութեան մոգական շնչի ազդեցութեան տակ իրենց քնից, որի մէջ փետացել, սառել էին, արթնանալ և նոր ոյժ հաւաքել: Պատմութիւնը դադարում է զինուորական և տոհմական գործերի միատեսակ ժամանակագրութիւն լինելուց, դառնում է մեթոդիկական պատմութիւն, նրկարագրութիւն մարդկանց փոփոխութիւնների և զարգացման: Իրաւունքը մի կողմն է թողնում հին ձևականութիւններն ու դատարկաբանութիւնները, որոնց մէջ երկար մնալով ժանգոտել էր, որպէսզի աւելի բարձրանայ և կարողանայ խորը կերպով վերլուծել այն յարաբերութիւնները, որոնք գոյութիւն ունին անհատի և դասակարգերի միջև: Քաղաքատնտեսութիւնը կ'դառնայ սօցիալական տնտեսութիւն. նա կենսականում է շփուելով զարգացման նոր վարդապետութեան հետ և յաջողութեամբ սկսել է ձևաբանական հետախուզութեան այն յարաբերութիւնների, որ եղել են պատմութեան իրար յաջորդող շրջաններում սեպհակասութեան և աշխատանքի մէջ: *) Պատժական իրաւունքի գիտութիւնը այլևս միայն չպէտք է ոչնչացնէ և վրէժի սարսափելի մի ուրուական չէ, որը մեղաւորի մահն ու տանջանքներն է ուղղում, այլ նա կլինի ներման ու մեղմացնելու մի գեղեցիկ տեսութիւն, որը հասկանում է յանցանքը և ցաւակցում է, իբրև անխուսափելի արդիւնք դժբախտ նախադրեալների: Չկայ մի գիտութիւն, որը շօշափէր սօցիալական բազմանկիւնում մի կողմը և չստանար անգնահատելի օգուտներ և հեռատես մղումներ նոր, միացնող գիտութիւնից, որը:

*) Այս կէտի մասին աւելի ընդարձակ բացատրութիւն կայ իմ գրքում *La costituzione economica odierna* (ժամանակակից տնտեսական կազմը) Torino Bocca 1899.

ինչպէս լաւ նկատում է Վաննի, մտածում է միակ կենդրոնաձիգ ոյժ դառնալ, դէպի որը միասին ձգտելու են բոլոր սօցիալական գիտութիւնները, որը դասուելու է նրանց արմատ և ընդհանուր հիմք: Մի կողմից համադրող և կարգաւորող, միւս կողմից պտղաբեր դարձնող և առաջնորդող գիտութիւն է նա:

Որ սօցիոլոգիան դեռևս շատ հեռու է այս իդէալից, մի այնպիսի փաստ է, որը ոչ մի մտածող չի համարձակուի ժխտել: Ընդհակառակը ոչ մի կասկած չ'կայ, որ նոր գիտութիւնը դեռևս շատ հեռու է խիստ մեթոդունեանալուց, տեսութիւնների ճշգրտութիւնից, որոշակի օրէնքներից, իսկ այս բոլորը անհրաժեշտութիւն են մի գիտութեան համար, որը իսկապէս ուղղում է գիտութիւն անունը կրել: Համաձայնում եմ այս բոլորի հետ, սակայն պէտք է նկատել, որ այն կասկածները և ժխտումները, որոնք վխտում են նոր գիտութեան շուրջը և աշխատում են խանգարել նրա առաջին վախկոտ քայլերը ճշմարտութեան թեք ճանապարհի վրայ, չափազանցութիւններ և անմտութիւններ են:

Մի քանիսը կասկած են յայտնում նոր գիտութեան լրջութեան վերաբերմամբ: Ես ինքս 20 տարի առաջ հրատարակել եմ այն կասկածս, որը շատ քիչ պատուաբեր չի նկատում նոր գիտութեան համար: Սակայն այժմ ես Կանոսսա չպէտք է գնամ և իմ այն ժամանակուայ խօսքերը ճշտեմ, որովհետև իմ այն խօսքերը վերաբերում էին աւելի երկրորդական հրատարակութիւնների. իսկապէս մեծ հեղինակների գրուածքներին չէին վերաբերում, որոնց միշտ անպայման յարգանքով եմ վերաբերուել. բացի այդ այն խօսքերը, վերաբերում էին սօցիոլոգիայի կենսաբանական հիմք կազմող տեսութեանը, որը այն ժամանակ իշխող էր. նա

չէր վերաբերում նոր սօցիալական գիտութիւններին, որոնք լրջօրէն են առաջ գնում, ամրապնդուելով տնտեսական վերլուծութեան հիմքի վրայ:

Աւելի ծանրակշիռ է սօցիոլոգիայի դէմ եղած մի այլ առարկութիւն:

Ասում են, որ նա չունի ճշմարտութիւնների մի շարք, որոնց վերաբերմամբ զանազան գրողներ համաձայն լինէին. ընդհակառակը, սօցիոլոգները բաժանուած են միշտ մի խումբ իրար հակառակ դպրոցների. այդ պատճառով սօցիոլոգիայում ապակեդրոնացումը հասնում է մինչև անհատները. ուստի կարելի է ասել իրաւամբ, որ այս գիտութիւնը ունի բառացի հետեւալ կլասիկական մօտոսն *quot capita tot sententiae* *): Բայց իսկապէս միայն մեղադրանք նոյն հիմքով կարելի է առաջ բերել ուրիշ շատ գիտութիւնների դէմ, որոնց ճշտութիւնն ու արժէքը անպայման ոչ ոք չի համարձակուի կասկածի ենթարկել: Քաղաքատնտեսութեան մէջ ևս գրողների կարծիքները տարբերում են. շատ անգամ իրար գլխովին հակառակ են. պահպանողականները կըռւում են սօցիալիստների դէմ, ազատ առևտրի կողմնակիցներին հակառակ են ելնում մաքսերը պաշտպանողների կողմնակիցները, միամետաղականները և երկմետաղականները տաք վէճի մէջ են: Պատժական իրաւունքում դատական դպրոցը մաքառում է դրական դպրոցի դէմ. բնական գիտութիւնների մէջ էլ պակաս վէճեր չկան: Կենսաբանութեան մէջ օրինակ Լամարկի, Դարվինի, Վայսմանի, Նէգէլի, Ռու, Կօպէ, հակառակորդներ են զանազան կողմերում և հակառակ վարդապետութիւնների հետևողներ: Դեռ աւելին: Հերձուածներ կան նաև մատեմատիկայում. ոչ Եւկլիդեսի երկրաչափութիւնը (հիմնուած է յայտնի տէօրիայի վրայ, որ եռանկիւնու

*) Որքան զուլս, այնքան կարծիք:

երեք անկիւնների գումարը հաւասար է երկու ուղիղ անկեան) հետզհետէ աճող յաջողութեամբ սպառնում է Եւկլիդեսի դարաւոր ուսմանը: Այս ներքին երկպառակութիւնները ոչ ոք չի կարող ապացոյց համարել, որ այս գիտութիւնները կենսունակ չեն. ընդհակառակը այդ երկպառակութիւնները կենսունակութեան նշաններ են, որոնք հանդէս են գալի նոր մտածողութեան մէջ. հին գիտութիւնների անկման վերջալոյսին նրանցից մնացած միութիւնը նոր հայեցակէտերը և խորհողները վերականգնում են: Օրինակ տարբեր դպրոցների չկան դրամագիտութեան (*numismatik*) մէջ, որքան ինձ ծանօթ է, նաև մրգաբանութեան մէջ: Բայց վայ եթէ գիտութիւնները քսեն լուծեան այն աշտարակների վրայ, որոնք Հնդկաստանի զանազան հարթութիւններում բարձրանում են, որոնց վրայ կախուած են դիակներ անդղների ու գիշատիչների որս դառնալու: Վայ եթէ գիտութիւնները մտածողութեան գերեզմանոցների դառնան, որոնց վրայ կախուած են դաւանանքների կմախքները և նրանց կրծում է հանդարտ կերպով փոքրաթիւ մեկնիչ-իրաւաբանների ուժասպառ քննադատութիւնը:

Ասում են, որ սօցիոլոգիան լուրջ հիմքեր չունի, որ նա մի խակ ընդհանրացումն է, վերջապէս խօսում են ծաղրելով նոր հանրագէտերի մասին, որ նրանք միայն մի մեռած ծնունդ են արտադրել:

Իւրաքանչիւր ոք տեսնում է, որ ծանր մեղադրանքներ են, բայց սորա չեն կարող և չեն համարձակուի յոյսերով լի նոր գիտութեան շէմքին կանգնել:

Նրանք, որոնք պնդում են, թէ սօցիոլոգիան չունի լուրջ հիմքեր, պատասխանում են, որ հակառակ կայունութեան և հաւասարակշռութեան օրէնքներին են կառուցուած ամենահիմնաւոր շինութիւնները. այսպէս

կայունութեան բոլոր օրէնքներին հակառակ է շինուել
ս. Պետրոսի օրելիսկը Հռոմում, որը սակայն անսա-
սան դարերի գեղարուեստն է պատկերացնում, նոյն
խակ մատեմատիկական հաշիւները անպայման անխախտ
հիմքերի վրայ չեն հաստատուում, այնպէս որ մի ֆրանսի-
ացի մատեմատիկոս ստիպուած էր ասել նրանց, ո-
րոնք կասկածում են *Allez en avant, la foi vous viendra* *): Հետեւապէս մենք պէտք է գոհ լինենք, եթէ սո-
ցիոլոգիան կարողանայ լրջութեան և պայմանաւոր ճշ-
տութեան այն աստիճանին հասնել, որին հասնելու
յաւակնութիւնը չունին անվիճելի և ճշգրիտ գիտու-
թիւնները:

Նրանք, որոնք պնդում են, թէ սոցիոլոգիան մի
խակ գիտութիւն է, պատասխանում են, որ մարդկա-
յին բոլոր մեծ արտադրութիւնները իրենց էութեան
համեմատ խակ են: Այլ կերպ էլ չէր կարող լինել, ո-
րովհետեւ նորութիւններ չեն ծագում, երբ նրանք նորի
ոխերիմ թշնամու վրայ ոյժ չեն գործ դնում, որը նը-
րանց ժխտում է և նորի համար անհնարին է դառ-
նում հասունացման համար յաջող պայմաններ գտ-
նելը: Խակ է սոցիոլոգիայի այն ձգտումը, որը ուզում
է գիտական միութիւն ստեղծել և այս կարող է միշտ
էլ այսպէս մնալ. բայց Իտալիայի միութիւնն էլ մեր
ականաւոր մարդիկ խակ էին համարում 1842 և 1852
թուականներին. բայց յաջողուեց այս բանը յաղթանա-
կով իրագործել: 1870 թուին Գերմանիայի հռչակաւոր
գիտնական Ռօշերը այն կարծիքը յայտնեց, որ դեռ
չեն հասել Գերմանիայի քաղաքական միութեան ժա-
մանակները և որ երկրի պատմական պայմանները չեն
համապատասխանի այդ բանին. և լինչ, մի քանի ամիս

յետոյ Բիսմարկը յաղթանակով նպատակին հասաւ.
խակ էր համարում 1864 թուին Ամերիկայի ստրուկ-
ների ազատութիւնը, այնուամենայնիւ ինդիւրը վճռուեց
և կատարեալ յաջողութիւն ունեցաւ: Խակ է համար-
ւում կանանց շարժումը ներկայումս, սակայն արդէն
յաջողութեամբ է պսակում այս շարժումը ամեն մի
կրթուած ազգի մէջ: Նմանապէս սոցիալիզմը, իբրեւ
կրթուած ազգի մէջ: Նմանապէս սոցիալիզմը, իբրեւ
խակ բան դատապարտում է, սակայն կուլտուրական
ազգերի օրէնսդրութեան երեք քառորդը սոցիալիստա-
կան է: Ընդհանրապէս իրաւամբ կարելի է պնդել, որ
ամեն մի գեղեցիկ և մեծ բան ժամանակից առաջ է
ծնւում և եթէ միայն այս տեսակէտից սոցիոլոգիան
համարում են խակ, մենք կարող ենք հէնց այս փաստը
իբրեւ ապացոյց նկատել և իբրեւ մի շատ յաջող նախա-
նշան նրա ապագայ մեծութեան:

Նրանք, որոնք ծաղրելով պնդում են, որ սոցիո-
լոգները միմիայն ծնունդ են արտադրել, իմ յիշողու-
թեանս մէջ վերարտադրում են մի լեզնդա, որը, ինչ-
պէս Իօհան Վիլլանի պատմում է, միջնադարում Ֆլո-
րենցիայի ժողովրդի հաւատքում կար և ըստ Լասսալի
հիւսիսային ժողովրդների մէջ դեռ վերջնականապէս չի
կորել: Լեզնդան պատմում է, որ առիւծը ստեղծ
կորիւն է ծնւում, բայց վերջինս կենդանանում է հօր
ուժգին մոնչիւնից. լաւ, թող որ սոցիոլոգներն էլ մի
ստեղծ առիւծ են ծնել, բայց նրանք այնքան գոռացել
են, նրա դիակի չորս կողմը այնքան աղմուկ են բար-
ձրացրել, որ նա անվնաս կենդանացել է, կեանքի հա-
ձրացրել, որ նա անվնաս կենդանացել է, կեանքի հա-
մար է վեր կացել, յարութիւն է առել և այժմ այստեղ
է, գեղեցիկ, ուժեղ, հպարտ, գեղնագոյն բաշը թոթո-
վում է. նա իւր վախկոտ թշնամիներին համար դարձել
է դարմանքի և երկիւղի մի առարկայ:

*) Դուք միայն առողջ գնացէք, հաւատը ինքն իրեն կգայ:

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Հոգեքանութիւնը իբրեւ հիմք սօցիօլօգիայի

Մեր օրերի սօցիօլօգիան իւր սկիզբը պարտական է այն հրաշալի հոգեկան շարժմանը, որը սկսուեց Ֆրանսիայում և որին հաւատացել էին մի խնդիր—մարդկային ցեղին նոր դրդիչներ տալ, որոնց յետոյ միւս ազգերը կարող էին պտղաբեր դարձնել և կերպարանափոխել: Յիրաւի XIX-րդ դարու սկզբում Սէն Սիմօնը իւր գլխավոր քաղաքներով և հաւատացեալ աշակերտներին ուղղուած քարոզներով նոր, միացեալ գիտութեան առաջին հիմքերն է դնում: Իսկապէս Սէն Սիմօնը Պլատոնի և Արիստոտելի նման իւր քննութիւնների համար պահում է «պօլիտիկ» բառը. բայց նա շտապում է աւելացնելու, որ պօլիտիկը ոչ թէ բացառապէս պետութիւնների կազմակերպութիւններով պիտի դրաղուի, այլ ամբողջ հասարակութեան գոյութեան պայմաններն ու զարգացման օրէնքները պէտք է հետախուզէ. այս պատճառով նրա աշխատութիւնները իսկապէս վերաբերում են սօցիօլօգիայի ամբողջ շրջանին: Սակայն Սէն Սիմօնի անկազմակերպ գրուածքներում չպէտք է փնտրել նոր գիտութեան նոյնիսկ պակասաւոր սիստեմներ, աւելի ևս մի շարք որոշուած և միմիանց հետ կապուած գիտական օրէնքներ: Չպէտք է դարմանանք, երբ այս տաքօրինակ հեղինակի գրուածքներում, որը ուղղում էր մի տեսակ պապ լինել ինդուստրիայի և հասարակութեան ղեկավարութիւնն էլ յանձնել փիլիսոփաներին և բանկիրներին, երբեմն դարմանալի հայեացքների և ցնորական որոշումների ենք հանդիպում: Բայց Սէն Սիմօնի

գրուածքներում եղած երևակայական հայեացքների ու գուարճալի ուտօպիաների մէջ գտնում ենք մի քանի յիրաւի խորը և հանճարեղ նկատողութիւններ, որոնցից յետոյ սօցիօլօգները օգուտ են քաղել: Սէն Սիմօնը չգտաւ մեծ զարգացման օրէնքի մի ծրագիր, որին ենթարկուած է մարդկային հասարակութիւնների կեանքը. միւս կողմից նա անշարժութեան հաւատի մէջ չէր քարացել, մի բան, որ հին և միջին դարերում սօցիալական երևոյթների բացատրութիւնների համար բնորոշ էր: Նա ընդունում էր, որ հասարակութիւնները շարժւում են, բայց այդ շարժումը ոչ թէ անընդհատ է, այլ ալիքանման կամ ընդհատող յանկարծակի և դժբախտ յետադարձ հարուածների պատճառով: Այս մշտքի հիման վրայ նա ընդունեց հիմնական բաժանում—օրգանական և քննադատական շրջանների: Առաջինում, ասում է նա, մարդկային գործունէութեան բոլոր արդիւնքները մի ընդհանուր տեսութեամբ դասաւորուած են, նախատեսնուած ու կարգի բերուած և սօցիալական գործունէութեան նպատակը պարզ որոշուած է. վերջինում, ընդհակառակը, ընդհանուրի իւրաքանչիւր գործը, իւրաքանչիւր միացումը լրիւ չէ և հասարակութիւնը ոչ այլ ինչ է, բայց հիթէ, բաժանուած և իրար թշնամի անհատների մի խառնուրդ: Այս միտքը արդէն հին կրօնական տիեզերաբանութիւնների (Kosmogonie) մէջ կայ. որով և փառաւոր և զարգացող ժամանակը, խորտակուելու և ոչնչանալու ժամանակից բաժանուած է: Հեշտութեամբ կարելի է նախընթացող Սէն Սիմօնի կողքին դնել սուրբ Յովհաննէսին կամ Իսրայէլի մարդարէներին, որոնք ժողովուրդների մեծութիւնն ու անկումն էին մարդարէանում, կամ Դանիէլի գրքի հեղինակին, որին այդ պատճառով Ռընանը պատմութեան փիլիսոփայութեան հիմնադիր է համարում: Բայց Սէն

Սիմօնի դադափարը Վիկօի այն տռաջ ու յետ շարժուելու տեսութեան հետ անմիջական կապ ունի, որի համաձայն մի քաղաքակրթութիւն ընկնում է, երբ մի ուրիշը նրան փոխարինում է և մի քանի դարերից յետոյ նորից վերջինիս հետևում է: Ֆրանսացի հեղինակի համաձայն մեզ ծանօթ պատմութիւնը ցոյց է տալի երկու օրգանական շրջաններ, Արևելքի հին աշխարհը և միջնադարը, որոնց հետևեցին երկու մեծ քննադատական ժամանակներ-յոյն հռովմէական և նոր աշխարհը. նա հաւատում է, որ մենք գնում ենք դէպի երրորդ օրգանական շրջանը և կրիդիսների ժամանակին կհետևի հաւասար իրաւունակութիւնը և սօցիալական հասարակչութիւնը վերջնականապէս կիրականանայ:

Կարիք չեմ դրում Սէն Սիմօնի այս կաղմութեան մէջ եղած բոլոր կամայական բաները պարզելու: Նա չափազանցութեան մէջ է ընկնում, երբ մուսիականացած և լետարգիական արևելեան ժամանակը և միջին դարը, խաւարամտութեան և կոպտութեան ժամանակը օրգանական շրջան տիրողոսով է դարդարում. մինչդեռ շատ անգամ դարևոր շրջաններ, որոնք մարդկութեան համար ամենափառաւորներն են եղել, ինչպէս օրինակ յոյն-լատինական և ներկայ աշխարհը, նկատում է քննական երևոյթների հայեցակէտով կամ իբր պաթօլօգիական անբնականութիւններ: Սէն Սիմօնի դիտողութիւնները սօցիօլօգիայի մեծ պրօբլէմի վերաբերեալ, որոնք վերաբերում են սօցիալական պատճառականութեան, աւելի չեն դիմանում քննութեան: Հանճարեղ մտածողի ծառայութիւնն է, որ նա ուշադրութիւն է հրաւիրել սօցիալական պատճառականութեան մեծ պրօբլէմ, գոյութեան և կարևորութեան վրայ, իսկ երբ նա մտածում է լուծել այս հարցը, ընկնում է տատանուող տարբերականութեան (Eklektizismus) մէջ: Նա պնդում է որի

իւրաքանչիւր սիստեմ թէ կենսունակ փրկիսոփայական և թէ տնտեսական սիստեմից այն կողմն է անցնում. այսպիսով նա սկսում է մի փրկիսոփայական երկուութեան վարդապետութիւն, որով դեռ մինչև այժմ էլ մեր ժամանակի շատ անյայտ սօցիօլօգներ ոգևորում են, մի բան, որ մտածողութեան համար կործանիչ է և միանգամայն անհամապատասխան, որով չի կարելի սօցիալական երևոյթների ամբողջութիւնը կարգաւորել: Սէն Սիմօնի գրուածքներում կան մի քանի շատ կարևոր դիտողութիւններ, ինչպէս օրինակ նրանք, որոնք վերաբերում են հասարակութեան զարգացման երեք աստիճաններին, աստուածաբանական, միտաֆիզիկ և դրական, որը յետոյ աւելի զարգացնում է Օգիւստ Կօնտը, այլ և զինուորական և ինդուստրիական հասարակութիւնները իրար հետից դնելը, որից նմանապէս Կօնտը և Սպէնսէրը օգտւում են: Վերջապէս այն բաղմաթիւ դիտողութիւնները, որոնք վերաբերում են քաղաքական երևոյթները տնտեսական գործօններից առաջ բերելու խնդրին, որը որոշ չափով մի նախերգանք է կազմում նոր, այսպէս ասած մատերիալիստական պատմահայեցողութեան դպրոցի:

Չնայելով այս նկատողութեան արժանի նշաններին, այնուամենայնիւ Սէն Սիմօնը ընդմիշտ սօցիօլօգիայի նախապատմութեանն է պատկանում, մի գիտութիւն, որը միայն յետոյ դիտութեան պատուին է հասնում մի ուրիշ ֆրանսացի հեղինակի շնորհիւ, որը թէև Սէն Սիմօնի դպրոցից էր ելել, բայց շատ խնդրներում իւր ուսուցչից անկախ էր. դա Օգիւստ Կօնտն է: Սրա ծառայութիւնն է նախ այն և այս բանի կարևորութիւնը մենք չենք ուզում չափազանցնել, որ նոր դիտութեանը անուն տուեց, որը մինչև այժմ էլ մնում է և հաւանօրէն ապագայում էլ կմնայ, հակառակ մաք-

բասէրներ (purist), որոնք օտարազգի բառերը արհամարհում են: Բայց այս Կօնտի նոր կազմուղ գիտութեան համար արած ծառայութիւններից վերջինն է միայն, որովհետև նա ջանացել է մարդկային գիտութիւնների մէջ նոր գիտութեան գիրքը որոշել և նրան ղեկավարող օրէնքները բացատրել և նրան ընդարձակ գիտական զարգացում տալ:

Որոշելու համար այն տեղը, որ սօցիօլօգիան մարդկային գիտութիւնների շարքում պիտի ունենայ Կօնտը գիտութիւնների մի դասակարգութիւն է տալիս, որը այսօր էլ շատերը ընդունում են չնայելով այն քննադատութեան, որ ամենից առաջ Հերբերտ Սպէնսէրն է կենթարկել: Կօնտի տեսութեան համաձայն իրերի մասին եղած գիտութիւնները, ինչպէս և իրեն իրենք կազմում են իրենց ընդհանրութեամբ և վերացականութեամբ աստիճանաբար նուազող և բարդութեամբ ու կօնկրէտութեամբ աճող մի շարք. առաջին տեղը այս շարքում գրաւելու են ընդհանուր և վերացական գիտութիւնները, որոնցից յետոյ հետզհետէ դալու են կօնկրէտ և այս իսկ պատճառով էլ պակաս որոշակի գիտութիւնները: Առանձին գիտութիւնները աստիճանական կարգը ըստ Կօնտի այս է. 1. Մատեմատիկա, 2. Աստղագիտութիւն, 3. Ֆիզիկա, 4. Քիմիա, 5. Կենսաբանութիւն (Biologie), 6. Սօցիօլօգիա. ըստ այսմ սրանցից իւրաքանչիւրը իւր նախորդ գիտութիւնից պակաս ընդհանուր և վերացական է ու աւելի բարդ ու թանձրացեալ երևոյթներով է զբաղւում: Որովհետև թանձրացեալ գիտութիւնները չի կարելի ուսումնասիրել, առանց ծանօթ լինելու վերացական գիտութիւնների զրած հիմնական օրէնքների հետ, ուստի առանձին գիտութիւնների այս աստիճանական կարգը է միաժամանակ նաև նրանց ժամանակագրա-

կան կարգը: Այս նշանակում է առաջ ուսումնասիրւում է այն վերացական գիտութիւնը, որը ուրիշի հետ առնչութիւն չունի. այդ մատեմատիկան է. աստղագիտութիւնը, որը իւր հիմնական օրէնքներից մի քանիսը մատեմատիկայից է վերցրել, սրանից յետոյ կարելի է ուսումնասիրել, աւելի հիմունքներով կարելի է ուսումնասիրել ֆիզիկան մատեմատիկայից և աստղագիտութիւնից յետոյ և այն, այսպէս մինչև սօցիօլօգիան. որովհետև սա գիտութիւնների մէջ ամենաթանձրացեալն է, չի կարող իրեն նիւթ կազմող այնպիսի երևոյթներ ուսումնասիրել, որոնք միւս գիտութիւնների մէջ ճշմարտութիւններ չեն. ուստի սօցիօլօգիան հանդէս է գալի այն ժամանակ, երբ գիտական մտքի մնացած արտայայտութիւններն արդէն դրուել և զարգացել են: Այս պատճառով սօցիօլօգիան գիտութիւնների մէջ ամենավերջին ծնունդն է. այսպիսով կարելի է բացատրել թէ նրա մարդկութեան մտածողութեան երկնակամարի վրայ ամենից վերջը երևալու պատճառը և թէ ինչո՞ւ սօցիօլօգիան ճշմարտութիւնը հետախուզելու մէջ փոքր և դանդաղ յառաջադիմութիւն է արել:

Կօնտի գիտութիւնների դասակարգութիւնը մի մեծ թերի ունի, որովհետև չի բովանդակում իւր մէջ հոգեբանութիւնը, որին Կօնտը առ ժամանակ անիրաւացի դնում է կենսաբանական գիտութիւնների շարքում իրեն վերապահելով նրան գանգաբանութեան (Phrenologie) մի գլուխը դարձնել. յիրաւի մի ենթադրական գիտութիւն, որը սակայն այն ժամանակ Գալլը, մեր հանճարեղ Լամբրօզիի նախորդը, մեծ յաջողութեամբ ուսուցանում էր: Բացի այս այդ դասակարգութիւնը չունի իւր մէջ քաղաքատնտեսութիւնը և մնացած սօցիալական գիտութիւնները, որոնց վերաբերմամբ Կօնտը, ա-

նիրաւացի կերպով, կարծում էր, որ նրանք իւր յայտարարած նոր, համադրական գիտութեան հետ կձուլուեն: Չնայելով այս և այլ հեշտ գտնուող թերիներին, Կօնտի դասաւորութիւնը իւր էութեամբ արամաբանա-կան է և նպատակայարմար, ուստի և կարելի է ընդունել: Սակայն երբ ընդունում ենք, չպէտք է մոռա-դունել: Սակայն երբ ընդունում ենք, չպէտք է մոռա-նանք, որ նա չի բացասում, ընդհակառակը ընդունում է, որ թանձրացեալ և նրան յարակից գիտութիւնները իրենց կողմից արժէքաւոր օգնութիւններ կարող են տալ վերացական և այս իսկ պատճառով նախնական գիտութիւններին: Երբ պնդում են, օրինակ, որ սօցիո-լօգիան իւր հիմնական օրէնքները միւս գիտութիւննե-րին է պարտական և այդ պատճառով նրանցից յետոյ պէտք է առաջ գալ, այդ չի նշանակում, որ առաջ ե-ղած գիտութիւնները չեն կարող իրենց համար նոր լոյս ստանալ այն հետեանքներից, որոնց հասնում է սօցիո-լօգիան և որ ուրեմն չեն կարող այս հետեանքներից նոր ապացոյցներ ձեռք բերել շատ օրէնքներ աւելի ճշտե-լու: Հաստատ է, որ կենսաբանութիւնը, հոգեբանութիւ-նը և այլ ընդհանուր գիտութիւններ սօցիոլօգիայի ար-դիւնքներից օգտուելով առաջ են դնացել: Առանձին գիտութիւնների աստիճանաւորութիւնը և ժամանակա-գրական յաջորդականութիւնը ընդհանրապէս չի բա-ցասում նրանց փոխադարձ կապը և օգնութիւնը:

Կօնտը այս ձևով որոշելով սօցիոլօգիայի արժանի տեղը գիտութիւնների կարգում, զբաղւում է նոր գի-տութեան նիւթով, բաց անելու մարդկային հասարա-կութեան օրէնքները: Այս տեսակէտից նա բաժանում է ըստ էութեան երկու տարբեր հետախուզութեան շրջաններ՝ սօցիալական շտատիկ և դիւնամիկ. (կայուն և շարժուն դրութիւններ). առաջինը վեր է լուծում հասարակութեան կայուն դրութիւնը, վերջինը նրա

շարժուն դրութիւնը, որը Կօնտը Սէն Սիմօնից տար-բեր է ընդունում, իբրև յարաշարժ և աճող: Այս բա-ժանման դէմ եղած առարկութիւնները իսկապէս հիմ-նաւոր չեն: Ասում են, որ երբ այս տեսութիւնը շտա-տիկի և դիւնամիկի արդիւնքները գործ է դնում սօ-ցիալական մարմնի վերաբերմամբ, նմանում է այն հին տեսութեան, որը ընդունում էր հասարակութիւնը իբ-րև մի մեխանիզմ և որ այդ տեսութիւնը չի համապա-տասխանում նորագոյն հայեացքին. վերջինիս համա-ձայն հասարակութիւնը մի օրգանիզմ է, որովհետև օր-գանիզմը, որքան նա ապրում է, իւր բնութեան հա-մաձայն միշտ շարժւում է և միայն մահն է նրա շար-ժուելուն վերջ դնում: Եթէ մի բոպէ ընդունենք էլ այս բոլորը, այնուամենայնիւ ճիշտ է, որ շատ սօցիալա-կան երևոյթներ չենք կարող վերլուծել, եթէ չընդու-նենք, որ հասարակութիւնը հաւասարակշռութեան մէջ է և այս պատճառով Կօնտի բաժանումը առնուազն իբրև հետախուզութեան մեթոդ օգտակար կարող է լինել:

Կօնտի սօցիալական շտատիկի բացատրութիւնը ոչ ընդարձակ է և ոչ էլ խորը: Նա բաւականանում է նրանով միայն, որ մատնանիշ է անում այն հանգա-մանքը թէ մարդկային հասարակութեան սկիզբը այն օգուտը չէ, որ հասարակական դառնալը անհատին տա-լիս է. որովհետև այս օգուտը մի աւելի ուշ ժամանա-կի դրութիւն է քան հասարակական դառնալը և այս պատճառով չի կարող նրա պատճառը լինել. այս բանը արդիւնք է մարդուն ի ծնէ տրուած հոգեբանական պայմանների, որոնք և նրան դրդում են հասարակա-կան միակեցութեան: Այս հոգեբանական պայմանները, որոնց առանձնապէս ուսումնասիրում է Կօնտը, բաժա-նում է երկու մասի՝ մարդու հակումը դէպի իւրանման-

ների հասարակութիւնը և բարեկեցութիւնը: Միւս կողմից մարդն ունի մի քանի եսական հակումներ, որոնք նրան մղում են հասարակական դրութիւնից հեռանալ: Այս պատճառով մի հակադրութիւն, մի կռիւ կայ այս երկուսի մէջ, ալտրուիստական բնազդների, որոնք մարդուն հակում են հասարակութեան մէջ ապրելու և եսական բնազդների, որոնք նրան մղում են հասարակութիւնից դուրս գալու: Հասարակութեան պահպանութիւնը, ինչպէս և նրա զարգացումը կախուած է անմիջապէս ալտրուիստական բնազդի, զուտ և բացարձակ եսականութեան վրայ ունեցած գերիշխանութիւնից:

Հասարակականացման երկու գլխաւոր ձևերն, որոնք յաղթութիւն են տալի ալտրուիստական բնազդներին եսական բնազդների վրայ, են՝ ընտանիքը և աշխատանքի միութիւնը կամ ինդուստրիական միախմբութիւնը: Ըստ Կոնտի ընտանիքն է սոցիալական բրձիճը և ոչ անհատը. սակայն ընտանիքի ուսումնասիրութիւնը կենսաբանական հետախուզողների շրջանն է մտնում և այդ պատճառով իսկապէս սոցիոլոգիայի մասը չի կազմում, որի ուսումնասիրութեան անմիջապէս առարկան հասարակութիւնն է: Հասարակութիւնը և միայն հասարակութիւնն է արժանաւոր ու չափած, ձևած առարկան նոր գիտութեան. միայն հասարակութեան շուրջն են պտտելու սոցիոլոգների հետախուզութիւնները. այդպիսին պէտք է սկզբից և եթ իմանայ և հետո մնայ այն ուսումնասիրութիւններից, որոնք վերաբերում են ընտանիքին կամ նոյն իսկ մարդկային անհատին: Կոնտը այն տեղն է հասնում, որ պնդում է, թէ անհատը գոյութիւն չունի, որ նա միայն մի վերացական բան է և իսկապէս կայ միայն հասարակութիւնը: Աւելորդ է ասել, որ սա մի անմտութիւն է, որովհետև անհատը մի էութիւն է, որի գոյութիւնը

հւրաքանչիւրը կարող է հաստատել, որին մենք պատահում ենք փողոցում, բարեւում ենք, որի ձեռքը կաշող ենք սեղմել, մինչդեռ հասարակութիւնը, ընդհակառակը, մի մետաֆիզիկ ստեղծագործութիւն է, որին ոչ ոք չի պատահել կամ ձեռք չի տուել: Հասարակութեան շրջագծերը այնքան անորոշ են և խառն, որ զանազան բացատրութիւնների կարող են ենթարկուել: Մի քանիսի համար հասարակութիւնը ազգ է, միւսների համար միկնոյն ցեղի անհատների համախմբութիւնը, ուրիշների համար միկնոյն աշխարհամասի բնակիչները, վերջապէս կան այնպիսիները, որոնց համար հասարակութիւնը ընդհանուր մարդկային ցեղն է: Այս պատճառով հարկաւոր է սոցիոլոգների ոյժերը և խիստ սրամտութիւնը ճիշտ որոշելու մի ըստինքեան անորոշ գաղափարի սահմանները: Եթէ յիշաւի ըստ Կոնտի անհատը միայն մի վերացական բան է, ինչպէս կարող է հասարակութիւնը մի իրական բան լինել, որը ոչ այլ ինչ է, բայց եթէ անհատների գումար, ինչպէս կարող են մի քանի վերացական բաներ չմիանալ և տալ մի իրական բան:

Այնուհետև Կոնտը իւր ուսումնասիրութեան հետեւալ մասում խօսում է աշխատանքը միացնելու մասին, լուսաբանում է նրա աչքի ընկնող օգուտները, միաժամանակ ընդունում է նաև արգահատանքի արժանի ֆլասները, որոնցից ամենածանրը այն է, որ մարդ անդադար միայն մի աշխատանքով զբաղուելով՝ բթանում է. աշխատանք, որը շատ անգամ մեքենայական է և կիսատ, ինչպէս օրինակ անդադար ասեղի ծայրեր արելը. դրական փիլիսոփան այս դէպքում իրաւացի է: Միութիւնը իսկապէս մարդկային մտքի ամենապտղաբեր գիւտերից մէկն է, հէնց միայն իբրև մտածող էութեան ազնիւ բնութագիր, որը միայն նրան այն տեղն է

բերում, որ ուրիշների հետ միանայ: Յիմարները, օրինակ, երբեք չեն միանում, այս պատճառով, ինչպես մենք փորձից գիտենք, խելագարատներում համեմատաբար փոքրաթիվ հիւանդապահներ կարողանում են կարգ պահել: Բայց միութիւնը և այն էլ աշխատանքի միութիւնը միաժամանակ հոգեկան ոյժերի սարսափելի ճնշող միջոց է, որովհետև այս դէպքում ստիպում է մարդկանց կրկնող և միապաղաղ դբադմունքի և սպանում է նրանց մէջ ամեն մի հոգեկան ընդունակութիւն, սակայն Կօնտը ընկնում է ծաղրական դրութեան մէջ, երբ այս վնասակար ազդեցութեան առաջը առնելու համար առաջարկում է մի հոգեկան ոյժ ստեղծել, որ այսպէս հատուածական դարձած մարդկանց համադրական և ընդհանուր հասկացողութիւններ սովորեցնէ:

Կօնտի սիստեմի մէջ աւելի նշանաւոր տեղ է բռնում նրա սօցիալական դիւնամիկի (շարժման) տեսութիւնը կամ մարդկային հասարակութեան դարգացման օրէնքների ուսումնասիրութիւնը: Կօնտը նախ ցոյց է տալի այս զարգացման երկրորդական զրդիչները, որոնց նա բաժանում է երեքի. տհաճութիւն, մահ և ժողովրդի արտգ ածնողութիւն: Տհաճութիւնը բարեկեցիկ դասակարգի համար նոյնն է, ինչոր սեփականազուրկ դասակարգի համար սովոր—աշխատանքի զրդիչ է: Անշուշտ տճահութիւնը ու սովոր զրդում են շատ մարդկանց մեծ գործեր կատարելու, ուրիշներին սակայն յանցանքներ գործելու. եթէ մենք այդ զրդիչներին ենք պարտական Բայրոնի հրաշալի ոտանաւորները, նոյն ձևով նրանցից են առաջ եկել Ներոնի և Լուդովիկ XV-րդի գարշելիութիւնները: Այնուամենայնիւ չնայելով այս բոլորին, ճշմարիտ է այն, որ տհաճութիւնը գիւտերի և արդիւնաւոր շարժումների համար մի ուժեղ գործակից է,

որ եթէ աշխարհում չլինէր տհաճութիւնը, շատ գիւտեր մինչև վերջը չէին տարուի և շատ նշանաւոր գործեր կիսատ կմնային:—Յառաջադիմութեան երկրորդ զրդիչն է մահը: Եթէ մարդ անմահ լինէր, յառաջադիմութիւն չէր կարող լինել, որովհետև էութիւնների յաւիտենական շրջառութիւնը կպակսէր այստեղ, միմեանց թըշնամի և տարբեր մարդկանց հոսանքների շարժուն փոփոխութիւնը չէր լինի, շարժումներ, որոնք անխոնջ մղում են կեանքի հոսանքի մէջ: Այս պատճառով Լապուտայի տէրութեան մէջ, որ նկարագրել է երգիծաբան Սվիֆտը, չէր կարող յառաջադիմութիւն լինել, որի բնակիչները անմահ էին կամ նրանով էին վերջանում, որ իրենց յաւիտենական գոյութիւնը ճնշող միակերպ ձանձրոյթից մեռնում էին: Մահը գրգռում է հնի պահպանողական ոգուն նորութիւնների ձգտող երիտասարդի ոգու հետ ընդհարուել և այս անվերջ, ուժեղ կուռից ծագում է աշխատանքի պահանջը, անխոնջ մաքառումը և մարդկութեան արդիւնաւոր յառաջադիմութիւնը զարգացման ճանապարհով: Կօնտի այս նկատողութիւնները ուժեղ պաշտպանութիւն են գտնում Վայսմանի տեսութիւններում. վերջինս ուշադրութիւն է հրաւիրում այն բանի վրայ, որ մահը բնութիւնից անպայման յօգուտ սեռի է տրուած և որ միայն մահուանն ենք պարտական ընտրութեան օրէնքի լինելը. սրա համաձայն է, որ սեռը միշտ իւր յառաջադիմութիւնը կրկնում է: Միւս կողմից ակներև է, որ մի անփոյթ կեանք ամեն մի սօցիալական յառաջադիմութեան կմնասէր, նրանով, որ մեծ յառաջադրութիւնների իրականացումը, նշանաւոր, յարատև գործերի լրացումը անկարելի կդառնար: Այստեղից պարզ է, որ մարդկային կեանքի տևողութիւնը ճիշտ այնքան է, որքան այդ պահանջում է բնական յառաջադիմութեան

ապահովութիւնը, այս ձևով ժխտում է անմահութիւնը, որ ամեն մի զարգացման խոչընդոտ կլինէր, ինչպէս և անփոյթ, հարեանցի լինելը, որը յառաջադիմութեան հէնց սկիզբը անկարելի կդարձնէր:—Վերջապէս նաև ժողովրդի արագ ամեցողութիւնը յառաջադիմութեան համար շատ կարեւոր է, որովհետև սա մարդկային սերունդների ընթացքն է արագացնում. պատճառն այն է, որ ծնողների և որդոց տարիների տարբերութիւնը քչանում է: որդիները քիչ են ենթարկւում հայրական հեղինակաւորութեան և ազատւում են նրանց ղեկավարութիւնից, վերջապէս անհատական ձգտումների պայքարը սրւում է և առաջ է գալիս սոցիալական շարժում: Այս պատճառով, ուր որ սերունդները իրար արագ են յաջորդում, այնտեղ էլ ամուսնութիւնները վաղօրօք են լինում, զարգացումն էլ աւելի արագանում է: Այս բանը մենք ամեն օր կարող ենք տեսնել նոր երկրներում, ինչպէս հիւսիսային Ամերիկան. նոյն իսկ հին ազգերի բանուոր դասակարգի մէջ, որը շուտ ամուսնանալով, մի առանձնայատուկ նշան այս դասակարգի, աւելի կենդանութիւն է ցոյց տալի վիճաբանութիւնների մէջ և հոգեկան շարժունութիւն, քան քաղաքացիների դասակարգը: Կասկած չկայ, որ ժողովրդի ստորին խաւերի արմատական հակումները, այս հոգեկան ազդեցութիւններից են առաջ գալի, ազդեցութիւններ, որոնք սերունդների արագ յաջորդականութեան արդիւնքներն են:

Երբ վերջապէս Կօնտը ուղղւում է հետախուզել այն գլխաւոր պատճառը, որով բնորոշւում է սոցիալական զարգացումը, հասնում է այն եզրակացութեան, որ հասարակութեան զարգացումը խիստ կերպով նախատեսւում է մտքի զարգացումով կամ ուրիշ խօսքով՝ սոցիալական յառաջադիմութիւնը հոգեկան յառաջադիմու-

թեան արդիւնք է: Տուէք ինձ մի ժողովրդի հոգեկան դրութիւնը, ասում է Կօնտը, և ես ձեզ տեղեկութիւններ կտամ նրա գոյութեան պայմանների և նրա սոցիալական դրութեան մասին: Մարդկային բանակաւորութիւնը իւր բազմադարեան պատմութեան ընթացքում երեք շրջան է ունեցել. սկսուել է աստուածաբանական շրջանով, անցել է մետաֆիզիկ շրջանին և այսօր մըտնում է դրական շրջանը, որը ապագային է պատկանում: Հոգեկան այս երեք շրջանին համապատասխանում են նոյնքան սոցիալական զարգացման շրջաններ—զինուորական, օրինական և ինդուստրիական շրջաններ: Կօնտի պատմութեան փիլիսոփայութեան միակ խնդիրն է այս եղած համաձայնութիւնը ապացուցանել: Ինչ վերաբերւում է առաջին կամ աստուածաբանական շրջանի բացատրութեանը, բաւական ծիծաղելի է: Մեր փիլիսոփան նկատել է, որ Ֆէտիշիզմը գեղարուեստի համար առաջին դրդիչն է եղել, ձեռքի աշխատանքի առաջին գործիքներն են առաջ եկել, վաճառականութեան զարգացման է նպաստել: Երբ պրիմիտիվ կրօնը առաջ է բերում տեղական աստուածութիւններ, կապում է մարդկանց երկրի հետ և այսպիսով առիթ է դառնում գիւղացիական կեանք առաջ գալուն: Նրանից յետոյ սկսւող բազմաստուածութիւնը ծնում է ժողովուրդների մէջ պատերազմներ և թշնամութիւններ. այսպիսով մտքի աստուածաբանական ուղղութեան հետ կապւում է մարդկային հասարակութեան զինուորական սխալմամբ ծագումը: Կուրիները հնարաւոր են դարձնում թշնամիներին գերի վերցնելը և այստեղից էլ առաջ է գալի սարկութիւնը: Այսպիսով հին աշխարհի հիմնական դրութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ բազմաստուածութեան արդիւնք: Բազմաստուածութեան աստիճանաբար միաստուածութեան վերածուելը առաջ է բերում հակադիր ե-

րևոյթներ—պատերազմների սակաւաթիւ լինելը, ստոր-
կութիւնից ճորտութեան անցնելը և վերջապէս աշխա-
տանքի ազատութիւնը: Ուրեմն ֆէտիշիզմը սպանում
է գերիներին, բազմաստուածութիւնը պահում է նրանց,
իսկ միաստուածութիւնը ազատում է նրանց. ամեն մի
դէպքում էլ հասարակութեան հիմնական դրութիւնը
նրա մէջ իշխող հոգեկան ուղղութեան անհրաժեշտ ար-
դիւնքն է:

Կօնտի սխեման հէնց առաջին մասում ծանր դը-
ժուարութիւնների է հանդիպում և համարեա անյադ-
թելի դժուարութիւնների: Հէնց միայն այսքանը բա-
ւական է ասել, որ Կօնտի տեսութիւնը, թէ ստրկու-
թիւնը բազմաստուածութեան արդիւնք է, անկարող է
բացատրել այն գաղութային ստրկութիւնը, որ իրենց
էութեամբ միաստուածեան երկրները ու ժողովրդները
գործադրել են: Փիլիսոփայի աւելի կամ պակաս ճար-
տասանութիւնները անօժալիայի, արիւնախառնութեան,
գաղութներում հին հեթանոսական ստրկութիւնը վե-
րականգնելու զգուելիութեան դէմ անկարող են գաղտ-
նիքը բացատրելու:

Այս դժուարութիւնը շատ թեթեւ է մեր հեղինա-
կի համար համեմատած այն դժուարութիւնների հետ,
որոնց նա պատահում է այս շրջանին յաջորդող շրջա-
նի ուսումնասիրութեան ժամանակ: Իսկապէս հազիւ
հասնում է մետաֆիզիկ շրջանին, որը սկսւում է 14-րդ
դարից, Կօնտը հասկանում է, որ իւր տեսութիւնը
խախտւում է և նա ստիպուած է ընդունելու, որ այս
շրջանի սկզբից այլ ևս ոչ թէ հոգեկան զարգացումով է ո-
րոշում սօցիալական զարգացումը, այլ ընդհակառակը, ին-
դուստրիայի զարգացումովն են որոշւում էտիկական,
գիտական և գինուորական արդիւնքները և ընդհանրա-
պէս հասարակութեան դրութիւնն ու զարգացումը:

Կօնտը շտապում է կցել, որ հոգեկան տարրի ամենա-
զօրութիւնը մարդկային ոյժի վրայ նորից կկենդանա-
նայ և այլ ևս չի անյայտանայ ապագայում, երբ մտքի
մետաֆիզիկ ուղղութիւնը բոլորովին դուրս կմղուի
մի իսկական դրական հասկացողութեան համար տեղ
բացանելու. սակայն մեր ժամանակի վերաբերմամբ
մեր փիլիսոփայն տհաճութեամբ պէտք է ընդունի, որ
իւր տեսութիւնը գլխի վրայ է կանգնեցրած, որ ոչ
թէ բանականութիւնը, այլ ինդուստրիան է որոշում
հասարակութեան դրութիւնն ու օրէնքները. ուրիշ խօս-
քով, տնտեսական յարաբերութիւններն են առաջ բե-
րում մարդկութեան սօցիալական և հոգեկան կազմա-
կերպութիւնը: Այս ձևով Կօնտը, որը աստուածաբանա-
կան շրջանը ուսումնասիրելու դէպքում հանդիսանում
է հիմնադիր բանականութիւնը սօցիօլօգիայի հիմք
ընդունող ուղղութեան, երկրորդ, յաջորդ մասում մի
ձեղք է բաց անում իւր կառուցուածքում, որը կարող
էր աւելի ընդլայնել տնտեսութիւնը սօցիօլօգիայի հիմք
ընդունող աւելի ճիշտ դպրոցը, որ և յիրաւի անում է:

Իւր հիմնական տեսութեամբ ոգևորուած, որ սո-
ցիալական զարգացումը հոգեկան զարգացման արդիւնք
է, որից յիշուած ուժգին հարուածը նրան չի հեռացնում,
Կօնտը մարգարէանում է մի շրջան, երբ գիտութիւնը
նորածին ժողովրդների վրայ պէտք է իշխէ իբրեւ սու-
վէրէն ոյժ: Այս ապագայ հասարակութիւնը պէտք է
կառավարուի նախ մի հոգեկան ոյժով, որը կազմուելու
է դրական փիլիսոփայների խմբակից, որոնք անկարող
են հարստանալ և որոնք պարտաւորուած են լինելու
իրենց ամբողջ ժամանակը նուիրել նիւթի և հոգու ընդ-
հանուր օրէնքների ուսումնասիրութեան և երկրորդ մի
աշխարհիկ ոյժով, որը կազմուելու է կապիտալիստների,
մասնաւոր բանկիրների խմբակից, որոնք նրանց գը-

տած օրէնքները արտադրութեան վրայ պէտք է գործադրեն:

Սակայն ես հեռու կմնամ Կօնտի այս հետախուզութիւնների մէջ աւելի առաջ գնալուց, որտեղ նա դրական քննութեան հիմքերը մի կողմն է թողնում, ուսուսիայի օգային հոսանքներում ազատ շրջելու համար: Յայտնի է, որ Կօնտի մտածած սօցիալական բարենորոգութիւնների ծրագրները հէնց նոյն իսկ նրա ընտանեկան կեանքի մէջ եղբերգութիւն եղան ե նրա հոգու պարզութիւնը թուլացրին և ոչ մի արժէք չունին, բայց միայն օժտուած հոգու քայքայման վրայ կանգնեցրած ողբի արժանի յուշարձանի: Իւր կուրսի առաջին հատորներում, որոնց նա գրել է այն ժամանակ, երբ նա ապրում էր մի կրքոտ ու կամակոր կնոջ հետ, նա ցանկանում է կնոջը դատապարտած տեսնել յաւիտեանս անչափահաս մարդու, հօր և եղբոր խնամակալութեանը: Ընդհակառակը, երբ նա ընտանեկան այս դառը լուծը օրինական ամուսնալուծութեամբ թեթեւացնում է և գեղեցիկ Կլօտիլդ դ'Օօի հետ սկսում է սիրալիր յարաբերութիւններ և երբ այս դրութիւնը կնոջ վաղաժամ մահովը մի դառն վախճանի է փոխւում, Կօնտը ասկէտի նման աստուածացնում է նրա յիշատակը. այս դէպքում նա չի քաշում կանանց իբրև աստուածութիւններ նկատել, որոնց իւրաքանչիւր լաւ պօղիտիվիստ (դրականեան) ջերմ յարգանքներ պէտք է մատուցանէ: Նա յայտարարում է նոր կրօն, որ ամենաբարձր էութիւնը (մեծ էութիւնը) հոռմանիզմն է, Կլօտիլդէն սուրբ կոյսն է, երկիրը մեծ ֆեախը, իսկ Կօնտը աւագ երէցն է. նա յայտարարում է մի կրօն, որը ընդունում իբրև աղօթք թանգազին և ընտրուած անձնաւորութիւններին յիշելը ու պատուելը, որը ունի մի դրական Հայր-մեր, Ave (Աստուա-

ծածնի աղօթք) և տարեկան 84 տօն: Իւր կեանքում սիրած երեք կանանցից—իւր սիրեցեալ Կլօտիլդան, իւր մայր Ռօզալիան և իւր աղախին Սօֆիան—կազմում է մի երրորդութիւն: Այսքանը բաւական է արդէն: Կաթոլիկ օրացոյցի տեղ ուզում է դնել մի դրական փիլիսոփայութեան օրացոյց, որի մէջ իւրաքանչիւր օր մի մեծ մտածողի, կամ գիտութեան մարդու կամ մարդկութեան մեծ բարերարներից մէկի անունով է կոչուելու. կայ մի երկրորդ խումբ մեծ մարդկանցից ցածրների, որոնք լրացնելու են նախանշ տարիները: Աւելի ինչ էք ուզում: Կօնտը ուզում է վերջապէս դրական փիլիսոփայութեան խաչանշանը մտցնել, որը պիտի կազմուի սիրոյ, կարգի և յառաջադիմութեան օրգաններին իրար ետևից ձեռքով խփելուց...

Բայց մեր ուշադրութիւնը դարձնենք այս ցաւակցութեան արժանի սխալմունքներից: Կօնտի թէզը կամ նրա սիստէմը—սօցիալական զարգացման կախումը բանականութեան զարգացումից—շատ կրթուած մտածողներ ընդունել են և առանձին առանձին աւելի զարգացրել: Սրանցից առաջինն է Ագօլֆ Քէտլէյը, որը իւր «Սօցիալական ֆիզիկա»-ի մէջ գրում է. «Գիտութիւնից դուրս իսկական յառաջադիմող բան չկայ. մարդու այն բոլոր ընդունակութիւնները, որոնք հիմնուած չեն գիտութեան վրայ, իրենց էութեամբ կանգուն են և նրանց օրէնքները անշարժ են. մնացածները զարգանում են կախումն ունենալով գիտութիւնից: Այս պատճառով գիտութիւնը պէտք է չափ ծառայի մարդկութեան զարգացման համար»: Նոյն միտքը կրկնում է Բօկլը, որը աշխատում է մի շատ գեղեցիկ ապացոյցով հիմնաւորել: Նա նկատում է, որ սօցիալական զարգացման համար կարող են միայն երկու գործօններ լինել. կամ բանականութիւնը կամ բարոյակա-

նութիւնը. սակայն բարոյականութիւնը կանգնած է կամ թէ մի շրջանից մինչև միւսը չի փոխուում և նա ցոյց է տալի տարեցտարի կատարուած յանցանքների անփոփոխ մի թիւ. մի կանգուն, մշտական տարր երբէք չի կարող իւր էութեամբ փոփոխուող հետեանքի, ինչպիսին մարդկութիւնն է, պատճառ լինել. ուստի վերջինս կարող է միայն մի պատճառ ունենալ—բանական տարրը: Այս գաղափարը ելակէտ ունենալով Բօկլը նկարագրում է արեւմուտքի քաղաքակրթութիւնը իբրև արդիւնք արեւմուտքի մտքի ու գիտութեան իւր զարմանալի Վթաղաքակրթութեան պատմութիւնը Անգլիայում գրքի մէջ, որը դժբաղդաբար կիսատ մնաց նրա մահուան պատճառով. հեռաւոր Ասորիքում կատարած ճանապարհորդութեան ժամանակ ջերմից մեռնում է: Նմանապէս Էդգարդ Քինէ, Ֆիւստէլ դ'Կուլանժ, Մաքս Միլլէր որոշ չափով կարող են Կօնտի աշակերտներ համարուել, որովհետև սոքա քաղաքակրթութեան պատմութիւնը կապում են միստիկական և կրօնական մտքի պատմութեան հետ:

Նրա հաւատարիմ աշակերտների գրուածքներում իրենց ուսուցչի տեսութեան կրկնութիւնն ու վերամըշակութիւնը փնտռելուց առաջ ծագում է մի հարց, որի լուծումը անհրաժեշտ է երևում. արդեօք Կօնտի վարդապետութիւնը համաձայն է իսկապէս իրականութեան հետ. արդեօք ժամանակակից գիտական սօցիոլոգիան ընդունում է այն թէ ոչ:

Սովորական դիտողութիւնն անգամ բաւական է ցոյց տալու համար, որ Կօնտի հիմնական տեսութիւնը, շատ հեռու լինելով մի մտքի աշխատանքի արդիւնք լինելուց, յարում է մի երկար շարք առաջ եղած և ժամանակակից մտածողների: Իսկապէս Կօնվէնտի անդամ Մարկիզ Կօնդօրսէն իւր՝ մարդկային հոգու յառաջադի-

մութեան մասին արած դիտողութիւններում պնդում է, որ սօցիալական զարգացումը բանական էութեան զարգացման արդիւնքն է. նոյն թէզը պահպանել է նաև Տիւրգօն և ինչպէս յիշեցինք Սէն Սիմօնն էլ հաստատել է: Մինչ այս Հոննոսի միւս ակիին Հեգէլը նոյն թէզը աւելի քիչ քողարկուած ձևով էր արտայայտել. նա բացատրում էր պատմութիւնը ինչպէս մի աստիճանական զարգացող յայտնութիւն իդէալի: Նոյն մտքի միաժամանակ յայտնելը այսպէս իրարից տարբեր և հեռու հեղինակների կողմից ըստ ինքեան բաւական է հասկանալի դարձնելու համար, որ մի այսպիսի միտք սունկի նման չի բուսնում, կամ ինքն իրեն ծնում, այլ նա մղող սօցիալական պայմանների անհրաժեշտ հոգեկան արդիւնքն էր: Իսկապէս, հասարակութեան պայմանները երբէք այնքան բարեյաջող չեն եղել մի այսպիսի տեսութիւն առաջ բերելու համար: Այս այն ժամանակներն էին, երբ միայնակ մտածողները խորը և վճռական յեղաշրջումներ էին մտցնում իրերի աշխարհի մէջ: Փրանկլինը զսպում էր կայծակին, Ուատտը գտաւ շոգեմեքենան, որը ինդուստրիայի մէջ յեղափոխութիւն մտցրեց, Ադամ Սմիտը ազատ առևտուրի տեսութիւնը տուեց, որը փշրեց մաքսերի գծած սահմանները, Ռուսսօն իւր՝ հասարակութեան պայմանաւորման տեսութեամբ խախտեց քաղաքագիտութիւնը, գահազուրկ արաւ տոհմեր. Կանտը աստուածութիւնը հեռացրեց խելքի աշխարհի թագաւորութիւնից և հաւատի գլխաւոր հիմքը խախտեց. ժամանակի գիտնականները հաւատում էին, որ երկրի դէմքը կարող են փոխել կամ կարող են ցոյց տալ վերացական տրամաբանութեան անփոփոխ օրէնքների ճանապարհը: Այսպիսի նախդրեալների մէջ թր տեսութիւնը աւելի բնական էր և ըստ ինքեան հասկանալի, եթէ ոչ այն, որը ասում է թէ իդէան

է որոշում սօցիալական շարժման ընթացքը և նախորոշում է, թէ գիտութիւնն է որոշում մարդկութեան զարգացումը և իւր բարձր վճռով իշխում է մարդկութեան վիճակի վրայ:

Որքան հեշտ է ընդունել Կօնտի փիլիսոփայութեան առաջ գալը իբրև հեղինակի պարած ժամանակի անհրաժեշտ արտոգոյումն, քանի որ այդ տեսութիւնը իւր պարզ գոյութեան հիմքը և անմիջական դրդիչը ժամանակի պայմանների մէջ է գտել, ոչ պակաս ակնհերև է, որ մարդկութեան զարգացմանը այդպէս վերաբերուող մի ընդհանուր տեսութիւն գուրկ է հիմքից և ճշմարտութիւնից: Մենք արդէն տեսանք, որ Կօնտը ինքը թէև տհաճութեամբ քննադատել է և ընդունել, որ այս գաղափարը չի կիրառուում այն շրջանում, որը սկսւում է 14-րդ դարից և շարունակւում է մինչև մեր օրերը, երբ ոչ թէ իդէան, այլ ինդուստրիան է որոշում սօցիալական զարգացման ընթացքը: Ի՞նչ կարելի է ասել մի պատմութեան փիլիսոփայութեան համար, որը անկարող է զգում իրեն ոչ պակաս քան 6 դար բացատրել և այն էլ մարդկութեան պատմութեան մէջ ամենից հետախուզուած և զարգացած շրջանը: Մի կողմը թողնելով այս, Կօնտի սխալն այն է, որ գաղափարները, մարդկային բանականութիւնը ընդունում է իբրև մի սկզբնական, անստեղծ բան, որը իւր սեփական ուժով և իմմանէնս (իրենից բխող) օրէնքներով է զարգանում: Այս բոլորը բացարձակ անհիմն է: Մարդկային գաղափարը շատ հեռու է սկզբնական, անստեղծ և անկախ կերպով իրերի վրայ ներգործող ոյժ լինելուց, առելի շուտ նա անհրաժեշտ արդիւնք է և պատահական արտացոյցումն այն իրականութեան, որտեղ նա սնւում է, այն շրջանի, ուր նա շարժւում է: Նորագոյն, իսկական, զրական հետախուզութիւնը իրաւամբ Կօնտի

թէզը գլխիվայր է կանգնեցնում և եզրակացնում է, որ ոչ թէ սօցիալական զարգացումն է արդիւնք հոգեկան զարգացման, այլ ընդհակառակը, վերջինս է արդիւնք առաջինի, ուրիշ խօսքով ոչ թէ մարդկանց մտածելակերպն է նրանց գոյութեան ձևը որոշում, այլ նրանց գոյութեան ձևից է կախուած նրանց մտածելակերպը: Այս տեսութիւնն էլ յիրաւի չի տալի իրերի սկզբնական հիմքերի մասին տեղեկութիւն, որովհետև սօցիալական զարգացումը կամ մարդկանց գոյութեան ձևը իւր կողմից դարձեալ արդիւնք է այնպիսի պատճառների, որոնք կարօտ են բացատրութեան: Այնուամենայնիւ թոյլատրելի է այն եզրակացութիւնը, որ Կօնտի սօցիալական տեսութիւնը անդառնալի կերպով դատապարտուած է:

Այս դեռ բաւական չէ: Եթէ Կօնտի տեսութիւնը ուղիղ լինէր, պէտք է գաղափարի յառաջադիմութիւնը քաղաքական և սօցիալական յառաջադիմութեան հետ միասին առաջ գնար, սակայն սովորաբար հակառակն է պատահում: Յաճախ այն երկրները, ուր անարդար և բռնակալ իշխողները սօցիալական և քաղաքական կեանքը բռնադատում են, անապատացնում և անմխիթար դարձնում, հէնց այդ երկրները զարմանալի հոգեկան բարգաւաճում, զրականութեան, գեղարուեստի և գիտութեան զարմանալի յառաջադիմութիւն են ցոյց տալի: Այս երևոյթը պատահական բան չէ, այլ իսկական հետևանք և շատ հեշտ բացատրուող իրողութիւն: Հասարակական կեանքի ողորմելի և տխուր պայմանները ստիպում են լաւ օժտուած մարդկանց հեռանալ քաղաքագիտութեան վտանգներից և հասարակական կեանքի սովորութիւններից և փակուել իդէալիզմի խաղաղ մթնոլորտում, ուր նոքա հրաշալի պտուղներ են տալի: Այս պատճառով սօցիալական կեանքի ամ-

բողջ քայքայման շրջանը սովորաբար արժանիքներով լի հոգեկան արտադրութեան ժամանակն է: Ամենից առաջ արժէ յիշել Պերիկլէսի ժամանակը Աթէնքում. իսկոն X-րդի ժամանակը Իտալիայում, Միլտոնի ժամանակը Անգլիայում. Գերմանիան փիլիսոփայութեան զաղաթնակէտին հասաւ Կանտի, Շէլլինգի, Հէգելի միջոցով բացարձակ և յետադէմ կառավարութեան տակ: Մեր ժամանակի ամենափայլուն և զարմանալի գրական գործը, որը ամենից աւելի բռնկումն և ընդհանուր ոգևորութիւն առաջ բերեց «Quo Vadis?»-ը (Յո՞ւրեմա) մի լեհացու գործ է, որը մտածել և աւարտել է կնուտի և հալածանքի ուժի մի ժամանակ: Մի աւելի այլ բան, քան եթէ զուգորդութիւն ենք նկատում հոգեկան և սօցիալական զարգացումների մէջ: Մարդկութեան այս երկու գլխաւոր արտայայտութիւնների մէջ զուգորդութիւնից աւելի շուտ նկատելի է մի մեծ անդունդ, որը հնարաւոր է որեւէ կերպ լցնել ապագայ զարգացման բուժիչ ազդեցութեան տակ:

Ես կցանկանայի, որ ինձ յաջողուէր մի ամփոփ գաղափար տալ Կոնտի ուսմունքի մէջ, ինչպէս նրա գեղեցիկ արժէքի նոյնպէս և նրա տարրալուծող սխալներին մասին, որոնք միասին հիւսուած են: Իհարկէ այսօր այս սխալները բոլորն էլ գիտեն և այսօր չկայ անպայման հետևող այն սօցիալիզմական սխալներին, որը բոլորովին ջրուել է: Թէև այս սխալէմը անդադնալիօրէն խորտակուել է, այնուամենայնիւ Կոնտի տեսութիւնը միշտ մնում է յիշատակութեան արժանի, իբրև առաջին փորձ սօցիալական երևոյթների կարգաւորման և նա, չնայելով իւր հիմնական սխալներին, ունի լուսաւոր ճշմարտութիւններ, որոնցից բոլոր ժամանակի սօցիալիզմները օգուտ կբաղեն: Ներկայ սօցիալիզմներից շատերը Կոնտին են պարտական իրենց շատ կարևոր

հայեցակէտերը: Սպէնսէրը նրանից ոչ պակաս գաղափարներ է վերցրել և վարպետօրէն զարգացրել իւր սօցիալիզմի սկզբունքները աշխարհութեան մէջ. Կոնտին համաձայն են դ'Պրէֆի շատ դիտողութիւններն ու տեսութիւնները: Տարդի հանճարեղ դիտողութիւնների մէջ — նմանողութեան վերաբերեալ, կայ անպայման Կոնտի ազդեցութիւնը. նմանապէս Գիդդինգսի փորձերում, սօցիալիզմային տալ հոգեբանական հիմք, քիչ թէ շատ ուղղակի կապ կայ դրական փիլիսոփայութեան հիմնադրի ուսման հետ: Հէնց Կոնտի տեսութիւնը — սօցիալական զարգացման կախումը հոգեկան զարգացումից — թէև անտարակոյս սխալ տեսութիւն, ընդմիշտ դնահատելի դրդիչ է եղել ուսումնասիրելու դիտութիւնների, հաւատի և աւելի ընդհանուր մտքի պատմութիւնները, որոնք շնորհիւ այս վարդապետութեան այնպիսի նշանակութիւն և գրաւչութիւն են ստացել, որոնց ոչ առաջ և ոչ էլ յետոյ չեն հասել: Թէև այն թագը, որով այս սխալէմը փորձում էր պահել մարդկային միտքը, նշանակելով միտքը Թագուհի պատմութեան և զարգացման, արդէն հնացել է, բայց ճշմարիտ է նաև այն, որ հէնց այս սխալէմը շնորհիւ իւր ներքին հոյակապութեան փառքի մի թագ է, որը կմնայ իբրև զարդ և հպարտանալու առարկայ մարդկային մտքի համար անվերջ ժամանակների ընթացքում:

ԵՐՐՈՐԴԻ ԴԱՍԱԽԱՆԱԾՈՒԹԻՒՆ

Կենսաբանությունը իբրեւ հիմք սօցիոլոգիայի

Մարդկային հոգուն ամենամեծ պատիւ բերող հրաշալի գիտերը երկու անգամ են եղել. առաջին անգամ ակամայից և միաժամանակ հանաքի համար, երկրորդը անգամ նրանց արժէքի գիտակցութեամբ և պլուրալ բնուէն ճանաչելով: Թատրոնում կատակերգութիւնը դրամայից յետոյ է լինում, իսկ կեանքի բեմում ընդհակառակը. կատակերգութիւնը դրամայից առաջ է լինում, ծիծաղելի գիտն է, որ լուրջ գիտից առաջ է լինում: Նէկուսը Բարտօլոմէօ դ'Դեյից 21 դար առաջ է: Աֆրիկայի շուրջը պտտել. Ամերիկան Իսլանդացիք Քրիստափոր Կոլումբոսից 5 դար առաջ են բաց արել, քարածուխը, տպագրութիւնը, վառօդը չինացիք անգլիացիներից, Գուտտենբերգից և Շվարցից շատ առաջ են գտել, սակայն այս բոլոր վաղաժամ գիտերին պակասում էր նրանց նշանակութեան հասկացողութիւնը. նրանցից ստացուելիք սօցիալական օգտի և այն նոր ֆունկցիաների հասկացողութիւնը, որոնցով նրանք (գիտերը) օգտակար կարող էին դառնալ: Նոքա միայն անհատի համար պարապ ժամանակի խաղալիքներ էին և ոչ սօցիալական նորութիւններ: Սօցիալական նորմութիւնները սկսում են ուշ, երկրորդ գիտի ժամանակ: Արդարութեանն էլ համապատասխանում է այն բանը, որ մարդկութիւնը գիտի պատիւը երկրորդ գտնողներին է վերագրում և նրանց է յայտնում իւր շնորհակալութիւնը և ոչ առաջիններին, որովհետեւ սոքա իրենց գիտի ժամանակ ուրիշ նպատակ չեն ու-

նեցել, բայց թէ ենական հաճոյքներին բաւականութիւն տալ, իրենց սին փառասիրութիւնը շոյել կամ սեփական ձանձրոյթը փարատել, մինչդեռ երկրորդները զրկանքների և կարիքի գնով իրենց գիտերը կարողացան սօցիալական օգտին գործածել և նրանցից ամբողջ մարդկութեան համար յաւիտենական բարիքներ ստեղծել:

Այս գիտողութիւնները իսկապէս մեր հետախուզութիւնների այս կէտից դուրս չեն, որտեղ մենք միտք ունենք նախապատրաստել մի վերլուծութիւն երկրորդ և շատ տեսակէտներից ամենամեծ սօցիոլոգիական դժգոհի համար, որը իւր սկզբունքները հիմնում է կենսաբանութեան արդիւնքների վրայ: Յիրաւի այս դժգոհի հիմնական գաղափարները առաջուց շատ հեղինակներ զանազան ժամանակներում արտայայտել են: Այսպէս օրինակ այն միտքը, թէ հասարակութիւնը մի օրգանիզմ է, որի վրայ խիստ կերպով շեշտում են այն հեղինակները, որոնց մասին այստեղ խօսելու ենք, արտայայտել են Պլուտոնը, Բէկոնը, Հօբսը (որը այնքան առաջ գնաց, որ այս միտքը քիչ թէ շատ նկարչական նշաններով զարդարեց), Ռուսսօն և Հէգելը: Այն միտքը, թէ սօցիոլոգիան հիմնուելու է կենսաբանութեան վրայ և օգուտներ պիտի քաղի այն յարաբերութիւններից, որ կան մարդկանց և կենդանիների հասարակութիւններում, Կօստը կրկին պարզել է, որի գիտութիւնների դասաւորութեան մէջ սօցիոլոգիան նկատուում է իբրև կենսաբանութեան զարգացումը: Զարգացման նոյն գաղափարը արտայայտուում են Հերակլիդի, Հեգելի, Կօստի և մի շարք հին ու նոր հեղինակների գրուածքներում: Այնուամենայնիւ ամբողջ գիտական աշխարհի ձայնատուութիւնը (պլէբիսցիտ) սօցիոլոգիան կենսաբանական հիմքի վրայ դնելը կապում է Հերբէրտ-

Սպէնսէրի անուան հետ: Ինչո՞ւ — որովհետեւ այն մըտ-
քերը, որոնք նախկին հեղինակների համար անվստահ-
բացատրութիւններ և ակամայ պնդումներ են եղել, մեծ,
անզլիացի փելիսոփայի գրութիւններում առաջին ան-
գամ դաւնում են մի իշխող սկզբունքից բղխող խիստ
կանոնաւորուած և տրամաբանօրէն ապացուցած օրէնք-
ների սխառեմ՝ մինչդեռ նախկին թէօրէտիկները մի
թէզ միայն պնդում էին, Սպէնսէրը պարզաբանում է
և ապացուցում ամուր, հիմքերով և ուժեղ ապացոյց-
ներով:

Կենսաբանական հետախուզութիւններից հանելով
սօցիօլօգիական ուսումնասիրութիւններ, Սպէնսէրը իւր
հետախուզութիւնների հոսանքի ոյժից մղւում է այն
բանին, որ սօցիալական երևոյթների կազմուելու մէջ
ամենամեծ նշանակութիւնը վերագրում է կենսաբա-
նական տարրին: Այս պատճառով ժխտում է Կօստի
վարդապետութիւնը, որի համաձայն բանական տարրը,
միտքը, որոշում է հասարակութեան դրութիւնը և ու-
ժեղ կերպով պնդում է, որ ոչ թէ մտքերը, այլ զգաց-
մունքներն են կառավարում և շարժում աշխարհը, կամ
մարդը ոչ թէ իւր մտքի ներշնչման ազդեցութեամբ
է գործում, այլ իւր զգացմունքների և կրքերի: Այս-
տեղից նա հետեցնում է, որ սօցիալական շտառին
ու գիւնամիկը ոչ թէ մարդու հոգևոր ստեղծագործու-
թիւնների վերլուծութեամբ կարելի է հետախուզել, այլ
անհատի կեանքի և նրա ներքին օրգանիզմի օրէնքնե-
րի ուսումնասիրութեամբ. ուրիշ խօսքով ոչ թէ փելի-
սոփայութիւնը, այլ կենսաբանութիւնը կարող է մարդ-
կային հասարակութեան կազմակերպութեան գաղտնի-
քը բաց անել:

Այն անգնահատելի օգնութիւնը, որ կենսաբանու-
թիւնը սօցիօլօգիային կարող է տալ, իսկոյն պարզուած

է և ուշագրաւ դառնում, երբ միտքը կանգնում է այն
հիմնական դրութեանը թէ իւրաքանչիւր օրգանիզմ մի հա-
սարակութիւն է և իւրաքանչիւր հասարակութիւն մի օրգանիզմ:
Իւրաքանչիւր օրգանիզմ մի հասարակութիւն է, որով-
հետեւ կազմուած է միմեանց հետ համաձայն և սերտ
յարաբերութիւններով կապուած բճիճների մի ամբող-
ջութիւնից, իւրաքանչիւր հասարակութիւն մի օրգա-
նիզմ է, որովհետեւ նա էլ կազմուած է բճիճներից (ան-
հատներից), որոնք իրար մէջ շատ սերտ համաձայնու-
թեան մէջ են և ազդրէգատի (խառնուրդ մարմին)
գոյութեան և զարգացման նպատակին ծառայելու հա-
մար հաւանաբանական ենթարկուած են: Հասարակութեան
և օրգանիզմի մէջ եղած համեմատութիւնը կարելի է
շատ ուրիշ յատուկ, եզակի բաներում ևս տեսնել: Ոչ
օրգանական մարմինները միայն ընդարձակուելով և ոչ
ներքին ամբողջական կազմութեամբ են աճում (ինչպէս
հանքերը): Որոնցից տարբեր են աճում օրգանական
մարմինները իրենց զարգացման ընթացքում, ոչ միայն
ընդարձակուել են, այլ նոքա բարդանում են իրենց
սեփական կազմութեան մէջ, նոքա աւելի ու աւելի են
բաժանւում մասերի. մի պրօգրէսսիվ բաժանումն է ե-
րևում նրանց օրգանների և սրանց գործելու հիմքերի
մէջ: Նոյն բանը տեսնում ենք նաև մարդկային հասա-
րակութեան մէջ: Յետամնաց հասարակութիւնները բո-
լորովին անբաժան դրութեան մէջ են. նրանց մէջ իւ-
րաքանչիւր անհատ միաժամանակ և մարմնի է և որ-
ոնի է ձկնորս. բժիշկները միաժամանակ պատգամա-
խօսներ են և հոգեհալածներ. ճիշտ այնպէս, ինչպէս
ստորին օրգանիզմները չունին յատուկ օրգաններ կե-
րակրուելու, շարժուելու, շնչելու և այլն համար: Ինչ-
պէս որ աւելի բարձր օրգանական ձևերի զարգացումը
պարզուած է նրանով, որ նոր յատուկ օրգաններ են

ծագում, որոնցից իւրաքանչիւրը իւր յատուկ գործելու նպատակն ունի, նոյնպէս մարդկային հասարակութեան աւելի բարձր զարգացման աստիճանին փոխուելը պարզուում է, երբ կազմուում է տարրեր և մասնաւորութեամբ սօցիալական օրգաններ: Այս պատճառով կազմուում են յատուկ օրգաններ սօցիալական կերակրման համար (հողագործութիւնը, խնդուստրիան), սօցիալական շրջապատի համար (վաճառականութիւնը), սօցիալական պաշտպանութեան համար (պատերազմը, իրաւունքի հոգատարութիւնը) և այլն: Այս գեռ բաւական է: Այն կենդանական օրգանիզմը, որը ունի բաժանութեամբ և մասնաւորութեամբ օրգաններ, նրա աչքի ընկնող յատկանիշն այն է, որ ունի ամենասերտ համաձայնութիւնը օրգանների մէջ, կամ անպայման կախումն կայ մէկի միւսներից. ուստի երբ մէկը դադարում է գործելուց, միւսներն էլ միանգամից անկարող են լինում գործել: Հէնց որ սիրտը դադարում է բարխիւլուց, թոքերը այլ ևս չեն շնչում, ուղեղը չի մտածում, նեարդերը չեն շարժւում, շարժող կեդրոնները կանգ են առնում և այլն: Նման համաձայնութիւն կայ նաև սօցիալական ազգայնական օրգանների մէջ: Երբ քարածուխը պակասում է, գործարանի բանուորներին տրձակում են, երբ երկիրը հում նիւթեր չի արտադրում, խնդուստրիան կանգ է առնում, վաճառականութիւնը թուլանում է, զօրքը զենքեր և պաշար չի ստանում և այլն: Ինչպէս որ, որքան անհատական օրգանիզմը զարգանում է, նոյնքան նրա ֆունկցիաների միասին գործելը կամ համաձայն գործելը աւելի աչքի է ընկնում, նոյնպէս նոյնը կատարւում է սօցիալական օրգանիզմի հետ: Սօցիալական օրգանիզմի կեանքը, ի բաց առեալ բացառիկ դժբախտութիւնները, աւելի երկար է, քան իւր մասերինը. բժիշկները քայքայւում են, նորից վերարտադրւում, օր-

գանները նորոգւում են, իսկ օրգանիզմը մնում է: Նմանապէս սօցիալական ազգայնական կեանքը աւելի տևական է քան նրա բժիշկներինը կամ անհատներինը, որոնցից նա կազմուած է, որովհետև մինչդեռ սերունդները իրար ետևից գերեզման են իջնում, հասարակութիւնները յաւիտեան տևում են, կամ վերջանում են մի քանի դար տևելուց յետոյ:

Անհատական և սօցիալական օրգանիզմների մէջ եղած նմանութիւնը այստեղ դեռ չի վերջանում: Կենդանական օրգանիզմները ունենում են երեք հիւսուածքներ. առաջինը նշանակուած է շրջապատի ազդեցութիւններին անմիջապէս ենթարկուելու համար և ֆունկցիան է օդից օգտակար ազդեցութիւնները ծծել և օրգանիզմի համար փասակար ազդեցութիւնները ջնկել. սա էքսոդերմ հիւսուածքն է (exoderme gewebe). երկրորդը միախառնելու համար նշանակուած նիւթերը առնում է և մշակում—սա էնդոդերմ հիւսուածքն է (endoderme gewebe). երկուսի մէջն է մտնում մի երրորդ հիւսուածք, որը կենսական հիւթերն է բաժանում երկուսի մէջ—այս էլ մեզոդերմ հիւսուածքն է (mesoderme gewebe), որը կազմուած է արիւնանոթներից: Սօցիալական օրգանիզմում էքսոդերմ հիւսուածքին համապատասխանում է կոուուղների և դատաւորների դասակարգը, որոնք պաշտպանում են. էնդոդերմին—երկրագործական և խնդուստրիական դասակարգը, որը կերակրում է. մեզոդերմին—վաճառական դասակարգը, որը բաժանում է: Ինչպէս կենդանական օրգանիզմում նրա զարգացման ընթացքում էքսոդերմ սիստեմից կազմուում է նեարդային սիստեմը, նոյն ձևով սօցիալական օրգանիզմի մէջ կոուուղների դասակարգից կազմուում է կառավարող դասակարգը: Ինչպէս օրգանական դարգացման մէջ էքսոդերմ հիւսուածքը հետզհետեւ իւր նշանակութիւնը կորցնում

է միւս երկուսի վերաբերմամբ, նոյնպէս սօցիալական զարգացման մէջ կոուղներէ դասակարգի աստիճանէն սկսած խաւարում է արտադրող և վաճառականութեամբ պարագիտող դասակարգերի համեմատութեամբ, որովհետեւ մարդկային հասարակութիւնը զինուորական դրութիւնից անցնում է ինդուստրիական դրութեան: Հասարակութիւնը նախնական անխտիր կոուղ հօրեպայական դրութիւնից հեռանում է և ձգտում, դժբախտաբար դեռ շատ հեռու գտնուող մի սօցիալական ձևի, ուր ամեն մէկի գործողութիւնը ազատ և ապահով կարող է աճել, զարգանալ, տիեզերական խաղաղութեան հովանու տակ: Այս զարգացման համապատասխան փոխում են նաև սօցիալական օրգանները չափով. եթէ մի կոուղ տոհմի իշխանութիւնը նման է cerebrospinal նեարդային սիստեմին, կարելի է մի խաղաղասէր տոհմի իշխանութիւնը նմանեցնել մեծ sympaticus-ին: Պէտք է նկատել, որ Սպէնսէրի վերջին համեմատութիւնը կենսաբանութեան նոր յառաջադիմութիւններին չի համապատասխանում. վերջերս մեծ sympaticus-ին իրեն միահեծանութիւնից գահընկեց են արել, որը բաւական ժամանակ նրան էր վերապահուում և այժմ նրան բաժանողի և համեմատողի համեստ դերն են տալի. երբ նա այսպիսով կորցրեց իւր և իշխողի մէջ եղած նմանութիւնը, նա այնքան թոյլ, անփափազ և անզայն մի հասարակապետութեան վերջին նախագահ:

Սակայն անհատական և սօցիալական օրգանիզմների մէջ այսքան շատ կէտերում եղած նմանութիւնները, մեր կարծիքով, չպէտք է թոյլ տայ մոռանալ եղած այն երկու մեծ տարբերութիւնները, որոնցով նոքա միմեանցից զատուում են. 1. կենդանական օրգանիզմը կազմուած է միմեանց հետ անբաժան կերպով միացած մասերից, մինչդեռ սօցիալական օրգանիզմը

կազմուած է միմեանցից տարբեր կամ իրարից բաժանուող մասերից: Մի բժիշկ չի կարող մի ուրիշ բժիշկից, որի հետ նա միացած է, բաժանուել, բայց սօցիալական բժիշկը—մարդը կարող է իւր համաքաղաքացիներից, իւր նմաններից հեռանալ, նա կարող է զաղթել, նրան կարող են երկրից ուրիշ երկիր արտոնել, նա կարող է իւր սօցիալական անհատականութիւնը ինքնասպանութեամբ ոչնչացնել:—2. կենդանական օրգանիզմի մէջ կան զգացող և ոչ զգացող մասեր, մինչդեռ սօցիալական օրգանիզմում դարձեալ չենք գտնում զգացողութեան մեծաշնորհ մի քանի անհատների կամ խմբերի համար, այլ այս բանը հաւասարապէս տարածուած է բոլորի մէջ: Մինչդեռ կենդանական օրգանիզմի գիտակցութիւնը աւելի կամ պակաս սահմանափակուած ազդրէզմաւոր մէջ է կեդրոնացած, սօցիալական օրգանիզմի մէջ այս բանը տարածուած է ամբողջ ազդրէզմաւոր վրայ: Անկարելի է մարդկային հասարակութիւններում գտնել մի մտածողութեան գործիք, որը տարբեր լինի անհատականից, մինչդեռ կենդանական օրգանիզմի մէջ միայն մի մասը ունի կիճատ մտածողութեան գործիք:

Այս տարբերութիւններից հետևում է մի աւելի կարևոր տարբերութիւն. մինչդեռ անհատի օրգանները ապրում են և գործում օրգանիզմի օգտին, անհատները բոլորովին յօգուտ հասարակութեան կամ նրա մի արտօնեալ դասակարգի համար չեն ապրում և գործում, այլ, ընդհանրապէս, համարակութիւնը զարգանում է և ապրում յօգուտ այն անհատների, որոնցից նա կազմուած է: Արիստոտելի և ուրիշ փիլիսոփաների այն կարծիքը, թէ մարդը ստեղծուած է պետութեան համար և ոչ թէ պետութիւնը մարդու համար, փխտելի է այստեղ պարզուում է առաջին անգամ: Հօբսի գրած սրան բոլորովին հակառակ և աւելի բնական ու արդար

թէզի ճշմարտութիւնը, թէ պետութիւնը միջոց է, իսկ մարդը նպատակ, որ միայն այն միջոցները և օրէնքներն են թոյլատրելի, որոնք մարդկային սեռի օգուտները աչքի առաջ ունին:

Այնուամենայնիւ հասարակութեան և օրգանիզմի մէջ եղած ուշադրութեան արժանի այս տարբերութիւնները չեն կարող հեռացնել այն նմանութիւնը, որ նրկատելի է երկուսի մէջ և Սպէնսէրը չի քաշուում եզրակացնելու, որ հասարակութիւնն էլ մի օրգանիզմ է, թէև իւրատեսակ, բայց և այնպէս մի օրգանիզմ է: Հասարակութեան և օրգանիզմի մէջ եղած նմանութիւնը Սպէնսէրի համար մի գնահատելի օժանդակ միջոց է իւր հետախուզութիւնների ընթացքում, որը վերաբերում է մարդկային հասարակութեան և նրա աճող ձևերի վերլուծութեանը: Ինչպէս կենդանական օրգանիզմը, ասում է նա, նոյնպէս և սօցիալական օրգանիզմը ենթարկուած է զարգացման մի անխախտ օրէնքի, որը նրան նոյնաժին (homogen) տարբերութիւններից տանում է այլաժին (heterogen) տարբերութիւնների և օրգանական ու սօցիալական զարգացման պատճառը նոյնն է: Ինչպէս կենդանական օրգանիզմը շնորհիւ գոյութեան կռուի է զարգանում, որը վերջանում է նրանով, որ ամենից ուժեղներն ու յարմարները յաղթում են և թոյլերը ոչնչանում, նոյնպէս սօցիալական օրգանիզմը զարգանում է շնորհիւ կեանքի կռուի և աւելի օժտուած, ուժեղ, իմաստուն անհատները յաղթում են, իսկ թոյլ և այլասեռուած տարրերը ոչնչացման են դատապարտուում: Աւելի լաւի բնական ընտրութիւնը սօցիալական զարգացման մէջ մի ուժեղ գործօն է, ամենից ուժեղը, բայց ոչ միակը: Ինչպէս օրգանական զարգացման որոշման համար բնական ընտրութեան մօտ շրջապատի ազդեցութիւնը և ձեռք բերած յատկութիւն-

ների ժառանգականութիւնը օգտակար և անհրաժեշտ է, նոյնը կարելի է ասել և սօցիալական զարգացման համար: Անկասկած բարոյական իդէաներ ստանալը, գիւտերը և նոր վարդապետութիւնները իրար հետևող ցեղերի զարգացման համար գնահատելի գործօններ են եղել, որոնք արիւնոտ կեանքի կռուից դուրս են գործել և մարդկային ցեղի հետզհետէ մի աւելի անվերջ յառաջադիմութեան լուսաւոր բարձրութեան հասնելուն նպաստել:

Այս է Հերբերտ Սպէնսէրի սօցիօլօգիական տեսութիւնը համառօտ խօսքերով, որը, ինչպէս ամեն մէկը տեսնում է, մի խելացի, լաւ կարգաւորուած ամբողջութիւն է և նրանով զբաղուողների անմիջական հիացումն ու ուշադրութիւնն է գրաւում: Այս վարդապետութեան շուրջը կազմուել է ընդունակ և ոգևորուած երիտասարդներից կազմուած մի դպրոց (Վորմս, Լիլիենֆելդ, Դիւրկհայմ, Նօլիկով, Մալլօկ), որոնք իրենց ուսուցչի տեսութիւնը բացատրել են, ապացուցել, պարզաբանել և յաճախ էլ ծայրահեղութեան հասցրել: Այս ոգևորուած հեղինակները, որոնք իրենց օրգանիստներ են անուանում, ընդունում են Սպէնսէրի ցոյց տուած նմանութիւնը հասարակութեան և օրգանիզմի մէջ և աւելացնում են մի շարք գիտական զարդեր նրա վրայ, որոնք շատ անգամ աւելորդ են լինում և անհեթեթ: Սպէնսէրը սօցիալական և կենդանական մարմինների մէջ եղած նմանութիւնը տաք կերպով շեշտելով, իսկապէս շտապեց կցելու և այն, որ այս նմանութիւնը ոչ մի այլ արժէք չունի, բայց միայն խօսակցական մի ձևի, որը աւելի յարմար է պլաստիկ ձևերով արտայայտելու հասարակական կեանքը արտայայտող օրէնքները: Սակայն այս խելօք պահեստի խօսքը դժբաղդաբար նրա աշակերտները մոռացան, որոնք ոչ միայն ուսուցչի տուած համեմատութիւնը ամենափոքր առանձ-

նայատկութիւնների մէջ փնտելով ծայրահեղութեան հասան, այլ և շահագործեցին, այն իբրև պարզաբանող ապացոյց, իբրև անհրաժեշտութիւն շատ սօցիալական օրէնքների: Գերմանական գիտնական Շեֆֆլէն ծայրահեղութեան մէջ ընկաւ, երբ սկսեց թուել սօցիալական շերտերը՝ օրգանները, սէքսմէմբերը, անօդնութիւնը, շարժող կեդրոնները, նեարդերը և գանգլիաները: Նոյն դպրոցի մնացած սօցիոլոգները՝ նրանից աւելի չափաւոր չեն: Նրանք իսկապէս նկարագրում են սօցիալական գանգը, սօցիալական միժ՝ սիմպատիկումը, սօցիալական թոքը: Նոքա ցոյց են տալիս հասարակութեան անօդների սիստեմը, որի ներկայացուցիչն է (հասարակութեան մէջ) խնայողական գանձարանը: Սօրբօնի համալսարանի մի ուսուցչապետ կղերին սահմանադրում է նմանեցնելով նրան մի գիրացած նեարդային ճիւղաւորութեան փոքրեր, որոնք ծիծաղելի են նրանց համար, որոնք ուշք են դարձրել մեր գաւառների քահանաների նիհար արտաքինի վրայ: Մի այլ սօցիոլոգ նեարդերը համեմատում է հեռագրի թելերի հետ, իսկ մարդկային ուղեղը հեռագրական կեդրոնական բիւրօյի հետ: Էլ աւելի լինէ՞ք ուղղում: Մի հեղինակ այնքան առաջ է գնացել, որ ուղղում է անդամարդկանց պետութիւնները կանանց պետութիւններից տարբերել, բաժանել: Տղամարդկանց պետութիւնները նուաճող պետութիւններ կլինեն, որոնք նուաճուած պետութիւնների վրայ տիրողներ կդառնան, իսկ նուաճուած պետութիւնները, որոնք ենթարկւում են անաշխատներին, կլինեն կանանց պետութիւնները:

Այս ամսին չափազանցութիւնները դարձան հենց նրա համար, որ այն վարդապետութեան, որի մեկնիչներն են ուղղում լինել, հաւանականութիւնը թուականն. հաստատ է, որ այս վարդապետութեան վար-

կարեկման մէջ ոչ պակաս մեղաւոր են նրանք, նրանց աչքում, որոնք նոր սօցիոլոգիայում յամենայն դէպս նորութիւնների հակադակ և յեղադէմ մարդիկ չեն ճանաչուած: Բայց եթէ մի կողմ թողնենք աշակերտների այս չափազանցութիւններն ու յաւելումները և դառնանք ուսուցչի չափաւոր գրուածներին, ստիպուած ենք խոստովանել, որ սա աւելի բան չէ կարողացել անել, բայց եթէ սօցիալական խորը դրութիւնների վերլուծութիւնը փոխարինել անպտուղ համեմատութեան դժուար ծանրութիւններով: Մենք էլ մեր կողմից կարող ենք սօցիալական և մարդկային օրգանիզմների մէջ հղած աւերչութեան կէտերը աւելացնել և հասարակութեան մէջ շղեր, գանգ, անօթ, փորոտիք, այլ և ուրեցըներ և սրտի պայթիւններ ցանել սակայն այս ամենը մեզ հասարակութեան օրէնքների հետախուզութեան գործում մի քայլ էլ առաջ չեն տանի: Մենք աւելի կամ պակաս պլաստիկ և զուսաւոր նկարագրութիւններ կրտանք, բայց և ոչ մի անպայման գիտական վերլուծութիւն հետախուզելիք երևոյթների վերաբերմամբ: Այս է եղել Սպէնսերի համար պահուած ճակատագրը: Նրա սիստեմատիկ համեմատութիւնը թոյլ է տալիս նրան սօցիալական կեանքի պարզ երևոյթները նկարչական ձևով ներկայացնել, որը սրան կամ նրան գեղարուեստական կամ գիտական տեսակէտից կարող է դուր գալ, ուրիշներին կարող է այս բանը երևալ ձևական և դեկադենտ մի արտայայտութիւն, որը սակայն ոչինչ չի պարզում և չի ապացուցանում: Սպէնսերի սօցիոլոգիան այս պատճառով պարզ նկարագրական է և ոչ հետախուզական. նա ներկայացնում է հետախուզութեան մի նախկին շրջան. նա կարող է ծառայել իբրև մի նախապատրաստութիւն մի աւելի բարձր գիտական ուսումնասիրութեան համար:

Բացի սրանից՝ էլ անելի քան համեմատական մեթոդը Սպէնսերի սխտեմը կամ նրա հիմնական թէզը պատարակողունը արժանի է, այն պատճառով, որ նա սօցիոլոգիան կենսաբանութեան վրայ է կառուցանում: Թեթև հետախուզութիւնն իսկ բաժանում է համոզուելու համար, թէ այս թէզը ինչպիսի խիստ հակասութիւն ունի իւր մէջ: Յիրաւի սօցիոլոգիան իբրև ինքնիշխան գիտութիւն իրաւունք ունի մենակ վճռելու այն հարցը, թէ որ աստիճանի սօցիալական ազդրէզատի կեանքը օրէնքների է ենթարկում, որոնք անհատի կեանքում իշխող օրէնքներից տարբերում են: Եթէ այնուամենայնիւ պնդում են, որ հէնց անհատի կեանքը որոշող օրէնքները կառավարում են հասարակական կեանքը, պէտք է ուրեմն այստեղից տրամաբանօրէն եզրակացնել, որ կենսաբանութիւնը միայնակ բաւական է սօցիալական երևոյթների ամբողջութեան բացատրութեան համար և որ մի սօցիոլոգիական գիտութիւն այլ ևս գոյութեան իրաւունք չունի: Այսպիսով այս դպրոցը սօցիոլոգիային խանձարուրի մէջ խեղտում է, փոխանակ հիմնադրելու Բայց մի կողմ թողնելով այս հանգամանքը, իւրաքանչիւրն էլ տեսնում է, որ բոլոր օրգանական էակներին յատուկ կենսաբանական երևոյթները չեն կարող հիմնական հետախուզութեան մեթոտ տալ սօցիալական երևոյթների համար, որոնք առնուազն իրենց բարդ և յայտնի արտայայտութեան ձևերով բացառապէս մարդկային ցեղին են յատուկ: Իսկապէս միայն մարդն է իւր կեանքը նուիրում կրթական, իրաւական և կարգապահական որոշումների մարդն է առաջ բերում քաղաքական, ազգային, միջազգային յարաբերութիւններ, որոնց հետքն իսկ իզուր է փնտռել ստորին տեսակների մէջ: Են լաւ գիտեմ, որ սպէնսէրեան սօցիոլոգները այլ կերպ են դատում և ամեն մի դէպքում

մատնանիշ են անում ջրշունների, մեղունների և մրջկանների հասարակութիւնները: Այնուամենայնիւ նրանց բարի կամքը և սխտեմատիկ խոշորացնող ապակին կարողացել է կենդանական տեսակներում միայն նիւթական հաւաքումներ տեսնել, որոնք կազմուել են մի ընդհանուր, սպառնացող վտանգի պատճառով և ըստ ամենայնի անգիտակցական և մեքենայական են: Ընդհանուր մասերի բաժանուած և բարդ մարդկային միատեղ կենցաղավարութեան հետ ոչինչ համեմատելի բան չեն ներկայացնում: Երբ կենսաբանական գործողութիւնը բոլոր տեսակների համար ընդհանուր է, իսկ սօցիալական գործողութիւնը և նրան պատկանող յարաբերութիւնները միայն մարդկային տեսակին են առանձնապէս յատուկ, պարզ է, որ այն փորձը, որով աշխատում են երկրորդ տեսակի գործողութիւնները միայն իբրև կցորդ երևոյթներ առաջինների ներկայացնել, տրամաբանական արտուրդ է: Պարզ է ուրեմն, որ պէսզի սօցիալական երևոյթներ առաջ գան, որոնք գտնուում են մարդկային ազդրէզատի ծոցում և ոչ ստորին տեսակի ազդրէզատի մօտ, կենսաբանական երևոյթը, որը բոլորին յատուկ է, այլ ևս բաւական չէ, այլ դրանից դուրս քննութեան պիտի առնուի մի առանձին և միայն մարդկային էակին բացառապէս յատուկ գործողութիւն:

Այս սկզբնական սխալը շարունակուում է Սպէնսէրի վարդապետութեան բոլոր ուսմունքներում և առաջին պատճառն է նրա բազմաթիւ թերիւների և ափսոսանքի արժանի սխալների, որոնց մէջ սօցիալական գիտութիւններում պատմական գործօնի նշանակութեան բացարձակ անգիտութիւնը ամենից փոքրը չէ: Հասկանալի է, որ մի դպրոց, որը սօցիոլոգիան նկատում է իբրև կենսաբանութեան մի ընդլայնում, այն գոր-

ծօնների հետ պիտի հաշիւ տեսնի, որոնք մարդուն և ստորին կենդանիներին ընդհանուր են: Որովհետեւ պատմութիւնը մարդու համար մի բոլորովին առանցիկ և բացառապէս նրան յատուկ երևոյթ է, շատ բնական է, որ կենսաբանութեանը չի յաջողւում նրան իւր սեփական կառուցուածքի ներսն առնել: Այս է պատճառը, որ Սպէնսէրը և նրա կողմնակիցները նախապատմական դաշտավայրերում սիրով զբօսանքներ են կատարում, որ շատ աղմուկ են բարձրացնում իրենց պահանջկոտ գիտականութեամբ: Ամերիկայի, Աւստրալիայի կամ Աֆրիկայի նախապատմական անտառներին վերաբերեալ ուսումնասիրութիւններով, սակայն երբէք իրենց դիրքը չեն որոշում պատմութեան վերաբերմամբ և միանգամայն անգէտ են մարդկային ցեղի պատմական ժամանակին: Ինչո՞ւ — որովհետեւ կենսաբանական մեթոդը տեղին է նախապատմական անտառների կենդանիների կեանքը ուսումնասիրելու ժամանակ, իսկ կուլտուրայի բացատրութիւնների կամ պատմութեան մէջ եղած ժողովրդների կազմած բարդ և բարձր էութիւնների համար այլ ևս ոչինչ որոշել չի կարողանում: Այս հայեցակէտը ունենալով, ես չեմ տատանւում աւելու, որ Սպէնսէրի սխտեմը յիշաւ մի յետադէմ բայլ էր համեմատած Կօնտի սխտեմի հետ: Վերջինիս տեսութիւնը, թէև շատ անգամ սխալ, Արիադնայի թեւի դեր էր կատարում պատմութեան լաբիրինթոսում ի դեր էր կատարում պատմութեան լաբիրինթոսում հետախուզողի համար. նա օգնում էր գտնել իրար յաջորդող սօցիալական շրջանները իրարից տարբերել և փորձում էր որոշ չափով իրեն յատուկ հիմնական գծերը միացնել, մի շունչ կազմող սկզբունք դարձնել: Սպէնսէրի ուսմունքը բոլորովին անյարմար է այս էական խնդրի համար. նա պէտք է պատմական ժամանակների շէմքին կանգ առնի. նա անկարող է որևէ

կերպ բաժանուած և բարդ երևոյթները, որոնք կատարւում են հասարակութեան մէջ, հետախուզել: Նա կարող է միայն վայրենի հասարակութիւնների և նախապատմութեան մասին հազիւ տանելի փիլիսոփայութիւն տալ, բայց ոչ երբէք քաղաքակրթութեան, բարբարոս ժամանակի փիլիսոփայութիւն և ընդհանրապէս երբէք պատմութեան փիլիսոփայութիւն չի կարող տալ: Դրանից դուրս Կօնտի սօցիօլօգիան պայծառ լոյս էր սփռում դասական հին դարի, միջին դարի և նոյն իսկ ներկայ ժամանակի կեանքի վրայ, իսկ Սպէնսէրի տեսութիւնը մարդկային բոլոր մեծ շրջանները կատարեալ մթութեան մէջ է թողնում կամ լուսաւորում է այնպէս մութ և աղօտ լուսով, որ հազիւ նրանց որուազծերի անբաժան ծայրերը կարելի է լինում գուշակել:

Մի այլ հետևողութիւն էլ այն է, որ կենսաբանական տեսութիւնը սօցիօլօգիային անկարող է դարձնում ընդունել սօցիալական զարգացման առանձնատուկ բնոյթը և նրա փոփոխութիւնների առաջ դալը մի շարք միմեանցից բոլորովին տարբեր և պրօգրէսիվ ձևերի միջոցով: Ես չեմ դանդաղում պնդել, թէև հակասական թուայ, որ Սպէնսէրի սօցիալական զարգացման տեսութիւնը հակաէվօլյուցիօնական է, որովհետեւ նա մարդկային հասարակութիւնը իւր դարաւոր զարգացման ընթացքում ներկայացնում է իբրև մի զինուորական հասարակութիւն, որը ձգտում է ինդուստրիական կազմակերպութեան, բայց երբէք նրան չի հասնի. ինչպէս Սպէնսէրն է ցոյց տալի, մարդկային հասարակութիւնները կատարելագործւում է իւր հրաշալի զարգացման ընթացքում, բաժանւում է, միանում. բազմապիսի է նրա արտայայտման և լարելու միջոցները, բայց այնուամենայնիւ նա մնում է նման իւր էական բնութա-

գծերում, իւր աչքի ընկնող օրէնքներում. նա միշտ զինուորական հասարակութիւն է, որ ձգտում է ինդուստրիական հասարակութեան: Բայց իրերի իսկութիւնը այդ չէ, որովհետեւ մարդկային հասարակութիւնը իւր զարգացման պրօցէսում կատարում է մի շարք պատմական շրջաններ. սրանցից ամեն մէկում ունենում է բոլորովին տարբեր ձև, բնութագծեր և օրէնքներ: Նա սկզբում կոմմունիստական է, ապա ստրկական, ապա աւատական, ապա հիմնում է վարձու սիստէմի վրայ. այս շրջանները նոյնքան իրարից խիստ տարբեր պատմական աշխարհներ են, նոյնքան իրարից տարբեր օրգանիզմներ, որքան ճանճը գործիլայից, կամ մեղուն—փղից: Այս բազմակերպ իրարից էապէս տարբեր բոլոր ձևերը Սպէնսէրը մի կարգի տակ է դնում, նա բոլորը մի դրօշակի տակ է դնում և ինչո՞ւ — որովհետեւ ամենամակերևութային ձևերը բոլորին էլ ընդհանուր է, այն է պէտք է զինուորական հասարակութիւններ դառնան: Բայց այս դէպքում նոյնքան արդարացի կլինէր գորտը, արծիւը և մարդը համեմատել, որովհետեւ բոլորն էլ այս կեանքի էակներ են շնչում:

Վերջապէս Սպէնսէրի այն թէզը, որ մարդկային հասարակութեան մէջ ճշտում է յարմարուողի աւելի ապրելու տիեզերական օրէնքը իրականութեան տարրական դիտողութիւնով միայն, խիստ ջանախախտ է. այստեղից երևում է, որ մարդկային գոյութեան կրօնում լաւերը չեն յաղթում միշտ. եթէ յաղթողները, վաճառողները, հարուստները մեծ մասամբ յաղթանակում են, յաղթութեանն էլ չեն վերջանում, ընդհակառակը պէտք է ապրեն, որ յաղթողներին կերակրեն, ծառայեն և պահպանեն. ուստի հասարակական կրօնում պակասում են այն բոլոր տարրերը, որ տեսնում ենք

կենսաբանական կրօնում և այդ հանդամանքը դառնում է կատարելագործման և յառաջադիմութեան մի գործօն:

Շատ կսխալուի սակայն նա, ով մեր այս դիտողութիւնները կրացատրի իբրև անպայման դատապարտութիւն մի գիտական ուղղութեան, որը սօցիօլօգիական հետախուզութիւններին ուշադրութեան արժանի դրողներ է տուել և որը ընդ միշտ — սա մի վայել խոստովանութիւն է—ճշմարտութեան հիմք ունի: Իսկապէս կասկած չկայ, որ մարդկային հասարակութիւնը որքան և առանձին, անկախ կեանք ունի, քան այն անհատները, որոնցից նա կազմուած է, այնուամենայնիւ նա կազմուած է անհատներից, այսինքն կազմակերպուած էակներից, որոնց ապրելու ձևը և հասարակութեան մէջ իրար հետ լինելը անպայման կենսաբանական պայմաններով կամ օրգանիզմի մէջ իշխող խիստ կանոններով է կարգաւորուած: Այս պատճառով կասկած չկայ, որ սօցիալական օրգանիզմի օրէնքները իմանալու համար անհրաժեշտ է իմանալ կենդանական օրգանիզմի օրէնքները. այս մտքով կայ և անվիճելի կլինի կենսաբանութեան սօցիօլօգիայի նախադրեալ լինելը: Այստեղ կայ ճշմարտութեան առաջին տարրը, որը ոչ ոք Սպէնսէրի սիստեմում չի կարող չընդունել: Բացի այս յարմար է օրգանիզմի և հասարակութեան համեմատութիւնը. թէև նոր գիւտերի համար չի կարող միջոց լինել, սակայն առնուազն կարող է համոզել, որ հասարակութիւնը մարդու արհեստական ստեղծագործութիւնը չէ, մի մեքենայ չէ, որ նա կազմել է և իւր ցանկութեան համաձայն կարող է փոխել և կազմալուծել, այլ նա մի բնական ծնունդ է, որը ենթակայ է զարգացման և յառաջադիմութեան խիստ օրէնքի և որ մարդը անկարող է նրան քանդել կամ էապէս փոխել: Այստեղ է ահա Սպէնսէրի տեսութեան մեծ

յառաջադիմութիւնը համեմատած Կօնտի տեսութեան հետ: Կօնտը սօցիալական երևոյթները դիտելով նկատում է այդ բոլորը իբրև մարդկային բանականութեան, մտքի արտայայտութիւն, որ մարդու քմահաճոյքին է թողնուած հասարակութեան դրութիւնը փոխել. այս տեսակէտից նա բարենորոգիչներին, ծրագիր կազմողներին, բոլոր ցնորոգներին սօցիալական նորութիւններին վերաբերմամբ արդարացնում էր. Սպէնսէրի տեսութիւնը լաւ ժամանակին այս խելացնոր ցնորոգներին պաղ ճառագայթով լուսաւորում է և ցոյց տալի, որ հասարակութիւնը մի օրգանական ամբողջութիւն է, որը խիստ բնական օրէնքներով է կառավարւում. այն միտքը, թէ քմահաճոյքով հնարաւոր է ընդհանուրի դրութիւնը հրամանի մի պարագրաֆով, վարչական կամ քաղաքական բարենորոգութիւնով փոխել, նոյնքան արեւելի է, որքան այն միտքը, թէ հնարաւոր է շնորհի ոտքերը ուղղահայեաց դարձնել կամ փոքրին— ճանձ: Սօցիալական բարենորոգութիւնը ամենաշատը կարող է նպատակ դնել այնպիսի մի հետեանք, ինչպիսին մի կենդանիներ աղնուացնող խելացի և նպատակայարմար միջոցներով հասնում է: Ինչպէս սրանց շատ կրկնուող աշխատանքից յետոյ յաջողում է եղանկամ ոչխարի գլուխը կամ եղջիւրները կամ ոտքերը աւելի փոքրի կամ գեղեցկի վերածել, նոյնպէս բարենորոգիչներին ջանասէր և համբերատար աշխատանքները շատ սօցիալական անհարթութիւններ կամ սխալ դրութիւններ կարող են ուղղել: Ոչ աւելի. մինչդեռ Կօնտը աւելի կամ պակաս ճոխ բարենորոգութիւններ է առաջարկում, Սպէնսէրը միայն համաձայնութիւն է ցոյց տալի. մի համաձայնութիւն, որի դէմ նա կռիւ է հրատարակում սօցիալիզմի, արհեստակցական միութիւնների և ահարկու պետութեան որևէ կերպ հասա-

րակութեան մէջ խառնուելու միջոցներով, ուշք չդարձնելով, որ հէնց այս երևոյթները հասարակութեան դարգացման այն անհրաժեշտ մասերն են, որոնց դէմ կռոււելն իզուր է: Մի համաձայնութիւն, որը ամեն կերպ ճշմարտութեանը աւելի մօտ է, քան նրա նախորդի կատաստրօֆական յանկարծակիները:

Եթէ ինձ ասեն ընդհանրապէս, մի համադրական վճիռ տուր Սպէնսէրի սօցիօլօգիայի մասին և մի համեմատական կարծիք Կօնտի և նրա սօցիօլօգիայի մասին, կարծիքս այսպէս կձևակերպէի— որ Կօնտի նիւթը իդէալիզմն է, իսկ Սպէնսէրինը ստորին, կենդանական կեանքը: Կօնտը յանուն իդէաների է խօսում և ողջունում է նրանց իբրև մարդկային հասարակութեան ամենաբարձր ղեկավարների, Սպէնսէրը յանուն բժիճների, նեարդերի և նրանց անգիտակցական շարժումների է խօսում: Կօնտը ամպերում է թափառում, Սպէնսէրը հողի տակն է սողում: Կօնտը մի հրեշտակ է, Սպէնսէրը մի կենդանի: Երկու մտածողներից և ոչ մէկը մարդկանց հետ երկրի վրայ չէ կանգնած, ոչ մէկը հունի իսկապէս դրական և մարդկային հայեացք սօցիալական միակերպութեան մասին: Սօցիօլօգիան ունենալով յանձին Կօնտի հրեշտակ և յանձին Սպէնսէրի կենդանի, ստիպուած է Դիօգլինէսի նման մարդ փնտռելու գնալ: Գտնւ այդ դեռ պէտք է հետախուզել: Միայն մի բան ճիշտ է, որ այդ որևէ կերպ գտնելուցն է կախուած երիտասարդ գիտութեան ապագան և նրա յոյսերով լի բաղդը:

ՉՈՐՐՈՐԴ ԴԵՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Կենսաբանական սոցիոլոգիայի վերջին շրջանը

Օրգանական զարգացման տեսությունը, որի կողմնակիցների համաձայն կենսաբանական սոցիոլոգիան միայն կարող է սոցիալական զարգացման հանելուկը պարզել, ինքը ունի մի զարգացում կամ մի հետաքրքիր շրջան է կատարել, որը կիմանայ միայն նա, ով որ ուզում է հասկանալ այն դժուար լուծելի հարցը, որի համար աշխատում են նոր ծագող գիտությունները: Ձևափոխություն (Transformismus) առաջին տեսագետների համար, Լամարկ, տեսակների զարգացումը պարզապես արդիւնք է անհատների գործ դրած ջանքերի շրջապատին յարմարություն համար. երբ մի որոշ ժամանակում այս ջանքերը կրկնվում են, վերջապես ձևափոխվում են և կատարելագործվում է համապատասխան օրգանը և այսպիսով ամբողջ օրգանիզմը: Օրգանիզմի այս աստիճանական կատարելագործումը, որ արդիւնք է իւր ապրած շրջապատի դէմ մղած անվերջ կեանքի կռուի, աւելի ուժեղացած և դրոշմուած անցնում է յաջորդներին. շնորհիւ ժառանգականության և անվերջ վարժությունների ընթացքում նրանց յաջողում է վերջապես առաջ բերել տեսակի մի հիմնական փոփոխություն կամ նոյն իսկ մի նոր տեսակի կազմվածին: Այս է համառոտ խօսքերով Լամարկի տեսությունը: Այս տեսությունը, որ սկզբում թերահաւատություններ էր արթննում, Դարվինի խոր և ընդարձակ

տեսությունն շնորհիւ բոլորովին յետ մյուսեց *): Վերջինս չի ուրանում, որ շրջապատը, յարմարությունը և ձեռք բերած յատկությունների ժառանգական լինելը ուշադրություն արժանի գործոններ են օրգանական զարգացման մէջ. բայց նա պնդում է, որ սոքա պակաս արժէքաւոր մասն են կազմում միայն քան այն գործոնը, որ առաջին անգամ Դարվինը առաջ քաշեց — բնական ընտրության օրէնքը: Որովհետեւ ապրուստի միջոցները միշտ էլ բաւականաչափ չկան բոլոր կենսականներին կերակրելու համար, այս պատճառով սրանց մէջ իշխում է մի սարսափելի կեանքի կռիւ, որի մէջ աւելի լաւերը, ուժեղները յաղթանակում են, իսկ թոյլերը անպայման ոչնչանում: Ուժեղի ապրելը, որ ունի աւելի կատարել և աւելի լաւ օրգաններ շատ կարևոր ազդեցություն է ունենում տեսակի լաւանալու և կատարելագործվելու վրայ: Ապրողների օգտակար յատկությունները սերունդների շարունակ անցնում են իրար և աւելի ամուր դրոշմվում. այս հանգամանքը պատճառ կարող է լինել նոր տեսակի կազմվելուն: Այս ձևով կատարել զարգացման ոչ թէ մի գործոն, ինչպէս Լամարկը իւր մետաֆիզիք միակողմանությունեամբ կարծում է, այլ շատ գործոններ կմիանան մեծ հետևանք առաջ բերելու համար:

Այս ընդարձակ վարդապետությունը, որի համաձայն օրգանական զարգացումը արդիւնք է երեք գործոնների, շրջապատի, ընտրության և ձեռք բերած յատկությունների ժառանգականության, զարմանալի կերպով Սպէնսերը ընդունել և պաշտպանել է: Շրջապատի ազդեցությունը ծնում է անհատական տարբերություն-

*) Նորերս սա Դարվինի տեսությունն է ջրում. Ծնթ. գերմ. թարգմանչի:

ներ կամ թէ պրիմիտիվ բաժանումները պրոօօպլազմայի մէջ վեր է ածում միութեան. բնական ընտրութիւնը դրական, լաւացած տարբերութիւնները պահում է և ամրապնդում. վերջապէս ձեռք բերած յատկութիւնների ժառանգականութիւնը կամ կազմութեան զանազան ձևեր ստանալը, շնորհիւ վարժութեան և համակերպման կատարելագործում է անհատներին և տեսակներին: Այս վերջին գործօնը առանձնապէս ազդեցութիւն և առանձին կարևորութիւն ունի բարձր տեսակների և մանաւանդ մարդկային տեսակի համար, որոնց մէջ բնական ընտրութիւնը շատ անգամ թուլանում է շնորհիւ ուժեղ, հակառակ ազդեցութիւնների: Նոր վարդապետութիւնը, որ առաջ եկաւ երկու մեծ անունների գուշակութիւններով, Դարվինի և Սպենսերի, թոււմ էր, թէ կոչուած է կենսաբանական գիտութիւններում, հետեւապէս և սօցիալական գիտութիւններում անվիճելիօրէն իշխանութիւն հաստատելու: Բայց մի բոլորովին տարբեր գիտական ուղղութիւն սկսուեց մօտ 30 տարի առաջ և հետզհետեւ գերակշռութիւն ձեռք բերեց. նա նորից դառնում է հակառակ մտքով կամարկի հին միակողմանիութեանը. նա նկատում է բնական ընտրութիւնը իբրեւ միակ գործօն օրգանական զարգացման համար և վեր յիշուած գործօնները բացասում է կամ նկատում է նրանց իբրեւ լուռ անձնաւորութիւններ կամ պատահական, լուռ դերակատարներ այս խնդրում:

Զարգացման տեսութեան այս նորագոյն շրջանը իւր սկիզբը պարտական է գերմանացի բնագէտ Աւջուստ Վայսմանին. սա ամենից առաջ աչքի ընկաւ հէնց նրանով, որ կտրական ձևով ժխտեց ձեռք բերած յատկութիւնների ժառանգական լինելը, որը ըստ կամարկի կենդանական զարգացման մէջ միակ գործօնն է: Ըստ Վայսմանի ծննդի միջոցով բնածին յատկութիւնները

ժառանգուում են, բայց ոչ այն յատկութիւնները, որոնք գործածութեան կամ վարժութեան արդիւնքներ են: Օրինակ մի գունաւոր մարդու երեխաներ անպայման գունաւոր են լինելու, որովհետեւ բնածին յատկութիւն է և անցնում է յետնորդներին: Բայց մի կաքաւող կամ կաքաւղուհի, որի ոտները շատ գեղեցկացել են երկար պարելու վարժութեան շնորհիւ, այնպիսի որդիներ կունենայ, որոնք անպայման շատ գեղեցիկ արտաքինով ոտքեր չեն ունենայ. կօշկակարը, շնորհիւ իւր նըստած դրութեան առանձնապատկութեան, որի մէջ նա ամբողջ օրն էլ մնում է, սապատաւոր է դառնում, բայց նրա որդին անպայման սապատաւոր չի լինի. ջութակահարի որդին շարժուն մատներ չի ժառանգի անպայման, որոնց իւր հայրը շնորհիւ երկար վարժութեան ձեռք է բերել և այլն, որովհետեւ այս բոլորը ձեռք բերած յատկութիւններ են և այդ պատճառով չեն անցնում յետնորդներին:

Վայսմանը իւր թէզի բացատրութիւնը սկսում է նրանով, որ պնդում է, թէ բոլոր օրգանական էակները երկու իրարից խիստ տարբերուող մասերից են կազմուած. սաղմնային թից (Keimplasma) և մարմնական բրձիճից (Somazelle): Անհատի մէջ, այն ամենը, ինչոր սաղմնային պլազմա չէ, բճիճ է և երկու մասերի մէջ ոչ մի փոխանակութիւն կամ փոխադարձ խառնուրդ տեղի չի ունենում. օրգանական մարմինը ծնելու ժամանակ իւր սեփական սաղմնային պլազմայից տալիս է նոր ծնուածին, բայց ոչ մի մաս իւր սեփական կենսական բճիճից, ուստի հէնց անհատի հետ ոչնչանում են այն բոլոր ձևերը, որոնք ծագում են կենսական բրձիճի մէջ և չեն անցնում յետնորդներին: Այն ձևերը, որ օրգանները ստանում են շնորհիւ վարժութեան կամ ոչ վարժութեան, ուրիշ խօսքով ձեռք բերուած յատ-

կուլթիւնները և սովորոյթները շօշափում են միայն կենսական բճիճին, առանց սաղմնային պլազմային կաշիւութիւնները և միայն բնական ընտրութեամբ են զարգանում: Բայց դեռ բաւական չէ, որ բնական ընտրութիւնը միակ և միայն միակ բացառիկ գործօնն է մնում օրգանական զարգացման մէջ. Վայսմանը պնդում է, որ բացի այդ նա *conditio sine qua non* *) է տեսակի պահպանութեան համար, կամ որ տեսակը չի կարող վատանալ և կենդանական թագաւորութեան աւելի ցածր ձեւերին փոխուել: Եթէ իսկապէս բնական ընտրութեան պրօցցէսը տեղի չունենար, մի սարսափելի երևոյթի հնարաւորութիւն առաջ կգար, որին Վայսմանը ասում է *Panmixis* (ամեն բանի խառնուրդ) և նրա կարծիքով սա կլինէր մի գործօն օրգանական քայքայման և հաւասարապօր մի սարսափելի ալլապուստան: Եթէ չլինէր նաև գոյութեան կռիւը, եթէ գոյութիւն չունենար աւելի լաւ օժտուած անհատների ապրելը և թոյլերի ոչնչացումն, այն ժամանակ նոքա կապրէին և կարող էին միշտ զանազան խմբերի աւելի բարձր էակների հետ զուգաւորուել. այս վերջիններիս լաւ կազմուած օրգանները, փոխանակ սերունդների ընթացքում աւելի քնքշանալու և պահուելու, մի բան, որ կարող էր լինել, եթէ լաւ էակներ իրար հետ զուգաւորուէին, պէտք է նորից աւելի վատանան և մի աւելի պրիմիտիւ ու ցածր ձևի վերածուին: Այս ձևով օրգանները անկարող են ժամանակի ընթացքում կատարելագործուելու. ընդհակառակը, աստիճան առ աստիճան կվատանան, մինչև որ տեսակը նորից իւր նախկին յետափնաց ձևին կդառնայ:

Հասկանալի է, հէնց որ բացասում ենք ձեռք բերուած յատկութիւնների ժառանգականութիւնը, այլ ևս

անկարելի է տեսակների զարգացման մէջ տեսնել այս յատկութիւնների փոխանցումն, ուստի տեսակները միայն և միայն բնական ընտրութեամբ են զարգանում: Բայց դեռ բաւական չէ, որ բնական ընտրութիւնը միակ և միայն միակ բացառիկ գործօնն է մնում օրգանական զարգացման մէջ. Վայսմանը պնդում է, որ բացի այդ նա *conditio sine qua non* *) է տեսակի պահպանութեան համար, կամ որ տեսակը չի կարող վատանալ և կենդանական թագաւորութեան աւելի ցածր ձեւերին փոխուել: Եթէ իսկապէս բնական ընտրութեան պրօցցէսը տեղի չունենար, մի սարսափելի երևոյթի հնարաւորութիւն առաջ կգար, որին Վայսմանը ասում է *Panmixis* (ամեն բանի խառնուրդ) և նրա կարծիքով սա կլինէր մի գործօն օրգանական քայքայման և հաւասարապօր մի սարսափելի ալլապուստան: Եթէ չլինէր նաև գոյութեան կռիւը, եթէ գոյութիւն չունենար աւելի լաւ օժտուած անհատների ապրելը և թոյլերի ոչնչացումն, այն ժամանակ նոքա կապրէին և կարող էին միշտ զանազան խմբերի աւելի բարձր էակների հետ զուգաւորուել. այս վերջիններիս լաւ կազմուած օրգանները, փոխանակ սերունդների ընթացքում աւելի քնքշանալու և պահուելու, մի բան, որ կարող էր լինել, եթէ լաւ էակներ իրար հետ զուգաւորուէին, պէտք է նորից աւելի վատանան և մի աւելի պրիմիտիւ ու ցածր ձևի վերածուին: Այս ձևով օրգանները անկարող են ժամանակի ընթացքում կատարելագործուելու. ընդհակառակը, աստիճան առ աստիճան կվատանան, մինչև որ տեսակը նորից իւր նախկին յետափնաց ձևին կդառնայ:

Panmixis-ի այս պրօցցէսի և նրա քայքայող ազ-

*) Պայման, առանց որի անկարելի է...

դեցուցեալ մասնաւոր արտայայտութիւնները մենք կարող ենք տեսնել ամենասովորական և ծանօթ երեւոյթներում: Օրինակ հում կամ վատ եփած մսով կերակրուող վայրենիները, որոնք չունին իրենց մօտ մերիկական ատամնաբոյժեր, որ նրանց համար լաւ ատամներ կամ կտրիչներ պատրաստեն, պէտք է ունենան անպայման լաւ կտրիչներ, որ հնարաւորութիւն նաեւ անպայման լաւ կտրիչներ, որ հնարաւորութիւն ունենան ապրելու: Այս պատճառով վայրենիներից ներքին են մեռնում, որոնք շատ վատ կտրիչներ ունին, իսկ ապրողները, որոնք լաւ կտրիչներ ունին, ամուսնանում են և որդիներ են ունենում, որոնք նման կամ աւելի ամուր կտրիչներ են ունենում. այս ձևով տեսակի կտրիչը հետզհետէ աւելի կատարելագործւում և ամրանում է: Կրթութեամբ կարող է շատ լաւ ապրել, եթէ նա վատ ատամներ ունի, կամ բնական ատամ բոլորովին չունի, գուցէ նրա համար, որ նորագոյն խոհանոցը մսից կարողանում է կառուցել պատրաստել, որը ծամելու համարեա այլևս կարիք չկայ. կամ գուցէ որովհետեւ այժմ ամեն ոք ամեն ժամանակ երկու քայլից յետոյ արհեստական ատամներ պատրաստող կարող է գտնել. մի ստատիստիկա ցոյց տուեց, որ միայն Անգլիայում տարեկան $1\frac{1}{2}$ միլիոն կեղծ ատամներ են արտադրում: Այս է պատճառը, որ մեր հասարակութեան մէջ լաւ ատամներ ունեցողների հետ կան նաեւ վատ ատամներ ունեցողներ և որ առաջինների և երկրորդների մէջ ամուսնութիւնները հնարաւոր են և երկրորդների մէջ ամուսնութիւնները հնարաւոր են և յաճախակի: Եթէ մի լաւ կտրիչներ ունեցող ամուսնանում է մի վատ կտրիչներ ունեցողի հետ, նա իւր լաւ կտրիչները իւր յետնորդին չի թողնում. այսպիսով կտրիչը միշտ աւելի է վատանում, ինչպէս իսկապէս դժբախտաբար կրթութեամբ հասարակութեան մէջ էլ է, փոխանակ սերնդների մէջ հետզհետէ աւելի կա-

տարելագործուելու, ինչպէս է այս վայրենի հասարակութիւնների մէջ: Այս հանգամանքը, որ այս դէպքում օրգանիզմի միայն երկրորդական մասին է վերաբերում, տարածւում է ամբողջ անհատի կամ նրա կենսական օրգանի վրայ ևս. այսպիսով կարելի է տեսնել, որ քիչ յարմարաւորների ապրելը, որ հնարաւորութիւն է տալիս սրանց լաւ յարմարաւորների հետ ամուսնանալու, առաջ է բերում սերնդի մի սարսափելի փչացումն կամ տեսակի յետադիմութիւն: Հասկանալի է թէ ինչու այդ դիտողութիւնները այնքան մեծ նշանակութիւն են տալի բնական ընտրութեանը, որովհետեւ այլ ևս ոչ թէ սա միակ պատճառն է օրգանական զարգացման, այլ և սա յետակազմութեան կամ տեսակի յետադիմութեան դէմ միակ պաշտպանող միջոցը, միակ նախադրեալն է, թէ ինչու մարդանմանները այլ ևս չեն դառնում մօներանբեր կամ մարդիկ չեն դառնում կապիկներ:

Այս ձևով օրգանական զարգացման տեսութիւնը մի ուղղութեան արժանի շրջան է կատարել: Սկզբում այս զարգացումը նկատուում է իբրեւ մի արդիւնք ձեռք բերուած յատկութիւնների ժառանգականութեան. յետոյ սրա և բնական ընտրութեան. յետոյ իբրեւ միայն բնական ընտրութեան. վերջապէս բնական ընտրութիւնը ոչ միայն զարգացման միակ պատճառն է համարուում, այլ և ընդհանրապէս տեսակի գոյութեան հիմքն է:

Այս ձևով օրգանական զարգացման տեսութեան նոր դրութիւնը սօցիօլօգիայի վրայ մեծ ազդեցութիւն է թողել: Սօցիօլօգիայի հիմքը կենսաբանութիւնը ընդունող նորագոյն սօցիօլօգները շտապում են վայսմանի տեսութիւնը ընդունել և այստեղից էլ մի ուժեղ դէմը պատրաստել մինչև այժմ եղած նշանաւոր և աչ-

քի ընկնող սօցիօլոգների դէմ կռուելու համար: Եթէ ձեռք բերած յատկութիւնների ժառանգական լինելը ընդունենք, ասում են նրանք, մարդկային յառաջադիմութիւնը այս պայմաններում կարելի էր հասկանալ և գոյութեան կռիւը կարելի էր դուրս հանել այս դէպքում. իսկ եթէ ձեռք բերած յատկութիւնների ժառանգական լինելը մերժում է, երբ զարգացման բոլոր գործօնները միայն մի բնական ընտրութեան մէջ են ամփոփւում և երբ սա մի անհրաժեշտ նախադրեալ է տեսակի չոչնչանալուն և չայլասեռութիւն, կենդանի էակների մէջ եղած կռիւը, սարսափելի և արիւնոտ կռիւը և սրա հետևանք անյարմարների ոչնչացումն կլինի պարզապէս անհրաժեշտ պայման սօցիալական զարգացման, այն գինը, որով պէտք է գնուի մարդկութիւնը, յառաջադիմութիւնը և նոյն իսկ նրա ամբողջ հաւասարակշռութիւնը: Անհրաժեշտ է որևէ կերպ սօցիալական մրցումն առաջացնել, չհետևելով կենսական էակների մէջ իշխող կռուին, որը ունի խաղաղութիւն և հանգստութիւն ևս, որովհետև միայն նրանից է կախուած ընդհանրութեան զարգացումն ու կեանքը:

Բնական ընտրութեան այս յաղթանակը ընդունող գրողներից, որոնք մի քանի էական կէտերում իրարից տարբերւում են, պէտք է յիշել Մօրսելիի, Նօվիկովի, Գամպլօվիչի, Վակկարօ և այլն. այստեղ պէտք է առանձնապէս յիշել երկուսին, որոնք այդ նախադրեալներից ամենահամարձակ և աչքի դարնող եզրակացութիւններ են հանել՝ Ամմօն և Կիդդ:

Ամմօնը իւր յայտնի գրութեամբ «հասարակութեան կազմութիւնը և նրա բնական հիմքերը», պնդում է, հետևելով Վայսմանին, բնական ընտրութեան ամենակարողութիւնը և ջանում է ցոյց տալ, որ այս նոյնը մարդկային տեսակի մէջ նոյն ձևով է գործում, ինչպէս

և ստորին տեսակներում: Ինչպէս կենդանիների գոյութեան կռուում, ասում է նա, ուժեղները և լաւերն են յաղթանակում, մինչդեռ վատերը նուազում են և ոչնչանում, նոյն բանն է կատարւում՝ նաև մարդկային հասարակութեան մէջ:—Որովհետև սօցիալական կռուում յաղթողները հարուստները, կապիտալիստները և ունեւեւորներն են, մինչդեռ յաղթողները խեղճերն ու բանուորներն են, Ամմօնը չի քաշւում ապացուցանելու այն զարմանալի թէզը, թէ ուժեղ և հարուստ, թոյլ և աղքատ համանիշներ են. կամ այլ խօսքերով, հարուստները բոլորն էլ տաղանդաւոր և ոգու տէր մարդիկ են, իսկ աղքատները — յիմարներ են: Այս տեսակէտով նա մարդկանց իրենց ընդունակութեան համաձայն դասակարգում է և գտնում, որ նոքա մի երկանդամ կոր գծի (binomishe Kurve) կամ մի շրջանի նման են բաժանւում: Մեծ տաղանդաւոր մարդկանց թիւը սակաւ է, այնուհետև սկսւում է այն մարդկանց թիւը, որոնք հետզհետէ պակաս տաղանդաւոր են, աւելի ու աւելի մեծանալ, մինչև որ հասնում է միջին տաղանդաւորներին, որոնցից ամենից շատ կան. սրանցից պակաս տաղանդաւոր անհատների թիւը հետզհետէ պակասում է, մինչև որ հասնում է ամենաքիչ տաղանդաւորներին, յիմարներին, որոնց թիւը նոյնքան է որքան և հանճարաւորներին: Եկամուտների կորագիծը յիրաւի համապատասխան ընթացքն ունի: Շատ քիչ չափից դուրս հարուստներ, միլիօնատէրեր կան. պակաս եկամուտներ ունեցողների թիւը հետզհետէ մեծանում է, մինչև որ հասնում է միջին եկամուտ ունեցողներին, որոնցից ամենից շատ կան. միջիններից պակաս եկամուտ ունեցողների թիւը հետզհետէ փոքրանում է, մինչև որ հասնում է ամենաքիչ եկամուտ ունեցողներին, պրօլետարիատին, որոնց թիւը նոյնքան փոքր է, որքան և կրէսոս-

ներինը: Այստեղից Ամօնը յաղթանակօրէն եզրակացնում է, որ եկամուտների կորագծեր ըստ ամենայնի համապատասխանում է տաղանդաւորների կորագծին. որ հարստութիւնը բանականութեան անհրաժեշտ մի ապացոյց է, որ ստացուածքը տաղանդի թագն է, որ մարդ այնքան աւելի հարուստ է, որքան աւելի բանական է:

Սակայն հէնց առաջին հայեացքից տարրական դիտողութիւնն անգամ անթիւ կասկածներ է առաջ բերում այդ տեսակ եզրակացութեան վերաբերմամբ: Մի կողմը թողնենք այն, ինչոր կարելի էր ասել նրա պնդած զուգահեռականութեան դէմ ընդունակութիւնների և եկամուտների կորագծի վերաբերմամբ. այդպիսի զուգահեռականութիւն իրականութեան մէջ գոյութիւն չունի. մինչդեռ միջին ընդունակութիւններից ցած տաղանդաւորների թիւը պակասում է, միջին եկամուտ ունեցողներից պակաս ունեցողների թիւը շատանում է. աղքատների թիւը հաւասար չէ հարուստների թուին, այլ շատ աւելի մեծ է: Այնուամենայնիւ այս մի կողմը թողնենք. յիշաւի Ամօնի երկու կորագծերն էլ արժէքաւոր կլինէին, իւր թէզը ապացուցանելու համար, եթէ եկամտի կորագծի մէջ իրար հետևող կէտերում գտնուողները նոյնը լինէին, ինչոր ընդունակութիւնների կորագծի համապատասխան կէտերում գտնուողները. ուրիշ խօսքով, որ իրար յաջորդող եկամուտ ունեցողների դասակարգի անհատները, նոյն անհատները լինէին, ինչոր ընդունակութիւնների համապատասխան դասակարգերում գտնուողները: Ամօնը, աւելորդ էլ է յիշել, որ այսպիսի ապացոյց չի բերում և չի էլ կարող բերել. առանց սրա նրա կորագծերը բացարձակապէս ոչինչ չեն ասում և չեն կարող արդարացնել այն հիմքը, որի շուրջն է պտտում պայքարը: Կարելի է յիշել, որ հեղինակը ինքը իւր մեթոդի անկատարութիւնը զգում

է, որովհետեւ նա տքնում է զանազան ապացոյցների միջոցներ ժողովել: Նա հաւաստիացնում է Կանդօլֆի հաւաքած թուերի հիման վրայ, որ հարուստների ընտանիքները գիտնականների և արուեստագէտների աւելի մեծ թիւ է տուել քան աղքատներինը: Նա պնդում է, որ չափել է մի քանի հարիւր գանգեր աղքատների և հարուստների և գտել է, որ հարուստների գանգերը միշտ խոշոր են: Նախ բանկիրի գանգը շատ ընդարձակ է, որը պարզ ցոյց է տալի, որ նա միւս մահկանացուներից իւր բանականութեամբ գերազանց է: Էլ աւելի բան կարելի է պահանջել: Ամօնը լաւ չափել է հարուստների և աղքատների գլխարկները. այս նպատակով նա շատ գլխարկ կարողների հարցրել է և սրբանք հաւաստիացրել են, որ հարուստների գլխարկները աւելի մեծ են քան աղքատներինը: Էլ աւելի բան պէտք է, որ կարելի լինի աշխարհիս բոլոր բանուորներին անշնորհքութեան և բուրժուազիային բանականութեան մի վկայական տալ: Այսպէս Ամօնը եզրակացնում է, որ բոլոր հարուստ անձնաւորութիւնները տաղանդաւոր են, իսկ աղքատները—յիմարներ են: Ուրեմն մարդկային հասարակութիւնը իւր կազմութեամբ և իւր սփական զարգացմամբ խիստ կերպով ենթարկւում է կենսաբանական բնական ընտրութեան օրէնքին. այստեղ յաղթանակում են լաւերը, ուժեղները և նրանց յաղթանակը յառաջադիմութեան միակ գործօնն է և կարևոր պայմանը:

Բայց մակերևոյթային դիտողութիւնն անգամ բաւական է հակաձառելու ունեւոր դասակարգի առաջնութեանը, որը Ամօնը այնպէս որոտընդոստ, իբր մի տիեզերական մարդաբանական օրէնք է յայտարարում: Ի նկատի չունենալով նոյն իսկ այդ թէզի բոլորովին հակառակի պաշտպանութիւնը այնպիսի աչքի ընկնող

գրողները կողմից, ինչպիսին է Ադամ Սմիտը և նորերս էլ Բիւսները. պէտք է ընդունել, որ հարուստները հարուստ են ոչ թէ նրա համար, որ նրանք աւելի բանական են, այլ ամենաշատը, որ նրանք բանական են, որովհետեւ հարուստ են. պարզ է, որ այս թէզը աւելի ճշմարտութիւն ունի իւր մէջ, քան Ամմօնի ձեւակերպածը: Այս ապացուցանելու համար բաւական է այն դրութիւնը, որով մեր հեղինակը մեծ բաւականութեամբ զբաղուած է, այսինքն, որ առաջնակարգ և հարուստ ընտանիքները բացարձակ և յարաբերական չափերով գիտնականների և արուեստագէտների մեծ թիւ են տուել: Այսպիսի դրութեան հիմքը պարզապէս այն է, որ ունեւոր ընտանիքները միայն կարող են իրենց որդոց ազատ արուեստի համար պահանջուելիք կրթութիւնը տալ. այսինքն տաղանդը հարուստի տաք, ճոխ տան մէջ կարող է զարգանալ, եթէ ոչ տաղանդը, գոնէ տաղանդի բացուիլը. այս բանը ունեւորութեան ազդեցութիւնն է և ոչ թէ պատճառը:

Ինչքան աչքի ընկնող գրողներ իրենց գիւտերը պարտական են միայն և միայն իրենց լաւ կազմած բօրսային: Լեւերիբը իւր աստիստենտների (օգնականներ) բոլոր նոր գիւտերը աստղանմանների (ծովային կենդանիներ) վերաբերմամբ սխտեմատիկ կերպով իրեն է սեփականացնում. երբ այս բանի դէմ բողոքեցին, ցինիկօրէն պատասխանեց, որ այդ իւր արդար սեփականութիւնն է, որովհետեւ իւրաքանչիւր նոր գտած աստղանմանի համար 1000 ֆրանկ է վճարել: Միւս կողմից բաւական է մօտից ծանօթանալ մասնաւոր սեփականութեան պատմութեան հետ, որպէս զի անխնայ դատի հրաւիրուել այն թէզը, որի համաձայն հարստութիւնը բարձր բանականութեան հետեանք է և վարձատրութիւն: Այստեղ միայն մի օրինակ կրե-

րեմ: Մի հնգկացի ստրուկ, որը Սիվայի (աստուած) տաճարում պահապան էր նշանակուած, զիշերը կտորեց խոշոր յակինթներից մէկը, որոնք աստծու աչքերն էին, փախաւ Ասիայով, իւր հետ ունենալով թանգագին քարը, անցաւ ռուսական սահմանը և հասաւ Պետերբուրգ, որտեղ նրան յաջողուեց Եկատերինա կայսերուհուն վաճառել յակինթը մէկ միլլիօն ռուբլով: Այս մարդը ռուսական յայտնի ընտանիք Լազարեանների հիմնադիրն է: Այժմ հարցնում եմ, թե՞ այստեղ այն տաղանդը, որ ստեղծեց հարստութիւն: Ո՞վ կհամարձակուի ժխտել, որ այս դէպքում ոչ թէ տաղանդը, այլ գողութիւնն է ստեղծել հարստութիւն: Ի՞նչքան հեշտ է նման օրինակների թիւը շատացնել և եզրակացութիւնը ընդհանրացնել:

Ամմօնը շարունակում է, թէ՛ եթէ հասարակութեան բնական կազմութիւնը ըստ ինքեան յարմարագոյնների և լաւերի յաղթանակն է որոշում, սրանով չենք ուզում ասել, որ նոյն հետեանքին չի կարելի հասնել կամ նպատակ դնել նոյն հետեանքը մարդկանց խելացի ջանքերով: Ընդհակառակը, երբ հասարակութեան զարգացումն ու հաւասարակշռութիւնը ուժեղանալի, այսինքն հարուստների յաղթանակից է կախուած, պետութիւնների կազմակերպութիւնը նախ պէտք է այն կողմը ուղղուած լինի, որ նրանց (հարուստների) թիւը շատանայ. (աւելի խիստ միջոց, քան մի քանի կենսաբանական ազդեցութիւններ միասին գործում են, որպէսզի նրանց (աղքատների) ոչնչացումն արագացնի). նրանց յաղթանակին նպաստել և արագացնել այն և ամեն կերպ յետաձգել և աղքատ դատակարգի ոչնչացումն առաջ տանել: Ամմօնը չի քաշուում մի շարք այս նպատակին ուղղուած այսպիսի միջոցներ առաջարկելու:

Առաջին միջոցն է այս նպատակին հասնելու համար, ասում է նա, խիստ ծանր հարկեր դնել գործածութեան անհրաժեշտ առարկաների վրայ, որը հարուստ և բարձր դասակարգին չի վնասի, իսկ աղքատ ժողովրդի վրայ կծանրանայ: Միաժամանակ պէտք է պետական և հասարակական թղթերի շրջառութիւնը շատացնել, որովհետև այդպիսով այն արտօնեալ դասակարգի թիւը կշատանայ, որը իւր ուրախ գոյութիւնը կուսկոն կտրելու և ճշմարտութեան մասին դատարկ դիտողութիւններ անելու մէջ է անցկացնում: Պետութիւնը պէտք է պրօլետարիատին վարչական և քաղաքական ձայնի իրաւունքից զրկէ, որովհետև նրանք քաղաքացիական հասարակութեան մէջ ամենայնաւորաց և աղտոտ տարրերն են: Պետութիւնը պէտք է միևնոյն աստիճանի անհատների ամուսնութեանը նպաստի. սրանով լաւերի ընտրութեանը և նրանց ընդհանուր յատկութիւնների յառաջադիմութեանը նպաստած կլինի և կենսաբանական Panmixic (ամենախառնուրդ) դժբախտութիւնից խոյս տուած կլինի: Այս դեռ բաւական չէ: Պէտք է գովել ցեղերին հալածելը, որովհետև հալածանքը միշտ և անխալ ուղղուած է լինում ցածր ցեղերի դէմ և վերջիններս ոչնչացնումն առաջ բերել: Պէտք է գովաբանել պատերազմը, որովհետև պատերազմը միշտ թոյլերի ոչնչանալովն է վերջանում, ըստ Ամմօնի յիշաւի պատերազմի դաշտում ընկնում են պակաս յարմարները և անընդունակները, իսկ ազնուականներին և ճարպիկներին միշտ յաջողում է իրենց ազատել: Ի՞նչպէս կլինէր, եթէ յիշաւի ուումը, որ կռուողների ամբողջ շարքը ջնջում է, իւր գոհերի մէջ ընտրութիւն անել կարողանար: Ի՞նչ կլինէր, եթէ մի ծանր աստուածային պատիժ չլինէր, որ Իտալիայի գեղեցիկ ծաղիկ Գօտֆրիդ Մամբլին, անընդունակներ

րի և յետաճանցների թուին պատկանէր և մեր քաջ զօրավարները, որոնք Աբբա Գարիմայի մօտ եղած պատերազմից միայն փախուստով մահուանից ազատուեցին, իբրև գերմարդիկ կամ ընտրեալ ոգիներ նկատուէին: Պարզ է, որ այս օրինակները բերելը ըստ ինքեան նշանակում այդ թէզը ջրել:

Աւելի փառաւոր հետեութիւններ է անում Կիդդը, իւր հռչակաւոր գրքում սօցիալական զարգացման վերաբերեալ, որոնց հանում է Վայսմանի վարդապետութեան հետեւելով: Որովհետև սօցիալական ազգրէզգատի զարգացումը կամ մնայուն դրութիւնը, ասում է այս հեղինակը, չի կարող տեղի ունենալ, եթէ չլինի բնական ընտրութիւնը կամ գոյութեան կռիւը, պարզ է, որ անհատի և հասարակութեան շահերի մէջ մի մեծ հակասութիւն կայ, որովհետև վերջինիս յառաջադիմութիւնը ապահով է միայն այն ժամանակ, երբ բազմութեան դժբախտութիւնն ու ոչնչացումն է տեղի ունենում. աւելի ևս յետ գնալուց խուսափելու համար, պէտք է մի սարսափելի կռիւ անհատների մէջ: Երբ մարդկային հասարակութիւնը այսպիսով ամենաբարձր զարգացման, նոյն իսկ ազատ մրցութեան իշխանութեան տակ հաւասարակշռութեան դրութեանն է հասնում և այսպիսով ամենամեծ խթանն է տրուում գոյութեան կռուին, անհատները կամ նրանց մեծ մասը սօցիալիզմը ընդունելու մէջ իրենց շահը կտեսնեն, որով ամեն տեսակ գոյութեան կռիւ a priori կվերջանայ: Այս պատճառով մարդկանց մի սարսափելի բազմութեան խելք խորհուրդ կտար ստեղծել սօցիալական մի այնպիսի դրութիւն, որը մարդկային տեսակի գոյութեան յառաջադիմութեան հետ չէր կարող միանալ: Միւս կողմից սօցիալական կռոււմ յաղթողները իրենց սեփական շահից կարող են տարուել, իրենց յաղթութիւնը ի չարը

գործ դնել կամ այդ, ընդդէմ նուաճուած անհատներին, խստացնել. մի բան, որ պարզապէս նրանով կ'վերջանար, որ վերջիններս կապտամբէին և հասարակութեան կազմալուծման պատճառ կ'զառնային: Այս տեսակէտից էլ խելքը մարդկանց առջնորդում է հակասօցիալական գործողութիւններին: Երբ միայն խելքը մարդկանց իրենց տեսակի համար վնասակար գործողութիւններ է առաջ բերում, պարզ է, որ այլ հնարաւորութիւն չկայ նրանց այն բանին ըհրելու, որ այս գործողութիւններից յետ մնան, քան այն, որ մարդ դիմի այնպիսի պատճառներին, որոնք խելքից դուրս են, որ բանականութիւնից շատ այն կողմը գտնուող մի սանկցիայի դիմի: Այս բանականութիւնից շատ այն կողմը գտնուող սանկցիան, մի աննման ոյժի տէր, կրօնից կարելի է ստանալ, որը հասարակութեան վնասակար գործողութիւններին ընութիւնից վեր պատժով սպառնալով, մարդկանց յետ է կասեցնում դրանցից և այս ձևով կեանքի եղակի այն ձևն է ապահովում, որը ամենից աւելի է համապատասխանում սօցիալական զարգացման ինքնարուխ օրէնքներին: Կրօնն է այս պատճառով մարդկային ազգրէգատի հիմնական կապը, այն նախատեսուած ոյժը, որը նպաստում է հասարակութեան շարունակ բարձրանալուն, որը միայն կարող է նրան այլասեռումից և ոչնչանալուց ազատ պահել: Ուստի չպէտք է զարմանալ, որ կրօնական զգացումը օր ըստօրէ ուժեղանում է և հէնց այն հասարակութիւններն են ամենից ծաղկած և ճկուն, որոնց մէջ ամենից շատ կրօնն է գնահատուած: Այս ձևով Կիդդը դալիս է Բօկլին բոլորովին հակառակ եզրակացութեան. մինչ վերջինս բարոյականութիւնը մի անշարժ բան էր համարում և բանականութեան մէջ էր տեսնում մարդկային զարգացման լծակը, Կիդդը

խելքը և բանականութիւնը հասարակութեան զարգացման խոչընդոտներ է համարում և պնդում է, որ այս բացառապէս բարոյականութեան և կրօնի բարեբար ազդեցութիւնից է կախուած:

Ինչպէս երևում է Կիդդի գրուածքում կենսաբանական հասարակական տեսութիւնը մի շատ մեծ և ընդգրկող նշանակութիւն և գործադրութիւն է գտնում և վերջանում նրանով, որ հեշտ կերպով լուծում է վերին աստիճանի դժուար խնդիրները կամ աւելի լաւ ասած մեր ժամանակի երկու ամենադժուար պրօբլէմները—սօցիալիզմի և կրօնի: Անօգուտ է, ասում է Կիդդը, սօցիալիզմի դէմ կռուել յանուն բարոյական կամ տնտեսական իդէանների, որովհետև այս դաշտում միշտ կ'յաղթուենք: Անօգուտ է իլլիւզիաներ կազմել. սօցիալիզմը մարդկային ցեղին կտայ մի այնպիսի բարոյական, տնտեսական և քաղաքական կազմութիւն, որը անպայման շատ աւելի բարձր կ'լինի նրանից, որը ահաւոր և թանգ կապիտալիստական ռէժիմն է տալի: Բայց մենք կարիք չունինք սօցիալիզմը շրելու համար բարոյական կամ տնտեսական ապացոյցների դիմելու, քանի որ արդէն կենսաբանութիւնը անդառնալիօրէն դատապարտել է այն, որովհետև դրանով կ'վերջանար գոյութեան կռիւը, բնական ընտրութիւնը կ'ընկճուէր, որը տեսակի գոյութեան և հաւասարակշռութեան ամենազլխաւոր պայմանն է. որովհետև նա անպայման առաջ կ'ընկէր քաղաքացիական հասարակութեան կազմալուծումն ու նրա յետ գնալը պրիմիտիվ և բարբաբոսական համայնակեցութեան ձևերին: Ոչ պակաս անօգուտ է կրօնը յանուն յայտնութեան կամ դաւանաբանութեան պաշտպանել, մի բան, որ կստիպէր յաղթանակողի չափազանցութիւնների դիմել օր օրի վրայ. քանի որ կրօնը իւր անվիճելի արդարացումն է գտնում

կենսաբանական հետախուզումների մէջ. ըստ այսմ կրօնը մի անհրաժեշտ դրութիւն է, անհատից սօցիալական ազդէրէզատի պահանջած փառաւոր կենսական պահանջները կանոնաւորելու համար: Այս պատճառով կենսաբանութիւնը կարողանում է լոկ խօսքեր կազմող տեսութիւնները ջնջել և կրօնական հաւատքը ամրապնդել: Ինչ զարմանալի հետեանքների կարելի է հասնել բնական գիտութիւնների չոր ու ցամաք հետախուզութիւններով:

Բայց Կիդդի այս կենսաբանական—սօցիալական կազմակերպութիւնը, որը առաջին հայեացքից բաւական գրաւիչ է, իրապէս մի շարք պնդումներ ունի, որոնցից մէկը միւսից աւելի սխալ է: Միայն է այն ապահովացում, թէ սօցիալիզմը գոյութեան կռուին վերջ կտայ: Իսկապէս տնտեսութեան սօցիալական կազմակերպութեան դէպքում գոյութեան կռիւը կդադարի առաջումը լինելուց. առաջին անգամ մի ազատ և լրիւ ասպարէզ կբացուի նրա համար. սօցիալիզմի շնորհիւ անհատները կսկսեն իրենց ընդունակութիւնների ամբողջութեամբ կռուի դուրս գալ, այլևս ժամանակակից սեփականատիրութեան խանգարող օրէնքների շնորհիւ չի խառնուի և չի խանգարուի: Երբ մի անգամ պարզուեց, որ սօցիալիզմը գոյութեան կռուին չի ձնշի, ըստինքեան սխալ է, որ նա ուրեմն անկարող է ապահովել հասարակութեան հաւասարակշռութիւնը և որ այս պատճառով անհատների կամ մի ահազին բազմութեան շահերը, ստեղծել մի մի սօցիալիստական կազմութիւն, անխուսափելի հակասութեան մէջ կլինի համայնական կեանքի շահերի հետ: Երբ բացասում է, որ կարող է մի մշտական երկպառակութիւն լինել անհատի և ընդհանուրի շահերի մէջ, այլ ևս սխալ է խելքից դուրս մի սանկցիայի դիմել, որ մարդկանց ստի-

պենք, որ հասարակութեան պահանջներին համեմատ ապրեն: Կարիք չկայ իսկ յիշելու, թէ մի տեսութիւն, որը կրօնական սանկցիայի խնդիր է դարձնում—մարդկանց միշտ ձնշել, իրենց սեփական շահերի դէմ գործել, այն եզրակացութեան է հասնում, որը ամեն մէկի համար, ինչպէս և Կիդդի, որի սրտին մօտ է կրօնի յայտնութիւնը, միայն հանգստացուցիչ է: Իսկապէս անհնարին է, որ մարդիկ այդպիսի մի տարօրինակ ցնորքի զոհ դառնան կամ որ մինչև վերջն էլ կրօնական պատուէրների գրաւչութիւններից ազդուած այնպիսի գործողութիւններ կատարեն, որոնք յիշաւի իրենց իսկական օգտին հակառակ են: Ուստի եթէ յիշաւի ըստ Կիդդի հայեացքի կրօնը աւելի բան չէ, բայց եթէ մի խաբէութիւն մարդկանց համար, որը նրանց ստիպում է իրենց սեփական օգտին հակառակ գործել, պարզ է, որ անխուսափելի է այն հետևողութիւնը, թէ նա միայն մի անցողակի դրութիւն կարող է ունենալ կամ որ նա կարող է գոյութիւն ունենալ անգիտութեան կամ բարբարոսութեան ժամանակ և որ նա անպայման կվերջանայ, հէնց որ մարդու նոր բացուող բանականութիւնը կպարզի նրան իւր դրական օգուտը և վերջինից առաջացած կենցաղավարական ձևը:

Միւսներից աւելի շատ խճողուած և սխալ են այն կենսաբանական նախադրեալները, որ Կիդդը նոյնքան ջանասիրութեամբ, ինչպէս և Ամմօնը և այս դրպրոցի բոլոր գրողները, հանել է և անկանոն կերպով հիմք է ծառայեցրել իւր բացատրութիւնների համար: Յայտնի է, որ Վայսմանի տեսութիւնը ձեռք բերած յատկութիւնների ժառանգական լինելու մասին այժմ խիստ դիտողութիւններով և փորձերով ջրուել է և որ հէնց ինքը, տեսութիւն տուողը, վերջին ժամանակներս ստիպուած էր մի շարք կրճատումներ և թուլա-

ցումներ անել, որով և իւր ուսմունքը մեծ մասամբ թուլացրել է: Այստեղ տեղը չէ այդ հակասութիւնները մէկ առ մէկ ապացուցանել, բայց կարեւոր է կցել, որ ձեռք բերած յատկութիւնների ժառանգական լինելը ամենից աւելի որոշ կարելի է ցոյց տալ մարդկային ցեղի մէջ: Յայտնի է, որ, օրինակ, մօնղոլները, որոնք ծնւում են ծուռ ոտքերով և ծուռ իրանով, այդ բանը պարտական են նրան, որ ամեն օր արշաւում են, մի բան, որ այս անդադրում նօմադ ցեղի մէջ դարեր է տեւում: Նոյնիսկ զանազան ժողովրդների և ժամանակների օրէնսդրութիւնները լուեւայն ընդունել են ձեռք բերած յատկութիւնների ժառանգական լինելը: Օրինակ ուշադրութեան արժանի է, որ հնդկական կաստաների կարգը կամ միջնադարեան համբարներինը, որով որոշուած էր, որ որդին իւր հօր արհեստն է ունենալու, լուեւայն այն մտքից էր ելնում, որ այն օգտակար օրգանական փոփոխութիւնները, որ հայրը շնորհիւ իւր արհեստի մէջ կրկնուող վարժութիւնների ձեռք կբերի, որդի ունենալով, նրան կտայ և որդին այս աշխատանքի համար առանձնապէս պէտքական կլինի: Այսօր էլ անգլիական ադմիրալիտէտը ծովագնացութեանը վարժուելու համար նախապատուում է ծովագնացների որդոց, որովհետև փորձը ցոյց է տուել, որ այն ֆիզիքական յարմարութիւնը, որ նրանք ծննդից ունենում են այս կոչման համար, նրանց առանձնապէս յարմար է դարձնում: Այս բոլորը ևս հակասում է այն ուսմունքին, որի համաձայն ձեռք բերած յատկութիւնները ժառանգական չեն: Անպայման մենք չենք կարող մեր հզրակացութիւնը մի հաստատումն համարել, թէ ձեռք բերած յատկութիւնները միշտ և ամեն դէպքում ժառանգական են, մի բան, որ եթէ ճիշտ լինէ՝ կհասցնէր այն բանին, որ մարդկային ցեղը մի իրարից խիստ

բաժանուած կաստաների մէջ կբարանար: Ոչ, որդին դատապարտուած չէ անողոր բնական օրէնքից հօր կենցաղական դրութիւնը ունենալու, շատ անգամ նրան յաջողում է շնորհիւ իւր տաղանդի և ջանասիրութեան իւր ծնողի գործունէութեան սահմանները փշրել և մի աւելի բարձր դիրքի հասնել: Լիւտերը մի լեռնային աշխատաւորի որդի էր, Կանտը մի թամբագործի, Գիօտտօն—մի հովուի. օրինակներ, որոնք բողոքում են այս անմխիթար տեսութեան դէմ, որի համաձայն ճակատագրական ժառանգականութիւն կայ: Եթէ ընդունենք էլ այս բոլորը, պէտք է խոստովանել, որ շատ անգամ ձեռք բերած յատկութիւնները յաջողներին են անցնում, ուստի Վայսմանի ամենից մեծ օրէնքը մարդկային ցեղի վերաբերեալ անգործադրելի է:

Ոչ պակաս սխալ է և ցնորական Panmixis-ի հետեանքի չոր նկարագրութիւնը, որով Վայսմանը բաւական ժամանակ մարդկանց սարսափեցրեց: Որ այդ սխալ է, բաւական է մատնանիշ անել այն հանդամանքը, որ գոյութեան կռիւը բոլոր ապրողներից շատ քիչ մասին է միայն ընկճում և որ այս պատճառով բոլոր տեսակներում էլ, մանաւանդ մարդկանց մէջ քիչ ուժեղներից շատերը կամ շատ թոյլերը ապրում են: Այստեղից հետևում է, որ Panmixis-ը շատ հեռու է մի բացառիկ երևոյթ լինելուց, որ նա անընական և հիւանդոտ պայմաններում կարող է իրականանալ, որ Panmixis-ը մի երևոյթ է, որ ամեն վայրկեան իրականանում է և ամեն կենդանի էակ իրականացնում է: Եթէ այս պատճառով Panmixis-ը յիշաւի այն դժբախտ հետեանքները առաջ բերէր, որը ենթադրում է Վայսմանը, պէտք է բոլոր տեսակները անմխիթար խեղումներին մի պատկեր ներկայացնէին և յետ գնալը օրգանական բնութեան տիեզերական օրէնքը պիտի լինէր:

Դրան հակառակ յարմար է գալի բոլորովին հակառակը, որ Վայսմանը ինքը ընդունում է, որովհետև կեանքի բոլոր արտայայտութիւններում մի միշտ զարգացման տանող բարեբար օրէնք է իշխում:—Աւստի այն բոլոր կենսաբանական տեսութիւնները, որոնց վրայ հիմնում են նորագոյն սօցիօլոգները իրենց պնդումները—շատ պահանջկոտ և շատ կարևոր պնդումներ—աւելի քան սխալ են և ժխտելի: Երբ հիմքերը քանդուած են, կենսաբան-սօցիօլոգների վարպետօրէն շինած կառուցուածքը խորտակւում է, թողնելով միայն թշուառ բեկորներ:

Երկու գրողների օրինակը, որոնց առանձնապէս շատերը ծանօթ են և որոնց ևս ընտրել եմ, պէտք է խրատ լինի և իզգուշութիւն ծառայի. պէտք է զգուշացնել, որ մեր սեփական ձեռքերով կենսաբանական աստուածութիւններ չստեղծենք, որոնք յաճախ ֆէտիշից աւելի բան չեն, որոնց համար առանց խելքի և քննադատութեան ի հաշիւ մեր իմացականութեան երկրպագութեան բեմեր են շինում: Անպայման իւրաքանչիւր գիտութեան պարտքն է, օգտուել միւս գիտութիւնների ձեռք բերած արդիւնքներից, բայց այն ժամանակ միայն, երբ վերջիններս լաւ ապացուցուած են և ոչ այն ժամանակ, երբ սրանք ոչ բոլորովին հիմնաւոր տեսութիւններ են: Չմոռանանք, որ նոյնիսկ Դարվինի տեսութիւնը շատ հեռու է մի անժխտելի ճշմարտութիւն լինելուց: Յիշենք, որ 4000 տարի առաջ եգիպտական սիւնների վրայ քանդակուած մարդկային դէմքերը, որոնք շատ նման են մեր ժամանակի դէմքերին, խիստ ծիծաղելի են դարձնում նոր կենսաբանների բոլոր այն ձգտումները, որոնց նպատակն է ապացուցանել, որ կենդանիների զարգացման օրէնքները մեր տեսակի զարգացմանն էլ համապատասխանում են:

Յիշենք քաջարի սօցիօլոգների՝ Կօլայեանի, Տարդի և շատ ուրիշների նախազգուշացումն չանել շտապովի սօցիօլոգիական ներածութիւններ խակ կենսաբանական նախադրեալներից:

Առանձնապէս պէտք է յիշել Ֆիզիքական և կենսաբանական գիտութիւնների երկու ներկայացուցիչների խօսքերը, որոնց վերաբերմամբ կասկածել անգամ անկարելի է, որ նրանք այդ գիտութիւններից ձեռք բերած արդիւնքները կամ նրանց մատուցանելիք ծառայութիւնը սօցիօլոգիայի համար փոքրացնեն: Պէրզոն, Լօնդոնի համալսարանի գործնական մատեմատիկայի ուսուցչապետ և արքունական ընկերութեան անդամ, վերջերս հաւաստիացնում էր, որ օրգանական զարգացման տեսութիւնը դեռ չի հասել այն քանակական և որոշակի արտայայտութեանը, որը միայն կարող է նրան հասցնել գիտական ճշմարտութեան պատուին և այն սօցիօլոգները ուրեմն, որոնք նրա վրայ են հիմնում իրենց ուսմունքը, աւազի վրայ են շինում իրենց կառուցուածքը: Համարեա թէ նոյն ժամանակը նախազգուշացնում է սօցիօլոգներին. Գրասսին Հոոմի համալսարանի համեմատական անատոմիայի ուսուցչապետ, որը յայտնի է իւր մալարիայի վերաբերեալ գիտերով, այն վատ սովորութիւնից, որ Ֆիզիօլոգիական և կենսաբանական տեսութիւնները, որոնք ոչ այլ ինչ, բայց եթէ փորձեր, տեսութիւններ և կասկածներ, որոնք դեռ ճշմարտութիւնից և ապացոյցներից զուրկ են, իրը անպայման հիմքեր չծառայեցնեն սօցիալական ուսմունքների կամ փիլիսոփայական սիստեմաների համար: Թող այս իմաստալի զգուշացումները երկու տարբեր, բայց հաւասարաշափ աչքի ընկնող աղբիւրներից ելած սօցիօլոգիային ուղիղ կարողանայ պահել այն թեքութեան վրայ, ուր բարձրացել է նա անզգու-

շօրէն և որով նրա շատ բան բովանդակող խոստումնե-
րի լրացումն է վտանգւում կամ որը սպառնում է
նրան ընդ միշտ յուսախաբել:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԵՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Տեստետութիւնը իբրեւ հիմք սօցիօլօգիայի

Սովորաբար մի երևոյթ թէ և իւր սահմանային դը-
րութեան մէջ էլ յայտնւում է, իսկապէս միայն այն
ժամանակ է բացւում, երբ երևոյթը կատարեալ դար-
գացման և փառաւոր մեծութիւնների է հասնում, այն-
պէս որ առաջին իսկ հայեացքից նկատելի է լինում:
Այս տեսակէտից մի զարմանալի օրինակ է օրգանա-
կան զարգացման օրէնքը, որը ամենայն յաջողութեամբ
մեր և քրոջական երկնակամարի տակ կարող էր գըտ-
նուել, քանի որ այս երկնակամարին է յատուկ, բայց
իսկապէս առաջին անգամ թէ Դարվինը թէ Վօլօսը
նոր աշխարհի սահմաններում են գտնում, որտեղ կեն-
դանական աշխարհը և հարուստ է և բազմակողմանի:
Հարկաւոր է որոշ, մտքին հասանելիութիւն և միծու-
թիւն, որ մի երևոյթ մեր մտքի վրայ տպաւորութիւն
թողնել կարողանայ, որ հնար ունենայ մեր ուշադրու-
թիւնը գրաւելու և մեր ուսումնասիրութեան առար-
կան դառնայ: Եթէ մի երևոյթի վերաբերեալ տեսու-
թիւն իւր ապացոյցները հէնց այնտեղ կարողանայ
գտնել, որտեղ նա սահմանափակ է և պարզ, այնուա-
մենայնիւ այդ երևոյթին ուշադրութիւն գրաւող գրգի-

ռը այնտեղ է արժէքաւոր դառնում, ուր երևոյթը մեծ
և զարգացած չափեր է ընդունում:

Այս դիտողութեան համար հիանալի ապացոյց է
սօցիօլօգիայի պատմութիւնը կամ նրա փայլուն դէպքը
— սօցիալական երևոյթների տնտեսական հիմք գըտ-
նելը: Տեսականօրէն այս դիւտը հնարաւոր էր պատ-
մական ամեն մի ժամանակում էլ տրամաբանութեան
պարզ օգնութեամբ և տարրական դիտողութեան շնոր-
հիւ: Սակայն դարեր շարունակ տեղ մի շրջանում,
երբ տնտեսական յարաբերութիւնները մի տեսակ յետ
էին մղուած և ծածկուած էին, երբ աննշան ինդուստ-
րիան և յետամնաց հողագործութիւնը հանդարտութեան
և խաղաղութեան մէջ քաշ էին տալի իրենց գոյութիւ-
նը, դեռ մարդ չգիտէր սօցիալական դրութեան տնտե-
սական հիմքերը և փնտցել էր այնտեղ, որ ամեն ինչ
կապւում էր բանականութեան կամ կենսաբանական
գործօնի ազդեցութեան հետ: Անկասկած անցնալուսն
էլ եղել են մտածողներ, որոնք այս ճշմարտութիւնը
արտայայտել են. յիշենք նախ հներից Արիստոտէլին.
աւելի նորերից Հառոինգտօնին, նորագոյններից Ռօ-
մայնօլիին, որոնք շատ թէ քիչ փայլուն կերպով յայտ-
նել են, որ հասարակութեան ամբողջ դրութիւնը կա-
խուած է քաղաքատնտեսութեան դրութիւնից: Սակայն
այս բոլորն էլ միայն անշատաւի պնդումներ են, ո-
րոնք չեն հիմնաւորուել ընդհանուր ընդունելութեամբ
և չեն ունեցել գիտական ապացոյցներ. պնդումներ, ո-
րոնք ծնուելով արդէն խեղդուել են շնորհիւ մի բոլո-
րովին տարբեր փիլիսոփայական մտածողութեան:
Միայն նոր ժամանակի արշալոյսին, երբ ինդուստրիան
և կապիտալիզմը չնախատեսուած ծաւալ ստացան,
ծաղկած ձեռնարկութեան և մասնաւոր սեփականու-
թեան լայնածաւալ վարկը ծայրահեղութեան հասաւ և

երբոր այս բոլորն էլ իրենց ոյժը ազգերի վերաբերմամբ հրապարակով և բազմիցս ապացուցին, միայն այն ժամանակ հասկանալի եղաւ, որ պետութիւնների քաղաքականութիւնը, պատմական մեծ հայեցակէտերը և ընդհանուր բարոյականութեան հիմնական ուղղութիւնը ոչ միայն մտքից աւելի բարձր սօցիալական իդէաներից են նախորոշուում, այլ որ նոքա դուրս են գալի տնտեսական յարաբերութիւնների պրօգնայիկ հիմքերից:

Եւ ինչպէս էլ որ պէտք էր սպասել, այս ճշմարտութիւնը առաջին անգամ ճանաչուեց և պարզ արտայայտուեց այն երկրում, որտեղ նորագոյն տնտեսական յարաբերութիւնները ամենից առաջ աւելի ազդու և հրաշալի զարգացումն ունեցան, այսինքն Անգլիայում: Իսկապէս Մարքսն ու Էնգէլսը Անգլիայում աքսորականներ էին, որոնց Մեծ Բրիտանիայում երկար մնալը պատճառ եղաւ մօտից ծանօթանալու ժամանակակից կապիտալիզմի ամենազօրութեան և գաղտնի օրէնքների հետ. նոքա էին, որ առաջին անգամ սօցիօլօգիական ճշմարտութիւնը փայլուն և որոշ կերպով արտայայտեցին: Մարքսը իւր «Քաղաքատնտեսութեան բննադատութիւն» գրքի յառաջաբանում, 1859 թ. լոյս ընծայած, մի կլասիկ եղբակացութիւն է տուել. «Կեանքի հասարակական արտադրութեան մէջ մարդիկ կատարում են որոշ, անհրաժեշտ, իրենց կամքից անկախ շրջաններ, արտադրութեան շրջաններ, որոնք նրանց նիւթական արտադրող ոյժերի որոշ զարգացման աստիճանին են համապատասխանում: Արտադրող դրութիւնների ամբողջութիւնն է հասարակութեան կազմը, այն իրական հիմքը, որի վրայ բարձրանում է մի իրաւական և քաղաքական վերնաշէնը և որին համապատասխանում են որոշ հասարակական գիտակցութեան

աստիճաններ: Ընդհանրապէս նիւթական կեանքի արտադրութեան ձևով է պայմանաւորուում սօցիալական, քաղաքական և հոգևոր կեանքի պրօցէսը»: Նոյն բանը կրկնում է Էնգէլսը մի քանի հետաքրքիր գրուածքներում: Եթէ երկու գրողների համար ընդունենք այն պատիւը, որ սօցիօլօգիայի մէջ առաջին անգամ նոր ուղղութիւն մտցրին, այնուամենայնիւ քիչ կլինենք ասած, որ նրանք աւելի շուտ մի դօգմա են տուել, քան մի լուրջ և դրական ապացոյց այդ բանի համար: Նոքա բացարձակապէս մի կողմն են թողել իրենց թէզի տրամաբանական արդարացումն և նախադասել են յամաօրէն այդ բանը աքսիօմաների մի անընդունելի պատնէշի տակ շրջափակել: Անցողակի ասենք, որ այս է նոր սօցիօլօգիական դալոցի գլուխների տարբերութիւնը կամ էական թուլութիւնը համեմատած քննութեան առնուած նախկին ուղղութիւնների հետ: Իսկապէս Սպէնսէրը և Կօնտը չեն բաւականանում նրանով, որ պնդում են, թէ սօցիօլօգիայի հիմքը բանական է կամ կենսաբանական, այլ եռանդով աշխատում են ապացուցանել: Մարքսը և Էնգէլսը նման ոչինչ չեն փորձել անել, որոնք նոյն ձևով պնդում են, որ սօցիալական կազմութեան հիմքը տնտեսական դրութիւնն է, նոյն ձևով ամեն ըոպէ կրկնում են, որ քաղաքատնտեսութիւնը մարդկային հասարակութեան անատօմիան է. իսկ երբ մենք նրանցից այդ բանի համար մի տրամաբանական ապացոյց ենք խնդրում, մի արդարացումն այս կարճ և կարևոր պնդման համար, ծառն են բարձրանում կամ ասում են—ուսումնասիրեցէք պատմութիւնը և կգտնէք մեր թէզի հաստատումն: Ըստ ամենայնի անբաւարար պատասխան, որովհետեւ պատմութիւնը մի գիւրթեք նիւթ է, որին իւրաքանչիւրը ծոռում է և շարժում իւր բնահաճոյքի համաձայն, որը

թէ մատերիալիստներին և թէ իդէալիստներին և կամ մի այլ բանական ուղղութեան նախամարտիկներին հաւասարազօր զէնքեր է տալի: Այս պատճառով երբէք պատմութեան մատնանշումն մի սօցիալական տեսութեան ճշմարտութիւնը վերջնականապէս չի կարող լուծել. այդ պէտք է լուծել խիստ տրամաբանական անվիճելի ապացոյցներով:

Կայ արդեօք այս զէպքում յիրաւի այս տեսակի ապացոյցներ. կայ արդեօք յիրաւի գիտական հիմքեր, որով կարելի լինէր ապացուցանել, թէ սօցիալական երևոյթների պատճառները տնտեսական են: Այս մի հիմնական պրօբլէմ է, որը անլուծելի է մնացել և որը պարտաւոր եմ հետախուզել:

Հէնց որ մեր ուշադրութիւնը դարձնենք տնտեսական եղելութեան վրայ, կարող ենք նկատել, թէ ինչպէս սա այնպիսի յատկութիւններով է երևում, որ նա մարդկային հասարակութեան դրութեան մէջ պարզապէս գերակշռող նշանակութիւն է ստանում: Նախ տընտեսական իրողութիւնը տարբերւում է կենսաբանական իրողութիւնից, որը իւր ընութեամբ միայն օրգանական էակների համար է ընդհանուր, նրանով, որ նա միայն մարդկային է: Մի պատիկ ուսումնականի համար դժուար չէր լինի յիրաւի նաև կենդանական տեսակների մէջ տեսնել իրողութիւններ, որոնք տընտեսական յարաբերութիւնների հետ հեռաւոր ազգակցութիւն ունին: Օրինակ, երբ մի կապիկ ծառից մի ձիւղ է կոտրում և մի կօկօսի ընկոյղ է վայր ձգում, ճշմարտութեանը քիչ թէ շատ մօտ մի բան ասած կլինենք եթէ ասենք, որ այդ կապիկը կապիտալիստ է կամ կենտրոնացման մի գործողութիւն է կատարում: Բայց այս բաները ոչ այլ ինչ են, բայց եթէ վարժութիւններ, որոնք չեն կարող ժխտել, որ ստորին կեն-

դանիների մէջ չկան իսկական և ուղիղ տնտեսական յարաբերութիւններ: Վերջիններիս պակասում է մինչև իսկ տնտեսական իրողութեան հիմքը, արտադրութիւնը ամբողջապէս կամ թէ նրանք ունին երկրի պըտուղներից սեփականացրած պարզ ստացուածք, որից ոչ մի տեսակ տնտեսական յարաբերութիւն հնարաւոր չէ ստեղծել: Բացի այս կենդանական խմբումները չունեն ամենահեռաւոր նմանութիւնն անգամ այնպիսի երևոյթների հետ, ինչպիսին են փոխանակութիւնը, օգուտը, ոէնտան, վարձը: Ուստի մենք իրաւունք ունինք պնդելու, որ տնտեսական իրողութիւնը իր էական արտայայտութիւններով բացառապէս միայն մարդկային տեսակին է յատուկ, որ և կարող է առանց հաւաճառութեան հիմք ծառայել սօցիալական երևոյթների համար, որոնք էապէս և բացառապէս մարդկային են:

Այս դեռ բոլորը չէ: Տնտեսական իրողութիւնը միւս սօցիալական երևոյթներից աւելի պարզ է: Յիրաւի շատ դժուարութիւն չկայ ըմբռնելու, որ նիւթական իրողութիւնը գոյութեան միջոցների արտադրութիւնը, որոնց բաժանումովը և սպառումովը շատ աւելի պարզ է քան սօցիալական կեանքի մնացած բոլոր արտայայտութիւնները՝ օրինակ բարոյականութիւնը, իրաւունքը, քաղաքագիտութիւնը և այլն: Որ մարդ ապրելու համար պէտք է արտադրէ, որ աշխատանքը արդիւնաբերողների մէջ պէտք է բաժանել և այլն, այնպիսի բաներ են, որ կարելի է անմիջապէս դիտել աւանավարենի և բիրտ մարդկանց մօտ գործադրուելիս: Իսկ թէ ինչու պէտք է հետեւել որոշ կեանքի եղանակի նօրմաների, ինչու ընութիւնից վեր էակներ են պաշտում, ինչու են օրէնքներ դրում և նրանց հնազանդում են, սոքա այնքան բարդ երևոյթներ են, որ նրանց կեանքի մէջ մտցնելու համար կամ նոյն իսկ

հասկանալու համար հարկաւոր է հայեցողութեան մեծ նրբութիւն և զարգացած քաղաքակրթութիւն: Այս էլ բաւական է. տնտեսական իրողութիւնը ժամանակագրական կարգով սօցիալական բոլոր միւս երևոյթներէից առաջ է լինում: Արդէն կլասիկական բնաբանը ցոյց է տալի այդ—*primum vivere deinde philosophari* *) Մարդ պէտք է առաջ իր գոյութեան միջոցները պատրաստի և երբ սրանք նրան հնարաւորութիւն տուին ոտքի կանգնելու, կարող է մտածել այն մասին, որ օրէնքներ հրատարակի, բարոյական սանկցիաներ ստեղծի և այլն: Այս արդէն ցոյց է տալի, որ տնտեսական իրողութիւնը մարդկային միատեղկեցութեան բոլոր միւս երևոյթներից առաջ է իրականանում:

Անկասկած անհրաժեշտ է ընդունել, որ մի իրողութիւն կարող է աւելի պարզ լինել քան միւսը, առանց նրա պատճառը լինելու: Այս էլ ճշմարիտ է, որ մի իրողութիւն ժամանակով միւսից առաջ լինելը ըստ ինքեան ապացոյց է, որ նա միւսի պատճառն է: Օրինակ այն իրողութիւնը, որ Կեսարի մահուան հետեւալ տարւում արևը (ինչպէս ասում են) երկար ժամանակ դժգոյն և առանց փայլի է երևացել, չի նշանակում ամենևին, որ բռնապետի մահն է պատճառ եղել մի այսպիսի աստղաբանական երևոյթի: Այնուամենայնիւ յատկութիւնների այն համապատասխանութիւնը, որ տնտեսական երևոյթների մէջ նկատուում է և որ այս բանը զուտ մարդկային է, պարզ է քան սօցիալական միւս երևոյթները և որ գլխաւորն է ժամանակագրական կարգով առաջինն է, այս բոլորը մարդու մտքի համար ամուր յենարան է, որով մարդը սօցիալական դրութեան մէջ տնտեսական իրողութիւնն է հիմք նկատում:

*) Առաջ ապրել, ապա փիլիսոփայութիւն անել:

Այս միտքը ճշմարտութեանը աւելի կմօտենայ, հէնց որ սկսենք տնտեսական իրողութիւնը իր էական կողմով հետախուզել: Իսկապէս տնտեսական յարաբերութիւնների միջուկը, էական մասը, ինչպէս նկատուի է մարդկութեան պատմութեան բոլոր ժամանակներում, այն է, որ ժողովուրդը բաժանուում է երկու բացարձակ, յարատև և անդառնալի հատուածների—սակաւթիւ ունեւորների, որոնք չեն աշխատում և աշխատաւորների բազմութեան, որոնք սեփականութիւնից աւելի բան չունեն և բացառապէս առաջինների օգտին են արտադրում: Այս բանը նրանց համար, որոնք մարդկային ցեղի այս հատուածների կամ երկու մասի, բաժանուելու պատճառը չեն ուզում քննել, առնուազն պարզ է, որ այս դրութիւնը բնութեան զործ է: Բնութիւնը իհարկէ իծնէ չի ստեղծել կապիտալիստական կամ պրօլետարական կազմով մարդիկ կամ ինչպէս Վօլտերն է ասում, որ մարդկանցից ոմանք աթոռի վըրայ նստած են ստեղծուել և միւսները շաօրները ոտքերին: Պարզապէս մի դասակարգի գոյութիւն, որը ապրում է առանց աշխատելու, միւսի աշխատանքի արդիւնքից, իսկ միւսը իւր ամբողջ կեանքում յօգուտ միւսի է աշխատում, կարող է լինել արդիւնք մի հըսկայական տնտեսական պրօցէսի, որը բազմութեան համար բացասել է իւր հաշուին աշխատելու հնարաւորութիւնը և որը ընդմիջտ բացասում է և այս ձեւով ստիպում է իւր աշխատանքը փոքրամասնութեանը վաճառելու: Դրական քննութիւնը յիշաւի պարզում է, թէ ինչպէս է եղել այդ և ինչպէս է. նա պնդում է, որ բազմութիւնը անցեալում ստիպուած է եղել աշխատելու քչերի համար, եւր նրանց ստրուկներ են դարձրել. մինչդեռ այսօր նոյն նպատակին հասնում են իրենց սեփականացնելով հողն ու գետինը կամ ըստ

սուրիշները արտագրութեան միջոցները: Յամենայն դէպս սօցիալական տարբերութեան այս գոյութիւնը կամ տեւական փոխադրեցութիւնը իշխելու և շահագործելու մարդկային ոյժի արդիւնք է և ոչ միայն բնութեան ազատ ազդեցութեան:

Եթէ հասարակութեան բաժանումն երկու դասակարգերի՝ ունեւորների և բանուորների, լինէր մի տիեզերական ճակատագրական և անդառնալի անհրաժեշտութիւն, ինչպէս 24 ժամերի բաժանումն ցերեկուան և գիշերուան, մարդ պարզապէս այս դէպքում ոչինչ չէր կարող անել, այն առաջ տանելու կամ խանգարելու գործում և ամենախելացի խորհուրդը կլինէր անմասնակից և անգործ մնալ թողնելով բնական զարգացմանը իր արդիւնքները առաջ բերելու: Բայց որովհետև այս բանը մի էապէս արուեստական և բռնի պրօցէսի արդիւնք է, ամեն ըոպէ վտանգ կայ նրան դադարեցնելու: Նախ այն վտանգը կայ, որ բազմաթիւ դասակարգերը, որոնք իրենց օգտին աշխատելու հնարաւորութիւնից զուրկ են և ստիպուած են միշտ ուրիշների օգտին աշխատել, կարող են իրենք այս բանը հաշուի առնել, գիտակցութեան ոյժ ստանալ, կարող են ապստամբել և աւանդական կարգը խորտակել: Բացի այդ կայ և այն վտանգը, որ մի այդպիսի հետևանք իշխող դասակարգը շնորհիւ իւր չափազանցութիւնների կարող է արագացնել, երբ նա ճնշուած դասակարգի շահագործումը ծայրահեղութեան կհասցնի և այսպիսով նրան կդրդի խառնակութիւնների: Այս ձևով սօցիալական կարգը, քանի որ հիմնուած է ժողովրդի բազմութեան սեփականութիւնից զրկելու վրայ, գտնւում է մի միշտ տատանուող հաւասարակշռութեան, յեղափոխութեան կամ ամբողջովին բայքայման դրութեան մէջ. ուստի անհրաժեշտ է հոգալ նրա գոյութեան

ապահովութեան համար. այս կլինի երբ խեղճ դասակարգի խառնակութեան և հարուստի չափազանցութեան առաջն առնուի: Այս խօսքերով անհրաժեշտ է կազմակերպել մի շարք իրարից կախուած իրաւական մարմիններ, որոնք զանազան դասակարգերի իրենց պահելու եղանակը նպատակադարձար սահմաններում պահել տան կամ նրանց հեռու պահեն այնպիսի գործերից, որոնք կարող են վնասակար լինել սօցիալական դրութեանը:

Առաջին միջոցը, որի նպատակն է ժառանգութիւնից զրկուած դասակարգերին հնազանդութեան և իշխողներին չափաւորութեան մէջ պահել, տալիս է բարոյական զսպող միջոցներ, որոնք չքաւորներին խառնակութիւնից հեռու են պահում, իսկ հարուստներին բարձրանալուց, վախեցնելով սրանց այս հակասօցիալական գործողութիւնների համար ոչ նիւթական պատժով: Բարոյական ճնշումն էլ իւրովստան պատմութեան իրար յաջորդող շրջաններում զանազան ձևեր է ստացել. հնումը սարսափն էր նրա հիմքը, միջնադարում — կրօնը, իսկ մեր ժամանակում հասարակական կարծիքը: Այս պրօցէսի էութիւնը միևնոյնն է — կրճատումն կամ հեռացումն մարդկային նախաձեռնութիւնների եսական գործողութիւններից, որոնք կարող են վնասել սօցիալական ընդհանրութեան: Օրինակ, չքաւորի շահն է կողոպտել, նրա շահն է սօցիալական կարգը յեղաշրջել. բայց ահա գալիս է քահանան և ասում է, եթէ դու կողոպտես, եթէ դու դրած կարգի դէմ ելնես, այն ժամանակ քեզ հանդերձեալ կեանքում պատիժներ են սպառնում: Սարսափելի ահից խուսափելու համար չքաւորը հանգստանում է և ենթարկւում է այն սօցիալական կարգին, որը նրան ճնշում է: Այն տարբեր կրօնները, որոնք պատմութեան տարբեր շրջաններում իրար ետևից հոգիներ կառավարելու գայտօնը իրենց ձեռքն

են առել, յաժառութեամբ այս առաջին նպատակին
են ձգտել. սակայն և ոչ մէկը քրիստոնէութեան ան-
դիմադրելի ազդեցութեան և լրիւ ոյժին չի հասել: Ա-
ւետարանը ոչ միայն սպառնում է հակասօցիալական
գործողութիւնները սարսափելի պատիժներով հանդեր-
ձեալ աշխարհում, այլ և յայտնում է, որ մարդկանց
միւս աշխարհի վիճակը բոլորովին հակառակը կլինի
այն վիճակի, որի մէջ նրանք այս աշխարհի մէջ են
գտնուում և որ երկնքի թագաւորութիւնը հարուստնե-
րի և հզօրների առաջ բոլորովին կփակուի, չքաւորնե-
րի և անկեալների առաջ միայն կբացուի: Չի կարելի
հաւատալ նոյնիսկ, թէ ռը աստիճանի այս հանճարեղ
վարդապետութիւնը նպաստել է, որ ժողովուրդների
մէջ խաղաղութիւն լինի մասնաւոր սեփականութեան
դրութեան մէջ անգամ. այսպիսով չքաւորները այլ ևս
ոչ մի հիմք չունին իրենց չքաւորութիւնը ողբալու,
քանի որ սա տալիս է նրանց դրախտի յաւիտենական
երջանկութիւնը. աւելի շուտ նրանք հարուստներին
խիստ պիտի կարեկցեն, որոնք վայրկենական, անցո-
ղակի կեանք են ձեռք բերել հանդերձեալի անանց
զուարճութիւնից հրաժարուելու գնովը: Քրիստոնէու-
թիւնը դառնում է հարուստներին և արտօնեալներին և
յայտարարում որ ողորմութիւն տան, առաքինի լինեն
և նրանց իջեցնում է այն բարձրութիւնից, որը ան-
հրաժեշտօրէն զանազան դասակարգերի յարաբերութեան
խանգարման պատճառն է. ուստի այս տեսակէտից ևս
այս կրօնը ամենարժէքաւոր գործօնն է մարդկային հա-
սարակութեան գոյութեան և պահպանութեան համար:

Սակայն նոր ժամանակներում դրական մեթոդի
զանազան ասպարէզներում կատարած հետախուզու-
թիւնների յաղթանակները արդէն տատանում են կրօ-
նական հաւատը. նախ հէնց բժշկական դպրոցները,

անաստուածութեան այդ ջատագովները, կասկածի և
ժխտման խօսքը կուտուրայի մէջ ամենավերջին սահ-
մանին է հասցրել. շնորհիւ այդ խախտման նրա հետ
միասին անդառնալի անյայտանում է սօցիալական
միակեցութեան մի գլխաւոր ոյժը: Բայց հէնց այն
վայրկեանին, երբ կրօնը դժգոհանում և վերջանում
է, բարոյական ճնշման մի նոր ուժեղ պրօցէս է երե-
ւում, որը անցեալ ժամանակին անյայտ էր: Այս հա-
սարակական կարծիքն է, որը մարդկանց հեռու է պահում
հասարակութեան համար վնասակար գործողութիւններ
կատարելուց, սպառնալով այս գործողութիւնները միա-
բերան դատապարտելու: Երբ այսօր բանուորները ե-
ղած սօցիալական կարգի դէմ չեն ելնում, երբ ունե-
ւորները իրենց հպատակների վերաբերմամբ անտանե-
լի անգթութեան մէջ չեն դիմում, այս բոլորն էլ մա-
սամբ պարտական են ընդհանուր ցնեզօրին, որը այդ-
պիսի գործողութիւնները և նրանց կատարողներին
վատ հռչակ է տալի և ընդհանուր արհամարհանքի է ար-
ժանացնում. այս ձևով հասարակական զուտ բարոյա-
կան ոյժը մի ուժեղ գործօն է իւր ներսում վտան-
գուած հասարակական կեանքի պահպանութեան համար:

Այստեղ կան ուրեմն մի շարք սօցիալական երե-
ւոյթներ, որոնք իրենց մէջ ամփոփում են բարոյական
գործողութիւնների և ճնշման միջոցների ամբողջու-
թիւնը որոնք ներքին կապ ունեն հասարակութեան
տնտեսական դրութեան հետ և բացատրում են միայն
վերջինիս միջոցով: Բայց բարոյական ճնշումն միայն
ըստ ինքեան անզօր է մարդկութեան ընդհանրութեա-
նը հակասօցիալական գործողութիւններից հեռու պա-
հելու համար, որովհետև միշտ էլ լինում են անհատ-
ներ, որոնք ծաղրում են բարոյական պատիժը, որ նը-
րանք իբր թէ հանդերձեալ կեանքում պատիժ են կը-

րելու կամ հասարակական կարծիքի արժամուժ նրանց մասին աննպաստ նկատողութիւն է լինելու: Այս ուրուականների դէմ կոռուող անհատներին կարգի մէջ պահելու համար օգնութեան է գալի մի աւելի՝ եռանդոտ և որոշակի կաշկանդող կարգ — իրաւունքը: Սամարդկանց հակասօցիալական գործողութիւններից հետո է պահում, նշանակելով նրանց համար ոչ թէ մտքից վեր, այլ շօշափելի և նիւթական պատիժ: Մինչ բարոյականութիւնը այն չքաւորին, որը ուզում է կողոպտել, սպառնում է հանգերձեալ կամ ոչ նիւթական պատժով, իրաւունքը սպառնում է նրան բանտով միաժամանակ նաև այն սեփականատիրոջը ևս, որը մի ուրիշ սեփականատիրոջ գոյքը ուզում է խլել կամ որը իւր բանուորների վերաբերմամբ խստութիւններ է ուզում բանեցնել: Իրաւունքը կանոնաւորում է ընտանիքի, սեպհականութեան, ժառանգութեան, դաշինքի յարաբերութիւնները, այսինքն այն բոլոր յարաբերութիւնները, որոնք տնտեսական դրութիւնից են ծագում: Իրաւունքը իւր բոլոր մասերում էլ ունի տնտեսական յարաբերութիւններ և իւր որոշումների մեծ մասը յօգուտ ունեւոր դասակարգի է ուղղում:

Այս պատճառով իւրաքանչիւր ժամանակի իրաւունք համապատասխանում է այդ ժամանակում գերիշխող սեփականութեան ձևի շահերին. որտեղ հողատիրութիւնն է իշխում, իրաւունքը հողատէրերի շահերն է խիստ իրար կապում և ընդհակառակը, ուր որ կապիտալն է իշխում, նա աւելի յօգուտ շարժական հարստութեան է ձգւում: Այս պատճառով, ուր որ որոշ տնտեսական յարաբերութիւններ են զարգանում, այնտեղ զարգանում է նաև համապատասխան իրաւունքը: Յիշատակելու արժանի օրինակ է Գերմանիայում 15-րդ դարու վերջում հռոմէական իրաւունք մտցնելը.

սա պարզապէս արդիւնք էր նոր տնտեսական յարաբերութիւնների, որոնք նոր ժամանակների արշալոյսին ազգերի մէջ առաջ էին եկել և որոնք էապէս նման էին հեթանոս Հռոմում իշխող տնտեսական կարգերին: Ընդհանրապէս մի ճշմարտութիւն է, որ հանուած է բոլոր ծանօթ ժողովուրդների իրաւական կեանքի խորը ուսումնասիրութիւնից, որ իւրաքանչիւր ժամանակում հօգը իրաւական յարաբերութիւնների գաղտնիքը պէտք է փնտռել ոչ թէ մտքից վեր եղող սկզբունքների մէջ, որով կերակրւում էր հին իրաւունքի փիլիսոփայութիւնը, այլ աւելի շուտ տնտեսական յարաբերութիւնների պրօզայիկ և ռիւթական կազմի մէջ. ուրիշ խօսքով, որ իրաւունքի փիլիսոփայութիւնը քաղաքատնտեսութիւնն է:

Բայց որպէս զի իրաւական որոշումները իրենց գոյութեան նպատակին կարողանան համապատասխանել, որ մասնաւոր սեփականութեան դրութիւնը պաշտպանեն, ամրացնեն և երկար պահեն, աւելանում է դրա վրայ և այն, որ նրանց ստեղծելն ու կրճատելը բացառապէս յանձնւում է ունեւոր դասակարգին, այսինքն օրէնսդրական ֆունկցիան և քաղաքական ոյժը, որից նա ծագում է, բացառապէս ունեւորի ձեռքումն է գտնւում: Այս անհրաժեշտ է նաև մի այլ հիմք ի նկատի ունենալով. եթէ պրօլետարները հնարաւորութիւն ունենային քաղաքական ոյժը ձեռք ձգելու, չէին դանդաղի այդ իրենց օգտին ծառայեցնելու և նրանց փլատակների վրայ մի այնպիսի տնտեսական սխտեմ կանգնեցնելու, որը աւելի շուտ իրենց օգտին համապատասխանէր: Այս պատճառով կապիտալիստական դրութեան գոյութեան համար կարևոր է, որ քաղաքական ոյժը ունեւորները և նրա արարածները մենաշնորհ դարձնեն և զրկուած փալանգներին բացասեն

ժառանգութիւն: Երկար ժամանակ այս նպատակին բացարձակ անգութ միջոցներով են հասել. քաղաքական ոյժը առանց այլևայլութեան ունեւորներին է տրուում. երբ հանդէս է գալի ներկայացուցչական կարգը, չքաւորներին ընտրութեան իրաւունքից զրկում են, իսկ աւելի ուշ, երբ ստիպուած են բազմութեանն էլ ձայնի իրաւունք տալ, ցանկալի նպատակին նրանով են հասնում, որ ընտրութեան ծախքերը շատացնում են, այնպէս որ պարլամենտի աթոռը չունեւորների համար անմատչելի է դառնում կամ թէ խեղճ դասակարգերի ձայները խորամանկութեամբ գրաւում են կամ պարզ գնում: Ինչ էլ որ լինի, արդեօք ուղղակի թէ անուղղակի միջոցներով են պաշտպանութիւն գտնում, արդիւնքը նոյնն է ունեւորների կուսակցութիւնը քաղաքական ոյժը խստօրէն ամուր իւր ձեռքին է պահում:

Սակայն ունեցեալները զանազան ձևի է լինում, նայիլով թէ ի՞նչ եկամտի աղբիւրներից է գոյանում: Որովհետեւ ունեւորները զանազան ձևի եկամուտներ ունին և զանազան շահեր, ունեւոր դասակարգը, քաղաքական ոյժի տէրը բաժանւում է մի քանի կուսակցութիւնների, որոնք միայն որոշ աստիճանի միայն իրար թշնամի են, շնորհիւ այն հիմնական անտագօնիզմի, որ նրանց եկամուտների մէջ իշխում է: Այս տեսակէտից ամեն կարեւոր և էական հակադրութիւնը կայ հողատիրութեան և շարժական սեփականութեան մէջ, որոնցից առաջինի շահն է status quo-ն*), երկրորդինը՝ յառաջադիմութիւնը և իբրեւ կօրէնգատ այս կարեւոր հակադրութեան հանդէս է գալի մի քաղաքական հակադրութիւն հողատէրերի և կապիտալիստների միջև, որոնցից առաջինը իր մեծ մասով յե-

*) Մինչև այժմ եղած քաղաքական գրութիւնը:

տադէմ կուսակցութիւն է կազմում, իսկ վերջինը յառաջադէմ կամ ազատամիտ կուսակցութիւն: Քաղաքական այս ընդհարումը երկու, եկամուտ ունեցող, կուսակցութիւնների միջև կարեւոր նշանակութիւն ունի քաղաքական ոյժից հեռացրուած աշխատող դասակարգի համար, որովհետեւ սրանցից իւրաքանչիւրը իւր ախոյեանի վրայ յաղթանակելու համար դաշնակցութեան է հրաւիրում ժողովրդին և որպէսզի այս նրան յաջողուի, պէտք է հեշտութեամբ զիջումներ և ողորմութիւններ անի, որոնք վերջ ի վերջոյ յօգուտ պրօլետար բազմութեան են լինում: Այստեղից հասկանալի է խեղճ դասակարգերի օգտին եղած որոշումների ընդունուելը մի բացառապէս ունեւոր մարդկանց կառավարող հասարակութեան մէջ. այսպիսով հասկանալի է կարգերի և օրէնքների փայլուն շարքը, որոնց նպատակն է աշխատաւոր ժողովրդի բարելաւութիւնը, որոնք սկսուել են հին հողային օրէնքներից և Զէյ-դախտներից*), որոնք հետզհետէ հասնում են ազատ համայնքների կազմակերպութեան և այսօրուայ սօցիալական օրէնսդրութեան, վերջիններիս չափի լուսաբանութեան և նշանակութեան որոշման: Դէմօկրատիկ բարենորոգութիւնների կապոյտ գետը, որը դարերից ի վեր կայուն անտառների ազատութիւնը վտանգող օրէնքների միջով է հոսում, իւր սկիզբը առնում է երկու թշնամի կուսակցութիւնների պատմական պառակտումից և այստեղից էլ առաջ է գալի անհրաժեշտութիւն բարելաւող օրէնքների միջոցով ժողովրդի դաշնակցութիւնն ու օգնութիւնը ստանալ:

Այսպիսով, ամփոփելով, կապիտալիստական կարգի անկայունութիւնը կամ ճնշուած դասակարգի կող-

*) Պարտք թօթափել:

մից եղած շարունակուող սպառնալիքը մի խռովութիւն առաջացնելու անհրաժեշտ են դարձրել կազմակերպել մի շարք իրարից կախուած կարգեր, որով պրօլետարիատը հնազանդուած է և որոնք ունեւորներին չափազանցութիւններից հեռու են պահում, որոնք սակայն չեն դանդաղի ճնշուածներին և ապստամբելու և գրգռելու: Այս իրարից կախուած կարգերն են՝ բարոյականութիւնը, իրաւունքը և քաղաքական կազմակերպութիւնը, որոնք բոլորն էլ գործադրուել են, բարձրացել և իշխող են եղել շնորհիւ հիմք կազմող տնտեսական իրողութեան անդիմադրելի գործողութիւններին, սրան են պարտական բացառապէս իրենց գոյութեան հիմքը և իրենց զարգացման գործօնը: Սակայն երբ մարդ մօտից է դիտում, տեսնում է, որ բարոյական, իրաւական և քաղաքական կարգերը մարդկային հասարակութեան ոչ բոլոր տնտեսական արտայայտութիւններն են պատկերացնում. նոքա իրենց մէջ միացնում են, բացի տնտեսութիւնից, սօցիալական կեանքի բոլոր արտայայտութիւնները: Այս պատճառով ասել, թէ դրանք բոլորն էլ բացառապէս տնտեսական գործօնով են որոշուում կնշանակէ ասել, որ սօցիալական դրութեան հիմքը ամբողջովին տնտեսական իրողութիւնն է կազմում, այսինքն, որ սօցիօլոգիան իրեն բազիս ունենալով քաղաքատնտեսութիւնը միայն կարող է գիտութիւն դառնալ: Այսպիսով սօցիալական դրութեան առաջ գնալը թօթափում է իր վրայից տնտեսական յարաբերութիւններից այն չապացուցուած և դժգոհութիւն բնաւորութիւնը, որ կար նրա առաջին գտնողների գրուածքներում և այսպիսով նա դառնում է մի ապացուցուած և տրամաբանօրէն անվիճելի ճշմարտութիւն:

Այս է սօցիօլոգիայի նոր ուղղութիւնը, իւր

էական մասերով, որը այսօր բաղմութեան մէջ յաղթանակում է և որը ընդհանրապէս կոչւում է պատմական մատերիալիզմ: Այս որոշումը իսկապէս անորոշ է, որովհետեւ նա ընդունել է իւր մէջ հիմնովին տարբեր սօցիօլոգիական մտքեր մի կողմից, միւս կողմից նոյն իսկ Սպէնսէրի սօցիօլոգիան, կենսաբանութիւնը հիմք ընդունելով, կատարեալ իրաւունքով կարող է նոյն անունը կրել. ուստի մեր կարծիքով աւելի նպատակայարմար կլինէր նորագոյն սօցիօլոգիական դպրոցը տարբերելու համար ասել պատմական էկզիսթիզմ: Մի կողմ թողնելով անուան հարցը, որը միշտ էլ ստորադաս նշանակութիւն ունի, անկասկած է, որ նոր ուղղութիւնը շատ ճշմարիտ և ապացուցուած բան ունի իւր մէջ և այն բաղմութիւ կշտամբանքները, որոնցով ուզում են նրան խեղտել մեծ մասամբ հիմքից զուրկ են: Անկասկած աւելի հեշտ բան չկայ քան նոր դպրոցը վարկաբեկ անելու համար ցոյց տալ և կրկնել նրա կողմնակիցների մի քանի չմշակուած չափազանցութիւնները. այդ կլինէր սակայն աշխատել ցոյց տալ միայն նրա ծաղրանկարը: Անկասկած մի բանի բացատրութիւններ և օրինակներ, որոնք բերում են ապացուցանելու համար, որ սօցիալական երեւոյթների հիմքը տնտեսականն է, ցոյց են տալի միայն այն հեղինակների անպատասխանատու թեթեւամտութիւնը, որոնք համարձակուել են այդ անելու: Օրինակ Դ'Մօլինարին, մի աւելի քան ազատամիտ և աւելի քան ուղղափառ հեղինակ, պնդում է, որ պրիմիտիվ Ֆէտիշիզմը միայն այն պատճառով թողին, որովհետեւ գտնում էին, որ զոհաբերութիւնը թանգ է նստում և ուրեմն աւելի լաւ է մի կրօն ընդունել, որը ժխտում է զոհաբերութիւնը: Դեռ աւելին. նոյն հեղինակը պնդում է, որ բաղմաստուածութիւնից միաստուածու-

թեան անցնելը միայն և միայն շահադիտական հաշիւներէ արդիւնք է կամ այս բանը եղաւ միայն այն պատճառով, որ մարդիկ նկատեցին, որ մի աստուածը աւելի արժան կնստի իրենց քան շատ աստուածները: Աղաման էլ իւր կողմից, չափը մեծացնելով, ասում է, որ կրօնը մի օր տեղի է տալու անաստուածութեան, որովհետեւ շուտ կամ ուշ նկատելու են, որ մի աստուածը, եթէ նոյն իսկ մի հատ է, այնուամենայնիւ պահանջում է ծախքեր, որոնց աւելի օգտակար ձևով կարելի է խնայել: Սակայն այս չափազանցութիւններին, որոնք տնտեսական սօցիօլօգիան ընդունող ծայրահեղ աջակողմեաններից են առաջ գալի, համապատասխանում են ծայրահեղ ձախակողմեանների չափազանցութիւնները: Օրինակ էնգէլսը չի քաշում պնդելու, որ գերմանացիք միայն նրա համար էին դիակները այրում, որովհետեւ անչափ անտառներ ունէին, որտեղից նոքա արժան այրելու նիւթ էին ստանում և որ նոքա յետոյ սկսեցին իրենց մեռելներին թաղել, որովհետեւ շնորհիւ արագ ծառեր կտրելուն փայտը հազուադիւս դարձաւ: Յիւրաքանչեւ նրանք, որոնք այդպիսի յիմարութիւնների դէմ են կուռում, իրաւունք ունին. բայց նոքա անիրաւացի են, երբ կարծում են, որ այսպիսով պատմական մատերիալիզմն են ոչնչացնում, մինչդեռ նրանք միայն այն են հեռացնում, ինչ որ նրա անճաշակ և ծիծաղելի ծաղրանկարն է կազմում:

Ուրիշները նոր ուղղութեան դէմ կուռելու համար, լուսաբանում են այն բաղձաթիւ աղբիւրները, որ բարոյական զգացմունքները, իրաւական և քաղաքական իրողութիւնները սօցիալական գրութեան վրայ ունին: Ոչ ոք չի կարող վիճել այդ տեսակ աղբիւրներին իրականութեան և ոյժի դէմ: Հոյա-

կապ կաթողիկէները, որոնք իրենց համարձակ ճարտարապետութեամբ զարմացնում են, ասպետական դեղարուեստի անմահ ստեղծագործութիւններ—տաճարները, կրօնական զգացմունքի ամենազօր աղբիւրներն են: Սա էր միայն, որ արուեստագէտին ծրագիրներ էր տալի, նկարչին վրձին էր վերցնել աւալի և բանաստեղծին իր երգերում ոգևորում էր: Կրօնական զգացմունքից են հաւաքում անհրաժեշտ ոյժը մտածողների ամբողջ սերունդներ, որպէսզի աւելի դժուարութիւններ յղթին, որ աւելի խոչընդոտներից անցնելով՝ յաղթանակեն, որպէսզի ամեն տեսակ ճնշումից անցնելով—հաւատի բարձրացնող աղբիւրները իրեն վերջնական կէտին հասցնեն: Այս բոլորը կհակասէր նրանց, որոնք կցանկանային պնդել, թէ տնտեսական գործունէ է անմիջապէս ստեղծել միջնադարեան արուեստը կամ նրա անմիջական պատճառն է եղել: Ոչ մի առողջ միտք ունեցող չի եղել, որ երբեքից համարձակուել է նման բան պնդել: Անշուշտ ոչ. միայն կրօնական զգացմունքն է եղել, որ ստեղծել է միջնադարեան գեղարուեստի զանազան արտայայտութիւնները դարեր շարունակ. սակայն այս կրօնական զգացմունքը, որին պարտական ենք այդ ժամանակի հրաշալի ստեղծագործութիւնները, ինքն էլ մի հոգեբանական արդիւնք է տնտեսական յարաբերութիւնների կամ անհրաժեշտութեան արդիւնք է, միատեղ պահելու համար այն զանազան տարրերին, որոնք մաքառում են մի ոչ ազատ սօցիալական սխտեմի համար և սպառնում էին ամեն վայրկեան ջախջախելու այդ կարգը: Ուստի սխալ չի լինի, եթէ պնդեն, որ ամենաբարձր և եթերական հոգևոր արտայայտութիւններում էլ, որ գոթական կաթողիկէների հրաշալի աշտարակներում և ֆանտաստիկ բուրգերում,

նոյնիսկ սրբերի և ասկետների սերովբէանման պատկերներում սօցիոլոգի սուր աչքը դաւաճանող նշաններ է տեսնում և ճանաչում է տնտեսական գործօնի դիւակաւն ժպիտը:

Ապարդիւն է պատմական մատերիալիզմի դէմ միշտ թոյլ ֆրազները կրկնել, որը մարդը բացառապէս այլևս գիշատիչ կենդանի չէ, որ նա բացառապէս հաշիւներով չի բռնուած և որ նոր դպրոցը մի բռնազրօսիկ աղաւաղումն է մարդկային էութեան, որ մի բռնի ճնշումն է նրա ազնիւ արտայայտութիւնների վերաբերմամբ, մի անարժան խեղաթիւրումն մեր սեռի: Շատ ճիշտ է, պատասխանում ենք մենք, որ մարդկային հոգին բազմապիսի և տարբեր նշաններ ունի, որոնց նարաւոր չէ բացատրել միայն տնտեսականով կամ շահով. բայց նոյնքան ճիշտ է, որ մարդկային հոգու այս բարձր և բազմապիսի արտայայտութիւնները խիստ սահմանաւորուած և որոշուած են տնտեսական միջավայրով, որի մէջ նրանք զարգանում են: Օրինակ մի բանաստեղծ, իսկական բանաստեղծ, ոտանաւորներ է գրում ոչ թէ ապրուստ ձեռք բերելու համար, այլ որովհետեւ բանաստեղծելը նրա գոյութեան պահպանութեան մի ձևն է, սա նրա մտքի ազատ և անդիմադրելի արտայայտութիւնն է: Իւրաքանչիւր շրջանի բանաստեղծութիւն նոյն ժամանակի սօցիալական և տնտեսական պայմանների հաւատարիմ արտացոլումն է. նոյնիսկ բանաստեղծի անսանձ երեւակայութիւնն էլ անկարող է որևէ կերպ այդ սահմաններից դուրս գալ: Ամենազատ բանաստեղծն իսկ այսօր չի կարող մի վիպական ոտանաւորում սրարշաւ ասպետին կամ մի մելոդիական ոտանաւորում սիրոյ պալատը գովաբանել, ինչպէս միջնադարի բանաստեղծները չէին կարող ասկետական կամ

ասպետական հանգերից դուրս գալ: Այս նշանակում է, որ մարդը իւր վայրկենական անսանձ արտայայտութիւններում իսկ միշտ իւր պատմական վայրի արդիւնքն է, որ նա արտայայտութիւն է այն յարաբերութիւնների, որոնց շրջանում նրա կեանքը անցնում է:

Ի միջի այլոց այս էլ ճիշտ է, որ գեղարուեստի զարգացումը միշտ կանոնաւոր կերպով տնտեսական պայմանների զարգացմանն է հետևել: Օրինակ, երբ 13-րդ դարը Ներոպայում արևելքի ազդեցութիւնն ու համայնքի ազատութիւնն է բերում, գոթական տաճարների փառքը սկսում է նսեմանալ: Դրա համապատասխան սկսում են միջնադարեան անձաշակ և փքուն նկարչութեան փայլուն գոյներով նկարները երևան գալ: 14-րդ դարը տալիս է դեղին, կարմիր և կապոյտ գոյները, համաչափութեան գաղափարը կորչում է և քանդակագործութիւնն ու նկարչութիւնը աւելի ու աւելի նիւթական և իրական բնաւորութիւն են ստանում: Երբ նոր ժամանակը ստացուածքի սարսափելի կեդրոնացումն է առաջ բերում, ճարտարապետութիւնը աւելի է երեսի վրայ մնում. և մի չափազանցաբար և կոպիտ զարդագիտութիւն բռնում է նախկին գծերի պարզութեան տեղը. այժմ նկարչութեան մէջ հանդէս է գալի առաջները չտեսնուած մի նոր ժանր, պատկերը, իբրև մի ազդանշան և միաժամանակ արդիւնք ընդարձակուող հարստութեան, վերջինիս համար զարմանք առաջ բերելու և գեղեցիկ կերպով ծածկում է նրան հասարակական գովասանքների համար:

Ասում են նաև, քիչ առաջներն էլ կրկնեց Ս. Ի. Ֆէրրարին, որ այն գիտական դպրոցը, որը սօցիալական զարգացումը նկատում է իբրև անհրաժեշտ արդիւնք տնտեսական յարաբերութիւնների և ժխտում է, որ մարդը որևէ ազդեցութիւն կարող է ունենալ

նրա գործողութիւնների և կամքի արտայայտութիւնների վրայ, անհրաժեշտօրէն կտանի սօցիալական անգործունէութեան, ճակատագրականութեան, բուդդայականութեան: Նախ, եթէ այդպիսի մի առարկութիւն տեղին էլ լինէր, ոյժ չէր ունենայ հերքելու մի լուրջ և տրամաբանութեան ու դիտողութեան վրայ հիմնուած տեսութիւն: Բարեբախտաբար սակայն այս քննադատութիւնը անիրաւացի է, որովհետեւ ճիշտ չէ, թէ պատմական մատերիալիզմը անպայման ճակատագրականութեան է հասցնում մեզ: Ճիշտ է, որ այս տեսութիւնը դրականապէս ժխտում է կամայական բարենորոգութիւնների անհրաժեշտութիւնը. ճիշտ է, որ նա անդառնալի փշրում է այն ուսուպիստների վառ ցնորքները, որոնք հաւատում են թէ մի վայրկեանում ab imis fundamentis (հիմքից) կարող են փոխել հասարակութեան դրութիւնը եթէ նրանք մի բարոյական գաղափար արտայայտեն կամ մի օրէնսդրական որոշում կայացնեն: Այս տեսակէտից նոր տեսութիւնը կատարելապէս համաձայն է ընդհանուր զարգացման տեսութեան հետ, որը ամենախիստ ձևով ժխտում է կամայական յեղափոխութիւնների հնարաւորութիւնը կամ յաջողութիւնը: Միւս կողմից, երբ պատմական մատերիալիզմը ցոյց է տալի մարդկանց նրանց ճանապարհի հիմքը և դրդիչը, նա առաջուց նշանակում է այն ուղին, որով միայն կարող է յաջողուել սօցիալական դրութեան փոփոխութիւնը, որովհետեւ նա ուսուցանում է, որ հասարակութեան բարենորոգութիւնը կարող է միայն հնարաւոր դառնալ նրա տնտեսական բարենորոգութիւնով. այս նշանակում է, որ հասարակութեան որևէ հիմնական փոփոխութիւն կախուած չէ բարոյականութեան և իրաւունքի բարձր արտայայտութիւններից, որ այդ բանին չենք հասնի

նոր վարդապետութիւն կամ քաղաքական կառավարութեան նոր ձևեր յայտարարելով, այլ այդ հնարաւոր է սեփականութեան պայմանների հիմնական ձևափոխութեամբ: Երբ մատերիալիստական պատմահայեցողութիւնը ցոյց է տալի ինչպէս սեփականագուրկ դասակարգերի համար յիշաւի օգտակար բարենորոգութիւնները ամեն դէպքում դասակարգային արդիւնք է, միաժամանակ ցոյց է տալի բանուորներին այն միջոցը, որով նրանք իշխող բուրժուազիայի կողմից եղած հաշտութեան պայմանները պէտք է յետ մղեն: Նա պրօլետարների համար բաց է անում այն անխուսափելի անհրաժեշտութիւնը, որ նրանք միացած թաւանջներ պիտի կազմեն և ժամանակաւոր դաշն պիտի կապեն բուրժուազիայի այս կամ այն կուսակցութեան հետ, երբ իբր փոխ-ծառայութիւն այդ դաշինքի իսկական ժողովրդական բարենորոգութիւններ մտցնելը պահանջեն: Ուրեմն նա շատ հեռու է բուդդայական, ճակատագրական կամ որևէ աւելի վատ բան լինելուց, ինչպէս նրա հակառակորդներն են պնդում. նոր վարդապետութիւնը ժխտում է ամեն տեսակ ճակատագրականութեան և ծոյլ զոհունակութեան: Յիրաւի ճակատագրական տեսութիւն է պրոլետական, այսպէս կոչուած, պետական սօցիալիզմը, որին կարելի է այսօր աւելի շուտ ճափոնական կամ նահապետական կառավարութեան տեսութիւն անուանել, որի համաձայն աշխատաւոր դասակարգերը ձեռքները ծոցների իրենց դրութեան բարելաւումը պետութեան ողորմած մեծահոգութիւնից են սպասելու, որը նրանց ժամանակ առ ժամանակ հանգստացնելու միջոցներ է տալի, որը նրանց վարձատրութիւնն է բարելաւում կամ դժբախտ դէպքի և մահուան հատուցումն. բայց իսկապէս ասած, երբէք նրանց չազատել իրենց կախման

պայմաններին, երբեք նրանց չտալ ոչ անկախութիւն և ոչ սեփականութիւն: Դժբախտաբար այս տեսութիւնը մեր մէջ դեռ բաւական հետևողներ ունի և նրա ամբողջ քաղաքական իմաստութիւնը տօսկանացի մի մարկիզ այսպէս է արտայայտել մի բնաբանում.— աղքատներին պէտք է աղքատութեան մէջ պահել: Իսկ նոր տեսութիւնը աշխատաւոր դասակարգին հեռու է պահում ամեն տեսակ յետադէմ գոհունակութիւնից և ցոյց է տալի նրանց, որ իրենք միայն կարող են իրենց փրկել, իրենց սեփական աշխատանքով, սեփական նախաձեռնութեամբ. այս տեսակէտից նա փոխանակ պոռտոպիստութեան և թուլամորթութեան տեսութիւն լինելու, մի գնահատելի թթխմոր է դասակարգայի կուռի համար:

Ի միջի այլոց մատերիալիստական պատմահայեցողութեան տեսութիւնը փոխանակ իւր հակառակորդներին այս տեսակ յոգնեցուցիչ կուռի վարժութիւններ առաջարկելու, աւելի լաւ կյաղթանակէ իւր գիտական ոյժի բազմապիսի ապացոյցները բերելով կամ բացատրելով՝ այն բազմապիսի իրողութիւնները, որոնք միայն նրա միջոցով են բաւարար բացատրութիւն ստանում: Արդէն իսկ չափազանց շատ է այն երևոյթների շարքը, որոնք նրա դրօշի տակ են հաւաքուում և ժամանակակից քաղաքացիական հասարակութիւնը, որը նոր տեսութիւնից այնպէս է վիրաւորուում, ինչպէս մի անարգանքից, ամեն օր նորանոր ու աւելի ուժեղ ապացոյցներով և իրողութիւններով նրան օգնութեան է գալի: Օրէցօր նրա ախոյեանների շարքերը խտանում են. այժմ արդէն Գերմանիայում Կառուցելին, Վայդենգերին, Ամերիկայում Ս. Գամսը, Անգլիայում Ռոջէրսը, Ռուսաստանում Ստրուվէն, *) Բելգիայում Գ. Գրէֆսը,

Իտալիայում Աստօրօն, Կօնտենտօն, Էնրիկօ Ֆէրրին, Գրօպալլին, Լաբրիօլան, Մեյլանին և այլն նոր տեսութեան համար աչքի ընկնող ծառայութիւն են անում գրողաժքներով, ուսումնասիրութիւններով և դիտողութիւններով: Ճիշտ է, որ այս հրատարակութիւններում դեռ շատ բան անպատրաստի է և անորոշ. ճիշտ է, որ նոր վարդապետութիւնը շատ հեռու է կտրուկ և խիստ որոշակի լինելուց, որոնք մի հասունացած և խորը գիտակարգի դրական նշաններն են: Բայց այդ ծայրահեղութիւնների մէջ իսկ, որոնք դեռ այժմ էլ պղտորում են նրան, որոնք ջերմի ու երեակայութեան անխուսափելի զուգընթաց երևոյթներ են, կարելի է տեսնել ինչպէս փայլում են մօտակայ յաղթանակի նշանները: Այժմ իսկ պէտք է պնդել, որ նոր ուսմունքին կյաջողի սօցիօլօգիային ճշմարիտ և իսկական գիտութեան բնոյթ տալ, մի բան, որ անկարող եղան փիլիսոփայական և կենսաբանական դպրոցները և որ այս վերանորոգուած սօցիօլօգիայի բարեբար ազդեցութեան տակ բոլոր ջոկ ջոկ սօցիալական գիտութիւնները նոր և փառաւոր կեանքի համար յարուսթիւն կառնեն:

Նոր դպրոցը չի ճնշում այն դպրոցներին, որոնք ազնիւ պայքարի մէջ նրանից առաջ են եղել, այլ ընդհակառակը աշխատում է նրանց արտայայտած կիսատ ճշմարտութիւնները հաւաքել և կարգաւորել: Նա օգուտ է քաղում Կօնտի հետախուզութիւններից, որոնք վերաբերում են բանականութեան գործօնի ազդեցութեանը հասարակութեան զարգացման վրայ, ցոյց է տալի միաժամանակ, որ այս ուժեղ գործօնը իւր հերթին առաջ է եկել և որոշուել տնտեսական գործօնի ամեն ինչ ծածկող ոյժի ազդեցութեան տակ: Նա կենսաբանական գործօնն էլ է հաշուի առնում. բայց նա

*) Վաղուց է թողել այդ հայեցակէտը. Թարգմ.

միաժամանակ ուշք է դարձնում այն բանի վրայ, թէ ինչպէս նա տնտեսական պայմանների ամենազօր ազդեցութեան տակ պարզւում է և բարձրանում: Շատ հեռու լինելով միւս գաղափարների արդիւնքները ոչընչացնելուց, նոր ուսմունքը իւր սեփական հետախուզումների միջոցով նրանց կարգաւորում է մի կարգաւորուած և կանոնաւոր ամբողջութիւն կազմելով: Առանց թագցնելու ասում եմ առաջուց. զինուած նախկին գաղափարների արդիւնքներով, ազատ որևէ կուսակցական միակողմանիութիւնից և լուրջ, ապացուցուած հաշիւներով ու գիտողութիւններով սօցիոլոգիան տրնտեսական հիմք ունենալով ոչ շատ ուշ իրեն ընդունակ ցոյց կտայ հասարակական կեանքի հանելուկը լուծելու և մեր տանջուած հասարակութիւնների համար մի ժպտուն ու լուսաւոր ապագայ նախապատրաստելու:

ՎԵՅԵՐՈՐԴ ԴԵՍՍԵՍՍՈՒԹԻՒՆ

Համեմատական սօցիոլոգիա

Եթէ ճիշտ է, որ գիտութեան զանազան ճիւղերը էապէս հետազօտութեան նոյն մեթոդին են հետևում (վերլուծութիւն և համադրութիւն, գիտողութիւն և փորձ), նոյնքան էլ ճիշտ է, որ զանազան գիտութիւններ հակում են այս կամ այն քննութեան մեթոդին, շնորհիւ իրենց քննութեան նիւթ առած երևոյթների զանազան բնաւորութիւններին: Կարելի է ասել, որ իւրաքանչիւր գիտութիւն, այսպէս ասած, ունի իւր սեփական արտաքին նշանը, որ նա իւր քոյրերից բա-

ժանւում է իւր յատուկ մեթոդով, որը նա գործ է ածում կամ ամենից աւելի այդ է գործածում և որ նրա մեթոդի առանձնայատկութեան մէջ աւելի քան նրա միւս արտայայտութիւններում, նրա նիւթի առանձին ձևը, նրա հոգեկան շրջանի գծագրութիւնը ամենից աւելի է փայլուն երևում: Տարրական գիտողութիւնն իսկ բաւական է ցոյց տալու համար, որ սօցիոլոգիայի գերակշռող մեթոդը կամ այն, որին նա պարտական է իւր կարևոր յառաջադիմութիւնը, համեմատական մեթոդն է, ուստի մեր գիտութիւնը, եթէ յարակցութիւն ունի բարոյական, քաղաքական և իրաւական գիտութիւնների հետ, հետազօտութեան մեթոդի տեսակէտից աւելի սերտ կապուած է մարդաբանական և կենսաբանական բնական գիտութիւնների հետ:

Սօցիոլոգիայում համեմատական մեթոդը երեք բոլորովին տարբեր ձևեր է ստանում, նայելով թէ այն սօցիալական օրգանիզմները, որոնց նա հանդիպում է, ինչպէս են փոխւում. ըստ այս համեմատութիւնը կարող է լինել, լեզուաբանական գիտական զարգացողական պատմական և գաղութային:

Լեզուաբանութիւնը սօցիալական գիտութեանը տալիս է մի անսպասելի և ուժեղ միջոց շնորհիւ մի մեթոդի, որը ինչպէս բոլոր հանճարեղ գիւտերը, զարմանալի պարզութիւն ունի: Իսկապէս այն ազդակցութիւնը, որը լեզուաբանութիւնը գտաւ հնդ-եւրոպական ազգային լեզուների մէջ, ըստինքեան ցոյց է տալի, որ այս բոլոր ժողովուրդները մի բուն արմատից են ելել, որտեղից նրանք, շնորհիւ ամենահին ժամանակ կատարած զաղթականութեան դէպի իրենց ներկայ բնակավայրը, ճիւղաւորուել են: Երբ մի որոշ առարկայ կամ գոյութիւն ունեցող կարգ զանազան հնդ-եւրոպական լեզուներում այն խօսքերով են արտայայտուած,

որոնք նոյն արմատն ունեն, այստեղից հետեւում է, որ այդ առարկան կամ կարգը այդ բնիկ ժողովրդին ծանօթ էր գաղթականութիւնից առաջ, երբ ընդհակառակը զանազան հնդ-եւրոպական լեզուներ զանազան արմատներ են գործ ածում նոյն առարկան որոշելու համար, այստեղից հետեւում է, որ այդ որոշ առարկան այն առաջին ժողովրդին անծանօթ էր ցրուելուց առաջ: Այս արուեստի շնորհիւ մարդ կարողանում է բաւական ճիշտ որոշել այն կուլտուրայի չափը, որը ունէր այդ նոյն արմատից սերած ժողովուրդը գաղթականութիւնից առաջ եղած շրջանումն նրա գործ դրած կարգերը, սօցիալական կազմակերպութեան հիմնական գծերը. այս նշանակում է, որ մեր ծանօթութիւնների շրջանը ընդլայնւում է, որքան այս կախուած է պատմական և հնագիտական վաւերագրերից:

Անկասկած առաջին վայրկեանում այս մեթոդի ճշմարտութեան դէմ են ելնում ուշադրութեան արժանի շատ կասկածներ: Նախ պէտք է ընդունել, որ ձայնարանական արմատների տարբերութիւնը, որ զանազան ազգեր նոյն առարկան որոշելու համար գործ են ածում, չի ցոյց տալի դեռ ևս այդ առարկայի նոր լինելը: Իսկապէս ով ուշադրութիւն է դարձրել այն անժխտելի իրողութեան վրայ, որ գաղութները իրենց առաջին շրջաններում մի զարմանալի նման պատկեր են ներկայացնում իրենց մայր երկրի դրութեանը, նա պէտք է ընդունի, որ շատ կարգեր, որոնք այդ նոյն արմատ ժողովուրդը իւր ցրուելուց ժամանակ ունէր, իւր խառն կազմութեան առաջին շրջաններում չի կարողանում ամբողջապէս պահել: Այս պատճառով պէտք է նոյնարմատ ժողովուրդը սկզբում այն կարգերն արտայայտող բառերը իւր հիմնած խառն կազմակերպութեան մէջ անպայման մոռացութեան

տար, յետոյ, երբ նրանք այս կարգերը ընդունեն, ստիպուած են մի նոր խօսք գտնել այդ որոշելու համար: Ուստի զանազան եւրոպական ազգերի միևնոյն առարկայի համար գործադրած խօսքերի տարբերութիւնը չի կարելի իբր անպայման և աներկբայելի ապացոյց բերել այն բանի համար, որ այդպիսի մի առարկայ նոյնարմատ ժողովրդին իւր ցրուելուց առաջ անծանօթ էր: Յետոյ սկզբնական բուն ժողովրդից գաղթած մարդիկ պէտք է վայրենի և անհիւրընկալ երկրներ անցնէին և նոյնիսկ երկար ժամանակ այն տեղերում բնակուէին, հօրեաների մէջ, որոնց որեւէ սովորութիւն անմատչելի էր: Շատ բնական է, որ այդպիսի պայմաններում սկզբնական հայրենիքից հետո բերած շատ սովորութիւններ չպէտք է գործադրուէին և դրա հետ միասին դրանց համապատասխան բառերն էլ պիտի կորչէին: Ուստի սկզբնական, բուն արմատից ելնող խմբերը, եթէ յետոյ կամենային այդ կարգերը ընդունել, պէտք է նոր բառեր ստեղծէին նրանց որոշելու համար: Այսպիսով են բացատրում շատ լեզուաբաններ Եւրոպայի զանազան ազգերի մէջ աղ բառի գործածութիւնը, որը զանազան արմատներ ունի: Իսկապէս այսպիսի մի տարբերութիւն չի կարելի մէջ բերել իբրև արդիւնք կամ նշան այն բանի թէ սկզբնական ժողովուրդը աղի գոյութեանը կամ նրա գործածութեանը ծանօթ չէր. այլ այս կարելի է նրանով բացատրել, որ զանազան ժողովուրդներ, մայր արմատից բաժանուելով, դարեւ շարունակ ապրել են այնպիսի երկրներում, ուր աղ անյայտ էր, մինչև որ վերջնականապէս մի տեղ հաստատուեցին: Միւս կողմից զանազան եւրոպական ազգերի միևնոյն առարկան որոշող արմատների նոյնութիւնը չի նշանակում անպայման, որ այդ առարկան մայր

ժողովրդին դեռ բաժան բաժան լինելուց առաջ ծանօթ էր. հեշտ կարող է պատահել, որ այդ առարկան կամ կարգը բաժանուած ժողովուրդը գտել է կամ առաջին անգամ գործ է ածել և սրանից էլ ժողովրդների մէջ տեղի ունեցող վաճառականութեան և միջազգային յարաբերութիւնների շնորհիւ անցել միւս միւս ժողովրդներին: Օրինակ զանազան եւրոպական լեզուներում խոփ (թփւց, пугъ) բառի համար գործածուող բառերը այս ձևով են բացատրուել, իսկ խոփը յամենայն դէպս նախաարիացիներին, երևում է, որ անծանօթ է եղել:

Այս առարկութիւնները (ոչ շատ առաջ կովալեակին իւր օրինակելի գրուածքում շեշտել է այս մասին) անշուշտ մեծ արժէք ունին: Սակայն թէև անկասկած սրանք համեմատական լեզուաբանութեան մեթոդի կարեւորութեան չափը կրճատում են, թէև սրանք տաժանելի պարտք են դնում նրա վրայ, ով ուզում է այդ մեթոդը որևէ կերպ գործածել, այնուամենայնիւ նրան բացասել չեն կարող և այս մեթոդի բարձր արժէքը կամ արժէքաւոր ծառայութիւնը, որ նա սօցիոլոգիային մատուցանում է, չեն կարող խուլացնել: Սա օգնում է վերջապէս իմանալու այն գաղտնիքը, որով ծածկուած էին եւրոպական ժողովուրդների նախասկզբները և նշանակելու սկզբնական բարբարոսութեան հիմնական գծերը, որոնցից ծագել է մեր կուլտուրան: Այն նկարագրութիւնը, որ մեր ամենահին նախնիների մասին համեմատական լեզուաբանութեան մեթոդը տալիս է, մեզ չպէտք է կարմրեցնի: Այնպէս պէտք է լինէին հնդեւրոպական նախաժողովրդի բնութագծերը իւր գաղթելուց առաջ, ինչպէս նորադոյն և յայտնի հետազօտութիւնները ցոյց են տալի. նոքա էլ հիմք եղան տարբեր հնդեւրոպական ազգութիւններին: Հնդօ-գեր-

մանները համարեա թէ բոլորովին չգիտէին մետաղների գործածութիւնը և գործ էին ածում քարէ գործիներ և կարասիներ. նոքա ունէին մի քանի ընտանի կենդանիներ, օրինակ ձի, որին գործ էին ածում իբրև սննդի միջոց, որովհետև ձի հեծնելը նրանց անծանօթ էր: Հողագործութիւնը և նրա հետ կապուած անհատական և համայնական սեփականութիւնը նրանց անծանօթ էր, ինչպէս և գինին. նրանք սակայն գիտէին մանելը և գործելը: Հնդօ-գերմանները երբէք ծով չէին տեսել և ձկնորսութիւն չգիտէին, նոքա գիտէին փոխանակութիւնը և արժէքի չափն էլ եղջիւրաւոր կենդանին էր: Նոքա գործ էին ածում մի քանի ծանրութեան և երկայնութեան չափեր, բոլորն էլ տասնորդական հիմք ունեցող. կարողանում էին մինչև 100-ը հաշուել: Նոքա երկար ալիքներից կազմուող գոյներն էին զանազանում (կարմիր, դեղին), իսկ կարճ ալիքներից կազմուողները՝ ոչ (կանաչ, կապոյտ), որը պէտք է այն իրողութեամբ բացատրել, որ առաջին գոյները նրանք շատ տարածուած կենդանիների մորթիների վրայ տեսնում էին: Նոքա տարբերում էին ձմեռն ու ամառը և ամիսները հաշուում էին լուսնի շրջանի համաձայն. տարուայ մասին գաղափար չուէին, որովհետև լուսինն էր նրանց ժամանակի չափը, նոքա ոչ թէ օրերը, այլ գիշերներն էին հաշուում: Յերեկն ու իրիկունը տարբերում էին, իսկ օրուայ այլ բաժանումներ չգիտէին, մի բան, որ ի միջի այլոց, բոլորովին աւելորդ կլինէր, եթէ մարդ ի նկատի ունենայ նախապատժական միայն ապրուստի համար ջանացող կեանքի յետաձնաց պայմանները: Նոքա ապրում էին ստորերկրեայ ճիւղերում կամ փայտէ խրճիթներում. ունէին յարձակման, բայց ոչ պաշտպանութեան զէնքեր: Այս շատ բնական է, որովհետև պաշտպանութիւնը միայն յարձակումից յե-

տոյ է հանդէս դալիս և ժամանակագրական կարգով պաշտպանութեան զէնքերը յարձակման զէնքերից յետոյ պէտք է երևային: Այս մի առարկութիւն է Ամմոնի դէմ, որը պնդում է, թէ մարդկանց մէջ նրանց հետ ծնուած է պաշտպանութեան մի բնագր, որը և մեր նախահայրերին համաձայնութեան է տարել: Իսկապէս այս ենթադրութիւնը, որ մարդիկ պաշտպանութեան բնագրով են սպառազինուած, այնքան հեռու է ճշմարտութիւնից, որ մարդկանց հասարակութիւններ կազմելու սկզբներում, երբէք պաշտպանութեան զէնքերը ծանօթ չեն եղել: Հին հնդ-գերմանները մշտական քաղաքական կազմակերպութեան ոչ մի ձև չունէին և բաւականանում էին նրանով, որ ընդհանուր վտանգի ընդդէմ ժամանակակից քաղաքական կազմակերպութիւն էին ստեղծում: Նախաժողովուրդը կրօնական էր. նրա կրօնը բնութեան ոյժերի երկրպագութիւնն էր, որոնց վերագրում էին մի չար ոգու ոյժ. նոքա բարոյակա-նութեան օրէնք կամ կարգի ազդեցութեան մարդկանց կենցաղի վրայ չունէին. հանդերձեալ կեանքի գաղափարն էլ պակասում էր. աստուածները մի որևէ սրբա-վայրում չէին պաշտում, այս կոյս անտառների ծառերի տակ, որոնց սրբացրել էին ժողովրդի ջերմե-ռանդութեամբ:

Այս են մեր նախապատմական հայրերի կեանքի և սօցիալական կազմակերպութեան հիմնական գծերը, որոնց վերարտադրել է համեմատական լեզուաբանու-թիւնը շնորհիւ իւր հետազօտութիւնների. այս է խորհրդաւոր Ատլանդիսը, որը կլանել է դարերի ովկիա-նոսին և որին նոր գիտութիւնը իւր կախարդական ոյժի շնորհիւ ստիպել է այդ բոլորը իւր հոսանքներից դուրս հանել: Այս մի նոր հորիզոն է, որը բառերի գի-տութիւնը իրերի գիտութեան համար բաց է անում:

սա մի նոր աշխարհ է, որը պատրաստուել է սօցիոլո-գիայի հետազօտութիւնների համար, ուր նա պէտք է ուրախութեամբ մտնի և այնտեղ երկարատև ու ազնիւ պտուղներ ժողովի:

Շնորհիւ այս ցոյց տուած մեթոդի վերջապէս հնա-րաւոր է մարդկային հասարակութիւնների ամբողջական կարգը ներկայացնել դասաւորելով այն ի նկատի ու-նենալով կուլտուրայի յառաջադիմութեան տատիճան-ները: Շարքի սկիզբն է նախաժողովուրդը, որի մասին համեմատական լեզուաբանութիւնը ցոյց տուած ձևով ամենաընդհանուր նշաններն է տալի. այնուհետև գա-լիս են այն ժողովուրդները, որոնք քաղաքակրթու-թեան աւելի բարձր աստիճան ունեն, վերջապէս նրանք, որոնք այսօրուայ քաղաքակրթութեան բարձրութեան վրայ են կանգնած: Այս ձևով դասաւորուած ժողո-վուրդների համեմատութիւնը մի արժէքաւոր օժան-դակ միջոց է հետախուզելու համար սօցիալական կար-գերը, նրանց ծագումը և նրանց գլխաւոր յատկութիւն-ները: Մինչդեռ լեզուական հետազօտութեան ղեպըում նախ նմանութիւններն են քննութեան առնուում, սօ-ցիալական ձևերը համեմատելիս նախ պէտք է տար-բերութիւնները քննել: Անկասկած հնարաւոր է միշտ սօցիալական երևոյթների նման արտայայտութիւնները աշխարհիս զանազան ժողովուրդների մէջ համեմատել, բայց մի այդպիսի համեմատութիւնից շատ քիչ օգուտ կստացուի և չի կարելի կարեւոր եզրակացութիւններ հանել: Եթէ երևայ էլ, որ մի երևոյթ կամ մի կարգ բացարձակ նոյն ձևերով զանազան ժողովուրդներ ու-նեն, այս իրողութիւնից իսկապէս ոչինչ չի կարելի եզրակացնել, ևս առաւել որ ցեղերը ազգակցական կապ ունեն կամ որ երկու ժողովուրդներն էլ ընդ-հանուր ծագումն ունեն. յայտնի է թէև աշխար-

հիւ բոլոր ժողովուրդներն էլ իրարից տարբեր են, իրենց զարգացման որոշ աստիճանի վրայ նման կամ քիչ տարբերուող կարգեր են ունենում: Ընդհակառակը այն օգուտը, որ սօցիալական տարբերութիւնների հետադասութիւնից կարող ենք ստանալ, ուշադրութեան արժանի է: Գիտենք, որ մի երևոյթի կամ կարգի նախկին արտայայտութիւնները, որոնցից և ոչ մի հետք չի մնացել քաղաքակրթուած ժողովուրդների մէջ, ուսումնասիրելով պակաս քաղաքակրթուած ժողովուրդներին, որոնք դեռ պահել են այդ արտայայտութիւնները կամ հասկանալի հետքեր են թողել, յայտնի և հասկանալի են դառնում: Նմանապէս սօցիալական մնացորդների կամ այն երևոյթների, որոնք մի նախկին սօցիալական շրջանի մնացորդներն են, ուսումնասիրութիւնը անհրաժեշտ է այս շրջանը իւր հիմնական գծերով վերակազմելու համար: Աւելի տարբեր և շատ աւելի բարձր նպատակի է հասնում այն համեմատութիւնը, որը կատարւում է իրարից տարբեր և մանաւանդ շատ հեռու սօցիալական ձևերի կամ զարգացման աստիճանների իրարից շատ հեռու գտնուող ժողովուրդների վերաբերմամբ:

Եթէ յիշուի համեմատենք սօցիալական զարգացման աստիճանների ամենից ցածրի վրայ գտնուող ժողովուրդներին նրանց հետ, որոնք քաղաքակրթութեան ամենաբարձր աստիճանի վրայ են գտնուում, կտեսնենք ինչքան քիչ կան այսօրուան կարգերից առաջին մարդկային միութիւնների մէջ և մենք կարող ենք այս կարգերի ծագումը և նրանց ձևափոխութիւնը լիովին տեսնել, թէ ինչպէս նրանք այդ բոլորը սկսան ժինչ և որ հասան ներկայ ձևին: Այսպիսի մի ուսումնասիրութիւն ըստինքեան ցոյց է տալի, ինչպէս սօցիալական ամենակարևոր կարգերը, որոնք շատ հե-

ռու են մի ամենաբարձր, անմահ նախախնամութիւնից մարդկանց վրայ դրուած լինելուց յաւիտենապէս, արդիւնք են պատահական և անցողակի պատճառների, այսպիսով հասնում ենք այն բանին, որ սօցիալական յարաբերութիւնների վրայից խլւում է նրանց անմահութեան այն թագը, որով գիտութիւնը կամ անցեալ դարերի անգիտութիւնը նրան զարդարել էր և տալիս ենք նրան անցողակի ստեղծագործութիւնների համեմատ տեղը, որը ենթարկուած է ծագման և ոչնչացման մի յաւիտենական պրօցէսսի: Սօցիալական յարաբերութիւնների պատմական լինելութեան ապացոյցը չի սահում միայն վերացական սպեկուլացիաների ուղիով. նա ինքը իրեն բաց է անում ճանապարհ դէպի քննադատութիւնը, որը սակայն ի նկատի ունենալով նրա օրգանական դրութեան անփոփոխութիւնը a priori դուրս կմնար:

Այն համեմատութիւնը, որին մենք զարգացողական պատմական ենք անուանում, որը համեմատում է զարգացման զանազան շրջանների ժողովուրդներին, նրա համար է միայն, որ մարդկային կարգերի պատմական բնոյթը պարզաբանի, իսկ իւր ձևով և սահմաններով պէտքական չէ հետադասուած երևոյթների պատճառները բացատրելու համար: Որպէս զի հնարաւոր լինի համեմատութիւնը այն ժողովուրդների մէջ, որոնք իւրարից toto coelo *) տարբեր են, ինչպէս հողեբանական և մարդկային գործօններով (կուլտուրա, լեզու, կրթութիւն, տեխնիկական զարգացում, բարոյականութիւն, իրաւունք և այլն) նոյնպէս և արտաքին ու բնական գործօններով (կլիմա, տիրապետութիւն գրաւելու պայմաններ, հողի և գետնի գրաւումն, արդիւնաբերութիւն

*) Մինչև երկինք.

և այլն) չենք կարող ասել, որ հնարաւոր է ուղղակի պարզել, թէ այն տարբերութիւնը, որ կայ այս ժողովուրդների սօցիալական կազմութեան մէջ, արդեօք այս բոլոր գործօնների տարբերութիւնից է առաջ գալի, թէ միայն մէկից: Հետեապէս անկարելի է պնդել, թէ սօցիալական օրգանիզմը արդիւնք է միայն հոգեբանական կամ արտաքին կամ մէկ կամ միւս գործօնի: Այսպիսով սօցիալական պատճառի խնդրի լուծումը, դժբախտաբար անլուծելի է մնում:

Որպէսզի այս հարցի որոշ լուծումը ստանանք, աւելի նպատակայարմար կլինէր այն երկրները համեմատել, որոնք ոչ բոլոր սօցիալական գործօններով են տարբերւում միմեանցից, այլ միայն մի քանիսով: Օրինակ նպատակայարմար կլինէր, որ մի կողմից բոլոր հոգեբանական, միւս կողմից բոլոր արտաքին տարրերը հաւաքէինք, որոնք որեւէ կերպ սօցիալական կեանքի վրայ ազդեցութիւն ունենալ կարող են և ապա այն երկրները համեմատէինք, որոնք կամ առաջին կամ երկրորդ տարրով իրարից տարբերւում են: Երբ մենք համեմատենք երկու ժողովուրդ, որոնք միայն երկրի գործօններով են տարբերւում և գտնենք, որ նրանց սօցիալական կազմութիւնը էապէս տարբեր է իրարից, կարող ենք անմիջապէս հետեցնել, որ հողը զբաւելու և հողի արդիւնաբերութեան պայմանները յիշաւի սօցիալական կազմութեան մէջ շատ էական գործօններ են: Սակայն այս մեզ իրաւունք չի տալ ժխտելու, որ միւս տեսակի տարրերը, հոգեբանական և մարդկային տարրեր, սօցիալական կազմի մէջ նմանապէս գործօններ են, ուստի մեր եզրակացութիւնը շատ հեռու կլինի ընդհանուրի համար նշանակութիւն ունենալուց և ճշգրտութեան ցանկալի աստիճանից: Այսպիսի մի նիւթի վերաբերմամբ լրիւ պատասխան տալու համար

յարմար է համեմատել երկու երկրներ, որոնք միայն և միայն հոգեբանական գործօններով են տարբերւում: Եթէ երևայ, որ այս երկրները բոլորովին նոյն սօցիալական կազմն ունեն, ստիպուած ենք եզրակացնելու, որ միայն հողի արդիւնաբերութեան և զբաւման պայմանները կամ աւելի կարճ տեղի պայմանները խոշոր ազդեցութիւն ունեն սօցիալական կազմութեան վրայ և մարդկային ներքին պայմանները այս դէպքում մի յամր դեր են կատարում կամ պատմութեան արիւնոտ դրամայում լուռ դերակատարներ են: Հակառակ եզրակացութիւնը հանդէս կգայ, երբ մենք մի քանի ժողովուրդներ, որոնք տարբերւում են միայն հոգեբանական պայմաններով, ունենան տարբեր սօցիալական կազմութիւններ և այն ազդերը, որոնք միայն տեղային պայմաններով են իրարից տարբերւում, սօցիալական կազմութեան կատարեալ նոյնութիւն ունենան:

Այսպիսի մի համեմատութիւն արդիւնաւոր հետեանքներով և գեղեցիկ կերպով կարելի է կատարել շնորհիւ զաղութների գոյութեանը: Յիշաւի, եթէ մենք մի գաղութ, ինչպէս նա որոշ մեզ տրուած ժամանակում կայ, համեմատենք մայր երկրի հետ, ինչպէս վերջինս է նոյն ժամանակում, մենք համեմատած ենք լինում երկու երկրներ, որոնք կատարեալ նոյնութիւն ունեն ամեն բանում. ինչ վերաբերում է ցեղին, կրօնին, կուլտուրային, կրթութեանը, մուսկուլների ոյժին, վերջապէս այն ամենին, ինչ որ վերաբերում է հոգեբանական կամ ընդհանուր մարդկային տարրերին, մինչդեռ նրանք տարբերւում են կամ հիմնական հակադրութիւն են ներկայացնում այն ամենում, ինչոր վերաբերւում է հողի արդիւնաբերութեանը կամ զբաւմանը, որովհետեւ մայր երկրում ամբողջ հողը զբաւուած է և մեծ մասամբ մշակուած, մինչդեռ գաղութում հողի մեծ

կտորներ անմշակ են և դեռ սեփականութիւն չեն դարձել: Եթէ գաղութի սօցիալական կազմը մի որոշ ժամանակում էապէս մայր երկրից տարբերուում է, մի այդպիսի տարբերութիւն մենք չենք կարող հոգեբանական գործօնների ազդեցութեանը վերագրել, որ երկու երկրներում էլ նոյնն են, այլ մենք պէտք է նկատենք այդ իբրև արդիւնք արդիւնաբերութեան և գրաւման պայմանների. այս պատճառով մենք իրաւացի կլինենք պնդելու, որ տեղային պայմանները սօցիալական կազմակերպութեան մէջ անհրաժեշտ գործօններ են: Այս բոլորը չի բացասում այնուամենայնիւ այն ճշմարտութեանը, որ մարդկային և հոգեբանական տարրերը մի և նոյն ժամանակ նպաստում են հասարակութեան կազմը որոշելու համար: Բայց մենք համեմատենք գաղութը իւր գոյութեան մի որոշ ժամանակում մայր երկրի մի աւելի նախնական շրջանի հետ, երբ ազգաբնակչութեան խտութիւնը, հողի գրաւումն ու արդիւնաբերութիւնը նման էին այն պայմաններին, որոնք այժմ գաղութում կան: Պարզ է, որ մենք համեմատում ենք իսկապէս երկու երկիր, որոնք միայն և միայն մարդկային և հոգեբանական տարրերով են իրարից տարբերուում, իսկ տեղային տարրերը կամ հողի գրաւման և արդիւնաբերութեան պայմանները երկու ժողովրդների մէջ էլ բոլորովին նման են. բայց գաղութում ծաղկած քաղաքակրթութիւն կայ, մինչդեռ մայր երկրի նախնական ժամանակում բարբարոսութիւնը նախնիներ է գործում. ցեղը, կրօնը, գիտութիւնը, տեխնիկական զարգացումը, բարոյականութիւնը երկու երկրներում իրարից շատ տարբեր են, իրար բոլորովին հակառակ են երևան գալի: Եթէ այնուամենայնիւ գաղութի սօցիալական կազմակերպութիւնը մայր երկրի նախնական շրջանի կազմակերպութեան հետ կատարեալ նմա-

նութիւն է ցոյց տալի, երբ տեղական պայմանները գաղութի պայմանների հետ կատարեալապէս նման են, պէտք է եզրակացնել, որ մարդկային տարրը հասարակութեան կազմակերպութեան վրայ ոչ մի ազդեցութիւն չի թողնում, որ նա սօցիալական գործօն չէ, որ սօցիալական և տնտեսական կազմակերպութեան միակ ծնողը հողի սեփականացման և գրաւման աստիճանն է:

Իսկապէս ամերիկական և երոպական գաղութների սօցիալական զարգացման վերլուծութիւնը ցոյց է տալի, որ նոր հասարակութիւնները, տնտեսական, իրաւական և այլ այնպիսի յարաբերութիւններ ունին, որոնք բոլորովին տարբեր են մայր երկրի նոյն ժամանակուայ կազմակերպութիւնից և միանգամայն նման են մայր երկրի նախկին շրջանի հետ, երբ նրա տեղային պայմանները նման էին գաղութի պայմանների հետ: Վերջիններս սկսում են պարզ անհատական սեփականութիւնով, որը շուտով փոխւում է համայնական սեփականութեան և այս ձևով վերադառնում է անթիւ ձևափոխութիւններով եւրոպական հասարակութեան նախնական շրջանը: Այնուհետև նրանց մէջ սկսւում է ստրկութիւնը, որը ստանում է նման ձևեր այն ձևերին, որ կային հին եւրոպայում. ստրկութեան պատճառով գաղութներում զարմանալի նմանութեամբ կենդանանում են յոյն-հռոմէական հին դարու իրաւաբանական գաղափարները, բարոյական հայեացքները և քաղաքական հաստատութիւնները: Այնուհետև գաղութները ներմուծում են հողատիրութիւնը, համբարութիւնը և միջնադարեան ամբողջ աւատական կազմը, որը եւրոպայում այնքան երկար ժամանակ իշխող էր: Միայն այս զարգացման վերջը, երբ այնտեղ հողը ամբողջապէս գրաւուած է, ինչպէս այժմեան եւրոպա-

յում, գաղութներն էլ ունենում են վարկի սխտեմը և նրանից բխող սոցիալական յարաբերութիւնների որոշ, բարդ շարժառիթը: Ինչպէս մարդը իւր մօր արգանդում անց է կացնում օրգանական զարգացման բոլոր շրջանները, նոյնպէս մարդկութիւնը իւր գաղութային կեանքում անց է կացնում վերօրգանական զարգացման բոլոր շրջանները:

Գաղութային այս համեմատութեան արդիւնքը մեծ կարևորութիւն ունի սօցիօլօգիայի համար, որովհետև սրանով ջրում են այն բոլոր սխտեմները, որոնք սոցիալական զարգացման մէջ բանականութիւնը կամ նրա զանազան արտայայտութիւններն են պատճառը ունենում: Ինչպէս կարելի է Կօնտի կամ Բօկլի տեսութիւնները պաշտպանել, որ սոցիալական երևոյթը բանականութեան զարգացման արդիւնք է, կամ Հէգելի գաղափարը, թէ պատմութիւնը իդէայի աստիճանական զարգացման հետզհետէ արտայայտուելն է, կամ Լասսալի աֆօրիզմի հետ, որ մարդկային հոգին պատմութեան մէջ հետզհետէ դառնալն է: Ինչպէս կարելի է Մարքսի մտքերի հետ հաշտուել, որ նիւթական արտադրական ոյժերի զարգացումը ըստինքեան ծնում է սոցիալական ձևերի յառաջադիմող շարքը կամ Կիզդի հետ, որը կրօնական իդէայի զարգացման մէջ է տեսնում յառաջադիմութեան լծակը, երբ ապացուցուած է, որ մի նոր մարդկութիւն, որը ուժեղ է իւր բանական, տեխնիկական, կրօնական ժառանգութեամբ, որոնց հաւաքել են նախկին հարիւրաւոր սերունդներ, ստիպուած է նախաժամանակի տնտեսական և սոցիալական յարաբերութիւնները ունենալ միայն այն պարզ իրողութեան պատճառով, որ նա մի այնպիսի երկրում է հաստատուել, ինչպիսին նախաժամանակի մարդկութիւնն ունէր: Գաղութների քաղաքակրթութիւնը, որը

Ֆիզիքական բնութեան պայմաններից անկախ է և հիմնուած է մարդկային հոգեբանական պայմանների վրայ, մի հրամայողական բացասումն է այն կարծեցեալ կոփման, թէ մարդկային քաղաքակրթութիւնը հասարակութեան բանական և բարոյական զարգացումից է կախուած. նա աւելի ամրացնում է այն գաղափարը, թէ սոցիալական պատմութիւնը խիստ կախուած է բնութիւնից, մի հրաշալի, մեքենայական սինտէզից մարդու և դրսի աշխարհի:

Այս տեսակէտից գաղութների համեմատութիւնը յաջողութեամբ հասնում է այն բանին, որ աշխատում է սոցիալական երևոյթների առաջին պատճառների առեղծուածը լուծել, մի բան, որ նախկին սօցիօլօգիական հետազօտութիւնները բոլորովին անլուծելի էին թողել: Իսկապէս մատերիալիստական պատմահայեցողութեան դպրոցը, որը բոլոր սոցիալական երևոյթները համարում է առաջացած տնտեսական յարաբերութիւններից, չի կարողանում բացատրել, թէ այս ամենազօր տնտեսական դրութեան պատճառը ո՞րն է, որից կազմւում է մարդկային հասարակութեան ամբողջ գրութիւնը: Գաղութների համեմատութիւնը բարեբախտաբար կարողանում է այդ լուծել, երբ նա ցոյց է տալի, թէ ինչպէս տնտեսական յարաբերութիւններն էլ երկրի գրաւման և արդիւնաւորութեան աստիճանի արդիւնք է և այս ձևով նա կարող է սոցիալական երևոյթների հարուստ խումբը կապել իրար մի միակ պատճառի իշխանութեան տակ դնելով նրանց:

Այս են յիշատակելու արժանի այն գործածութիւնները, որ մինչև այժմ ստացուել են, այն հիմնական ձևերը, որ համեմատական մեթոդը սօցիօլօգիայի մէջ առաջ է բերել: Բայց այս հասկանալի է միայն հետազօտութեան սկզբին, որը նպատակ ունի շատ գոր-

Ճուշտութիւններ բերելու և շատ արժէքաւոր պտուղներ քաղելու: Յամենայն դէպս մինչև այժմ եղած արդիւնքներից կարելի է գուշակել, թէ ինչ արդիւնքների կարելի է հասնել: Յանդգնութիւն չի պնդել, որ այդ պիտի մի մեթոդ մարդկային հասարակութեան մէջ եղած անդունդներում կենդանի լոյսի ճառագայթներ կսփռի, երբ նա իւր յաղթական հետեանքներով մինչև այժմ իշխող բռնավարութեան ձեւը բոլորովին կհեռացնի: Եւ գիտեմ մի ֆրանսիական առած, որը երևի այլ ժամանակների մետաֆիզիք կրթութեան ժողովրդական գտման է ենթարկուած, արժանավայել ձևով այս վճիռն է տալի թէ «comparaison n'est pas raison» *) Սակայն առածներն էլ մասն ունեն անցողակի պատահմունքներում, որոնք յատակ են բոլոր մարդկային ստեղծագործութիւններին և կազմակերպութիւններին: Նոր մեթոդի արդիւնքները կարող են, հակառակ տարածուած առածի, ապացուցանել, որ երկրի խորհրդաւոր պատճառը աւելի շուտ իրողութիւնների իրար ընդհարման մէջ պէտք է փնտռել, քան թէ տրամաբանական վարժութիւնները դիտելու մէջ: Նոր գիտութեան համար շատ յարմար է գալի հնդկական գեղեցիկ լէգէնդան կրակի ծագման մասին, որից երևում է, որ մինչդեռ Անգի, լուսոյ աստուծոյ, քրմի ջերմեռանդն աղօթքները անկարող եղան նրա համար մի կայծ անգամ դուրս կորզելու, ուրախացող ժողովուրդի ուսանանների հետ զոհաբերութեան արարողութեան ժամանակ իրար քսուող փայտերից առաջացան կենսատու բոցը դարձաւ մի կայծակ:

*) Համեմատութիւնը գեո հիմք չէ.

ԵՅԹՆԵՐՈՐԴ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ընտանիքի սօցիոլոգիական հետազոտութիւնը

Մի իսկական գիտակարգի արժէքը աւելի լաւ երևում է այն բանում, թէ նա որքան ընդունակ է այս կամ այն որոշ հարցը լուծել, կամ նրա հետազոտութեան նիւթ կազմող եզակի երևոյթները վերլուծել, քան թէ նրա ընդհանուր սխտեմատիկ ուսման մէջ: Հասկանալու համար սօցիոլոգիայի կատարած գործը և արդիւնաւորութիւնը, ամենից լաւն է հետազոտել մի քանի կարևոր, նրա քննութեան շրջանը մտնող, պրօբլէմների վերաբերեալ նրա տուած լուծումները: Այս պրօբլէմներից մէկի լուծման մէջ աւելի քան որեւէ մի ուրիշի կարելի է տեսնել նորագոյն սօցիոլոգիայի էական տեսութիւնը—որ սօցիալական երևոյթների պատճառը տնտեսականն է և վերջինիս մէջ էլ տրամաբանական իշխող պրօցէսսը, որին իւր մէջ է ամփոփում համեմատական մեթոդը: Այս պրօբլէմը ընտանիքի ծագմանն է վերաբերում, նրա իրար յաջորդող ձևափոխութիւններին, նրա, մօտաւորապէս հասկանալի, ազագայ վիճակին: Ուստի մեր հետազոտութիւնների մէջ աւելի քան մի այսպիսի հետաքրքիր հարցի վրայ պէտք է դարձնենք մեր ուշադրութիւնը:

Աւելի հասարակ, պարզ, տարրական բան չկայ, քան թէ այս նուրբ նիւթի վերաբերեալ մինչև 19-րդ դարու կէսը իշխող կարծիքներն են: Մինչև այդ շրջանը ընդհանուր կողմից ընդունուած հաւատն այն էր, որ ընտանիքի նոր ձևը մարդկային ցեղի բոլոր շրջան-

ներում իշխել է առանց փոփոխութիւնների: Ամեն ժամանակ, ասում էր ընդհանուր կարծիքը, ամենահին ժամանակից սկսած մինչև նորը, միշտ էլ եղել է միակից, նահապետական ընտանիքը իշխող ձև, ուր որ մարդը և հայրը կեդրոն է եղել և ամենամեծ դատաւորը տնային համայնքի մէջ. նրա կամքին էին ենթարկուած կիներ և երեխաները, ազգակցութիւնը կամ նրա տնտեսական փոխանորդը, ժառանգութիւնը, առաջ է գնում բոլոր յայտնի ժամանակներում հօր կողմից. այսինքն հօր կարողութիւնը միշտ տղային է անցնում, երբ վերջինս վաղուց մեռած է լինում, հօրեղբորորդիներին: Միայն աւելորդ տեղը ընդունում էին, որ մարդկային ցեղի ամենանախնական ժամանակում, երբ նա ապրում էր այն վայրենի վիճակի մէջ, ինչպէս այդ սե գոյներով նկարագրում է Վիկօն, իշխում էր խառնակ կեանքը, հազիւ մարդը թողել էր առաջին կենդանական սարսափները

Dal di che nozze e tribunali ed are

Diero alle umane belve esser pietose *)

այն ժամանակից սկսուեց և դարեր շարունակ անփոփոխ շարունակուեց նաև միակին ձևը կամ եթէ ծեր Գոծնտի նման ասենք, Աստուծոյ մտքերը տնային և սեռական կեանքի իրականութեան մէջ մարմին դարձաւ:

Սակայն համեմատական մեթոդը, այսօրուան սօցիոլոգիայի փառքը, վերջին ժամանակներս փշրեց յանկարծակի դիտնականների վարդապետները և հետազոտութեան զանազան ասպարէզներում մի վճռական յեղափոխութիւն առաջ բերեց: Արդէն քաղաքա-

*) Այն ժամանակից, երբ մարդ կենդանուն կարեկցութիւնը տուեց հարսանիքը դատարաններ և սրբազան բնմեր:

տնտեսութիւնը ընդարձակելով իւր հետազոտութիւնները մինչև պատմական ժամանակի արշալոյսը, հասաւ այն բանին, որ հին երազը, մասնաւոր սեփականութեան բնական և մշտական բնաւորութեան վերաբերեալ, կարողացաւ հերքել և բաց արաւ մի քանի դարեր տևող այնպիսի շրջանի գոյութիւն, երբ մարդկութիւնը գտնուում էր համայնական սեփականութեան իշխանութեան տակ: Այս ձևով պարզաբանուած նախաշխարհը չունէր բարբարոսութեան կամ վայրենի արիւնարբութեան բնաւորութիւն, ինչպէս իրենց նպատակի համար ուզում են պնդել նրանք, որոնք մասնաւոր սեփականութեան մէջ քաղաքակրթութեան մի էական պայմանն են տեսնում: Ոչ, այս պրիմիտիվ մարդկութիւնը, որը ունէր համայնական սեփականութիւն, իւր քաղաքավարութեան և բարքերի յարաբերութեան ներբութիւններում, մեր հասարակութիւնից, որը իրեն քաղաքակրթուած է համարում, աւելի լաւ էր: Ամենքն էլ տեսնում են, որ այս մարդկային իրերն ու հաստատութիւնները դիտելու կարգի ու ձևի մէջ մի խորը յեղափոխութիւն էր մտցնում: Պատմութիւնը, մտքի այդ սարսափելի բռնկող ոյժը, պէտք է նախապաշարման և սնոտիապաշտութեան շատ աւատական ժայռեր փշրէր, որ կարողանար նրանց փլատակները վրայ ճշմարտութեան պայծառ տաճարը կառուցանել: Երբ համեմատական հետազոտութիւնը փշրեց այն ամբողջութիւնները, որոնք արգելք էին հանդիսանում նրան պատմական ժամանակի սկզբներում և համարձակ մտաւ նախապատմական ժամանակի առասպելական շրջանները, սօցիոլոգիան կարողացաւ միակին, հայրական ընտանիքի յաւիտենականութեան մասին եղած առասպելի ամբողջութիւնները փշրել: Նա զարմացած դիտողի առաջ բացարաւ մի նախաշխարհի գոյութիւն, երբ ընտանիքի

յայտնի է, տատանվում է $5-5\frac{1}{2}\%$ մէջ, իսկ թթու շիճուկի մէջ նրա քանակութիւնն աւելի ևս քիչ է, որովհետեւ նրա մի մասը դառնում է կաթնային թթուում: Այն շիճուկը, որ ստացվում է մակարովով շինուող պանիրներից, ասելի արժէքաւոր է, քան անմակարդ պանիրներից ստացուածը, որովհետեւ վերջին դէպքում համարեալ ամբողջ կաթնային շաքարը դառնում է կաթնային թթուում, մինչդեռ ստամոքսանիթի անմիջական կերպով ներգործում է կաղէյիւնի վրայ՝ առանց կաթնային շաքարը կաթնային թթուում դարձնելու: Ամենից աւելի արժէք ունի շիճուկը իբրեւ խոզերի կերակուր, երբ նրանց կամենում են գիրացնել, իբրեւ մսացու, որովհետեւ կաթնային շաքարը նպաստում է իւր կապելուն: Շիճուկով չէ կարելի սակայն կերակրել խոճկորներին, որոնք կարող են այդպիսի կերակրից փորլուծութիւն ստանալ: Խոզերին շիճուկը տալիս են այն ժամանակ, երբ նրանք արդէն 3 ամսական են դարձել և սկզբում իւրաքանչիւրին օրական ոչ աւելի քան 3—4 շիճ՝ հետզհետեւ աւելացնելով բաժինները, սակայն ոչ աւելի 7 շիճ: Ամենից լաւ է գործածել խոզերին կերակրելու համար նոր միայն ստացուած թարմ շիճուկը, ապա թէ ոչ՝ երկար պահելուց շիճուկի կաթնային շաքարը լուծվում, փչանում է և ինքը շիճուկը կորցնում է իր սննդարար յատկութիւնը: Շիճուկով կարելի է կերակրել և ուրիշ կենդանիների, օրինակ, կովերին, բայց պէտք է խուսափել շիճուկը հորթերին տալուց:

Այն շիճուկը, որ ստացվում է պանիրն անքաշ կաթից շինելիս, իր մէջ պարունակում է դեռ բաւականաչափ քանակութեամբ իւր, որ դուրս է գալիս մէրուածքը մանրացնելիս: Ուստի և այս տեսակ շիճուկը շահաւէտ է բանեցնել իւր ստանալու համար: Այս նպատակին ամենից աւելի լաւ հասնում ենք հետեւեալ կերպով. թարմ շիճուկն անց են կացնում սեպարատորով և աշխատում ստա-

նալ, որքան կարելի է, թանձր սեր (10 շիճ շիճուկից 1 շիճ սեր): Այս սերը, առանց նախապէս թթուեցնելու, իսկոյն ածում են խնոցու մէջ ու հարում: Եթէ գործը լաւ է կատարուած, շիճուկից ստացուած իւրը համարեալ թէ չէ տարբերվում իր համով սովորական կարագից, բայց չէ կարող երկար դիմանալ, ուստի պէտք է նրան կամ անյապաղ ծախել և կամ տանը գործածել: չէնց այս ապակաւ դիմացկունութեան պատճառով էլ շիճուկից ստացուած կարագի գինն աւելի ստոր է քան սերից ստացուած կարագինը: Այն թանը, որ ստացվում է շիճուկից իւր հարելիս, նոյն արժէքն ունի, ինչ որ քաջած կաթը մակարդելուց յետոյ ստացուածը և նոյն տեսակ էլ գործադրվում է:

VIII Գ Լ ՈՒ Խ

Մածնի, բրուստերի եւ լոռի պատրաստելը:

Մածունը խիստ օգտակար կերակուր է՝ շնորհիւ այն բարեբար ազդեցութեան, որ նա գործում է մարսողութեան վրայ: Վերջին ժամանակ պրօֆէսոր Մեչնիկովն առանձնապէս խորհուրդ է տալիս գործածել մածունն, իբրեւ ամենօրեայ կերակուր: Ստորեւ կը տեսնենք, որ այդ գիտնականը պատրաստում է մածունը փոքր ինչ այլ տեսակ, թէպէտ նման մեր կովկասեան մածնին:

Մածունը պատրաստվում է մի քանի տեսակ: Այն մածունը, որ պատրաստվում է առանց մէրանի, կոչվում է ռուսական մածուն կամ պրօսոկալաւա: Սա ոչ այլ ինչ է, եթէ ոչ ինքն իրան թթուած անքաշ կաթ: Կաթի թթուելը, ինչպէս յայտնի է, առաջանում է կաթնաթթուային եռման բաղտերիաներից, որոնք կաթնային շաքարը փոխում են կաթնային թթուումի, իսկ այս վերջինը նպաս-

ները անհետ չկորան դասական հին դարի անկման հետ: Միջնադարի կեանքում էլ մնացին նրանք, ոչ թէ արիստոկրատ կամ քաղաքացիների դասակարգերում, այլ այն արհամարհուած և օրէնքից զրկուած խաւերում, որոնց մէջ մի տեսակ ժառանգականութեան ազդեցութեան տակ նախամարդկութեան կեանքի ուրուագծերն են վերարտադրում: Օրինակ յայտնի է, որ միջնադարեան Գերմանիայում ճորտերի որդիները մօր իրաւական զրութիւնն էին ստանում: Ամենից առաջ պէտք է նկատել, որ կախարդուհիների մասին եղած բոլոր առասպելներն ու ուրուականների պատմութիւնները, մօր իրաւունքով կազմուած ընտանիքի դրօշմ են կրում, որ կախարդուհիների ժողովներում մայր կախարդուհուն են աղօթում և նրան են օգնութեան կանչում և որ նրանց բոլոր կախարդական խօսքերը մօր գերակշռող իրաւունքի մասին են յիշեցնում:

Բացի այդ այն նշխարները մի առանձին նկատույնութեան արժանի նշանակութիւն են ստանում, շնորհիւ այժմ ապրող վայրենի տոհմերի ընտանեկան կազմակերպութեան ուսումնասիրութիւնից ստացած նորագոյն գիւտերին: Ամենից առաջ գիւտն արել է Մօրգանը այն արեւակցական յարաբերութիւնների մասին, որոնք էապէս մօր իրաւունքը հիմք ունին, որոնք կան ամերիկական իրօկեզների մէջ. այս հանգամանքը վերջապէս հնարաւոր է դարձնում սօցիօլօգիայի համար մարդկային ընտանիքի առաջին ձևերի մասին համադրական և դրական եզրակացութիւններ անել:

Այս ամենանախնական ձևերի տիպիկ ընդհանուր բնոյթը այս է. ընտանիքի կեդրոնը մայրն է և նրա հետ է կապուած ազգակցութեան և յետնորդների բոլոր յարաբերութիւնները: Տղամարդը ապրում է կնոջ տանը և ենթարկւում է նրան: Որդիները ժառանգում

են ոչ թէ հօրից, այլ մօրից: Երբ մի տղամարդ մեռնում է, նրա ստացուածքը իբր ժառանգութիւն անցնում է, ոչ թէ որդիներին, այլ կնոջ եղբայրներին, քոյրերին կամ որդիներին: Ինչպէս տեսնում էք այստեղ կայ մի այնպիսի տնային կազմակերպութիւն, որը մեր այժմուայ ունեցածին բոլորովին հակապատկեր է: Բայց այս տնային կազմակերպութիւնն էլ ունի շատ իրար յաջորդող և յառաջադիմող բաժան բաժան եղած ձևեր: Ամենահին և կոպիտ ձևը խմբական ամուսնութիւնն է, ուր իշխում է կատարեալ արիւնախառնութիւն. այստեղ բոլոր տղամարդիկ բոլոր կանանց հետ ամուսնացած են: Ազատ կողակցելը առաջին կրճատումը ստանում է նրանով, որ արգելւում է ամուսնութիւնը ծնողների և որդիների մէջ. և ապա մի աւելի ևս կրճատումն, երբ ամուսնանալու արգելք է դրւում եղբայրների և քոյրերի մէջ. այնպէս որ շատ անհատներ «ամուսնութեան մէջ ընկերներ են» (իրօկեզների լեզուով Punalua որտեղից և ընտանիքի այս ձևի համար տերմինն է Punalua ամուսնութիւն) շատ կանանց հետ, որոնք նրանց քոյրերը չեն:

Մի քայլ առաջ է գնում կարգը. երբ հանդէս է գալի եքսօգամին, երբ արգելք է դրւում ամուսնանալ իրար հետ այն անհատներին, որոնք նոյն տոհմին են պատկանում կամ նոյն կնոջ տոհմից են սերւում: Երբ մարդ մտածում է, որ տարբեր տոհմեր սովորաբար տարբեր տեղեր էին ապրում և տարբեր համայնքների էին պատկանում, դուրս է գալի, որ այս կարգն էլ մեր մտածողութեան կատարեալ հակառակն է, որը և արտայայտւում է պարզապէս հետեւալ առածում. — կանանց և եղջիւրաւոր անասուններին քո երկրից միայն ան —: Վերջապէս վերջին քայլն էլ անում են արգելք դնելով ամուսնանալ այն անձանց իրար հետ,

որոնք արդէն ամուսնացած են և այսպիսով առաջ է գալի միակնութեան կարգը: Բայց կազմակերպուած միակնութիւնն էլ դեռ մօր իրաւունքն է ճանաչում և մօր իրաւունքն է նօրմաներ տալի աղգակցութեան և յաջորդների վերաբերմամբ: Այսպիսի կազմակերպութեան մէջ կնոջ ունեցած առանձին նշանակութիւնը կանացի սեռին մի գերակշռող նշանակութիւն է տալի տնային և սօցիալական համայնքի մէջ, բոլորովին հակառակը նրան, ինչ որ տեսնում ենք քաղաքակրթուած փողովորդների մէջ: Վերջիններս մէջ աղամարդը տէր ու պաշտպան է ընտանիքում, ինչպէս և հասարակութեան մէջ. ընդհակառակը, ուր մօր իրաւունքն է իշխողը, կինը ամենամեծ իրաւունքն ունի. տան կառավարիչը միայն նա է, նա է կրօնական գործը կատարում և իշխում է տան պատերից դուրս, համայնքի խորհրդածութիւններում: Դեռ 1873 թ. Սենեկայի Իրակօզեան տոհմի քարոզիչ Ռէվ. Վոլգոլը գրում էր. «Այստեղ տունը կառավարում է տանտիկինը. կեանքի միջոցները ընդհանուր են, բայց վայ այն անխելք աղամարդուն կամ սիրականին, որը համարձակուեց այստեղից մի բան վերցնել: Եթէ նա ունենայ շատ երեխաներ և կարողութիւն, ամեն վայրկեան կարող է հրաման ստանալ, կապկպել իւր տնային կարասիները և հեռանալ, եթէ չըլսի, նրա բանը վատ կըլինի: Եթէ մի տատ կամ մայր կամ մօրաքոյր չմիջնորդէ նրա համար, չպէտք է մի այլ կլան գնայ և այնտեղ նոր կին փնտռէ: Կլանում, ինչպէս և ամեն տեղ, տանտիկինները ամենամեծ ոյժն ունեն. նոքա ընտրում են տոհմի գլխաւորներ, նոքա չեն քաշում, երբ կարիքները պահանջում են, մի տոհմի գլխաւորի եղջիւրները (հրամայելու նշաններն են) գլխից վեր առնելու և նրան կրկին հասարակ գինուորների շարքը դասելու: Այս

տանտիկինների իշխանութիւնը. այս ներկայ աշխարհն է գլխիվայր շրջած. սա իրերի մի այնպիսի դրութիւն է, որ մենք հազիւ ենք ըմբռնում շնորհիւ մեր կարճատես և միակողմանի հայեացքների, որոնք հիմնուած են պատմական և քաղաքակրթուած ժամանակի կարճատես փորձառութեան վրայ: Որպէս զի որոշ չափով մի գաղափար կազմենք այս պրիմիտիւ, մօր իրաւունքը իշխող, դրութեան մասին, պէտք է յիշել մեղուների թագաւորութիւնը, այստեղ էլ կառավարում է մի թագուհի, որը ամբողջ խմբի մայրն է. նրա մօտ կան բոլորը, որոնք ոչ մի այլ պարտականութիւն չունեն, բայց եթէ սերունդը ճեղքնել և երբ այս վերջացնում են, փեթակից դուրս են մղւում: Իսկ եթէ մենք ուզում ենք, ինչ գնով էլ որ լինի, մեր կեանքում մարդկային ցեղի միատեղ կեցութեան հին ձևերի գոնէ անդոյն արտայայտութիւնը գտնել, կարող ենք յիշել թէ ի՞նչ պատահեց Միացեալ Նահանգների Միչիգան քաղաքում. այստեղ երբ կանայք համայնական խորհրդում բազմութիւն կազմեցին, բոլոր հասարակական պաշտօնները կանանց համար մենաշնորհ դարձրին, բացառութեամբ միայն մէկի, հասարակական փողոցի անց ու դարձի, որը նրանք մեծահոգութեամբ ուժեղ սեռին ցանկացան թողնել:

Չնայելով մօր իրաւական կարգի բազմաթիւ առանձնայատկութիւններին և զարմանալիութիւններին, որը ստեղծագործութեան ամենալսեմ և ամենաընտրեալ էակին, ինքնազոհութեան և սիրոյ, ինքնազրկողութեան և մաքրութեան իրականացմանը տնային և քաղաքացիական առաջնութեան պատիւն է տուել, այնուամենայնիւ արժանի է համակրանքի ու զարմանքի: Երբ սօցիօլօգիան պրիմիտիւ տնային այս ձևի առաջ իւր անպայման զարմանքը յայտնելուց յետոյ սկսում է նրա

առաջանալու պատճառների օրեկալիս քննութիւնը, տեսնում ենք ինչպէս այդպիսի մի հոգեկան կազմակերպութեան մէջ նիւթական կեանքի ամենասովորական և պրօզայիկ գործօններն են դեր կատարել: Մի քանիսնների կարծիքով մօր իրաւունքի առաջնութեամբ կազմուած ընտանիքը հետեանք է նախնական արիւնախառնութեան կամ բազմատրամադրութեան, որի համաձայն հօր իրաւունքի մասին քննութիւնը այլ ևս ըստ ինքեան անհնարին է դառնում: Սակայն այս բացատրութիւնը չի բաւականացնում, որովհետեւ արիւնախառնութիւնից յետոյ էլ մօր իրաւական առաջնութիւնը մնում է միակնութեան ձևի հետ ևս: Մօր իրաւական առաջնութեան իսկական պատճառը պարզ կհասկանայ նա, ով իւր ուշադրութիւնը կդարձնի տնտեսութեան նախնական կազմին: Իսկապէս տնտեսական կեանքի սկզբին արտադրութիւնը, որ կատարւում էր հողագործութեամբ, բացառապէս կանանց ձեռքին է լինում, մինչդեռ ժարդիկ կամ կոտուղ են զբաղուած կամ մի այլ, ոչ արտադրող, գործով: Որովհետեւ արտադրութեան առաջին սաղմը կինն է եղել, պէտք է որ միայն նրան յանձնուած լինէր ընտանիքի զատ զատ անդամների ոյժերը կազմակերպելու և կարգի դնելու գործը մի ընդհանուր ղեկավարութեան ներքոյ: Նախնական ընտանիքի կեդրոնը, որի շուրջը պիտի խմբուէին անդամները, կարող էր միայն մայրը լինել և նրա վրայ պիտի հիմնուէին ազգակցութիւնն ու յաջորդների յարաբերութիւնները: Այս ձևով սկզբնական ընտանիքի, մօր իրաւական առաջնութեամբ կազմակերպուած իսկական հիմքը տնտեսականն էր:

Տնտեսական հիմք ունի նաև մօր առաջնութեան կարգին համապատասխանող էքսօգամին: Այս կարգի պատճառները բացատրելու համար յայտնի սօցիօլոգ-

ները աշխատել են և սրա վերաբերութեամբ մի շարք բացատրութիւններ են մտածել, մէկը միւսից պակաս գոհացուցիչ: Մակ Լենանը կարծում է, որ էքսօգամին նախնական տոհմերի սիստեմատիկ առաջ տարած իգական սեռի երեխաների սպանութեան արդիւնքն է և այս բանը մարդկանց ստիպել է ուրիշ տոհմերից կանայք առնել: Սահաւատալի բացատրութիւն. եթէ յիշուի նորածին աղջիկների սպանութիւնը մի համատարած կարգ էր նախնական ժամանակներում, պէտք է ուրեմն և օտար տոհմերը գործադրէին այդ և այն տղամարդը, որը իւր տոհմում իրեն ընկերուհի ընտրելու դէպքում դժուարութիւնների էր հանդիպում, նոյնքան պիտի դժուարանար օտար տոհմերում ճարել: Յետոյ եթէ իգական սեռի մանուկներին սպանելով տոհմի կանանց թիւը պակասում էր, կոխն էլ մարդկանց թիւն էր նոսրացնում և այսպիսով նորից հաւասարակշռութիւն առաջ կգար: Ըստ Լուրքօկի նախապատմական մարդու համար էքսօգամին միակ միջոցն էր իրեն համար մի կին ձարել, որը միայն իրեն պատկանէր, որովհետեւ նոյն տոհմում ծնուած կանայք իրաւապէս համարւում էին տոհմի բոլոր մարդկանց կանայք: Բայց մի այսպիսի բացատրութիւն անընդունելի է, որովհետեւ շատ տոհմեր, օրինակ Պալօս կղզում ապրողները, օտար կանանց յափշտակութիւնը հէնց նրա համար են գործադրում, որ խմբական ամուսնութեան կարգը հաստատեն: Մօրգանն էլ իւր կողմից հաւաստիացնում է, որ արիւնախառնութեամբ եղած ամուսնութիւնից առաջացած ֆլասակար հետեանքներն են առաջ բերել էքսօգամին: Այս բացատրութիւնից ելնում է, որ վայրենիները կենսաբանական և բժշկական տեղեկութիւններ ունէին, որը դժուար է ենթադրել: Բացի այս ճիշտ չէ, որ էքսօգամին միանգամայն

բացասում է ազգակիցների ամուսնութիւնը. նա չի արգելում, որ երկու անհատներ միեկնոյն հօրից, բայց տարբեր տոհմերի պատկանող մայրերից իրար հետ ամուսնանան: Շտարկէն այն կարծիքի է, թէ էքսօգամինայն իրողութեան արդիւնքն է, որ առաջին ժամանակներում, երբ կինը մարդու սեփականութիւնն էր, անպատշաճ համարեցին, որ մայրը ամուսնանայ իւր որդու հետ և այսպիսով նրա սեփականութիւնը դառնայ: Թէև ոչ մի արժէք չենք տալի այն բանին, որ առաջին ժամանակներում կինը իբր թէ մարդու սեփականութիւնն էր, մինչդեռ ընդհակառակը նա իշխողն էր, այնուամենայնիւ Շտարկէի կարծիքը մօր և որդու ամուսնութեան արգելքին է վերաբերում և ոչ էքսօգամինայի ընդհանուր երևոյթին: Սպէնսէրը վերջապէս բացատրում է էքսօգամին իբր արդիւնք այն առանձին յարգանքի, որ օտար տոհմից իւր համար կին գողացող մարդը ստանում էր և այն կարծիքի արդիւնք, որ մի օտարի հետ ամուսնանալը մարդու աչքի էր գցում և յարգանք էր առաջ բերում: Բայց այս բացատրութիւնը մոռանում է, որ յափշտակելով ամուսնանալու սովորոյթը մօր ընտանիքում ունեցած իրաւական դրութեան նախապատմութեան կարգից մի քանի դար յետոյ է եղել և իբրև առաջին երևոյթ էքսօգամին է հանդէս եկել, ուստի անկարելի է որ այս կարգի սկիզբը կամ առիթը լինէր:

Էքսօգամինայի հիմքը հէնց առաջին անգամից պարզոււմ է, երբ մարդ ուշադրութեան է առնում առաջին ժամանակների անհրաժեշտ պահանջները: Էքսօգամին նրա համար է, որ սկզբնական ընտանեկան խմբերի թիւը սահմանափակի, և այս ձևով նրանք բաժանոււմ են իրարից ընտանիքի անդամների վրայ դրուած այն արգելքով, որ իրար հետ չամուսնանան.

այս ձևով եղած զատումն դիւրացնում է առանձին խմբերում կազմակերպել մի գործունեայ աշխատանքի միացումն: Էքսօգամին կարող է այս ձևով կազմուած տնային խմբերը աւելի ընդարձակել: Երբ յիրաւի մի տոհմի տղամարդիկ թողնում են իրենց տոհմը, մի կնոջ հետ միասին ապրելու համար, այն ժամանակ իսկապէս այդ ամուսնութիւնը բազմացնում է այն ընտանիքի խմբի թիւը, որին պատկանում է կինը. մի շատ օգտակար յաւելումն, որով թէ աշխատանքի բաժանումն և թէ աշխատանքի միացումն աւելի հնարաւոր է դառնում և այսպիսով նրա գործունէութիւնը և արդիւնաւորութիւնը աճում է: Այս է էքսօգամինայի իսկական հիմքը. նա մի նպատակայարմար տեղեկատու միջոց է նախնական ընտանեկան խմբերը սահմանաւորելու, նըրանց թիւը աւելացնելու և իբր արդիւնք սրա արդիւնաբերող ոյժը աւելացնելու:

Մօր իրաւական առաջնութեամբ կազմուած ընտանիքի տնտեսական գործօններից բացատրելը աւելի է պարզոււմ, երբ հետևում ենք այդ դրութեան քայքայմանը և նրա տեղ նահապետական ընտանիք առաջ գալուն, որովհետև վերջինս էլ էապէս արդիւնք է տնտեսական պատճառների և սրանցից ամենագլխաւորի — մասնաւոր սեփականութեան: Յիրաւի մեծ հարստութեան դիզումը մարդկանց մէջ բնականօրէն ցանկութիւն է ծնեցնում այդ տալ իրենց որդիներին, այս պատճառով նրանց մէջ ուժգին հակակրանք է առաջ գալի մօր իրաւական սիստեմի դէմ, որի համաձայն յաջորդներ համարոււմ են մօր քոյրերը կամ սրանց որդիները: Հէնց որ մարդկանց մէջ մասնաւոր սեփականութիւն կազմելու պատճառով մօր իրաւական կարգի դէմ հակակրանք է առաջ գալի, այդ մարդկանց միջոց է տալի այդ դրութիւնը վերջացնել, երբ կին ձեռք բե-

րելը կամ գնելը հնարաւոր է դառնում: Սկզբում մարդիկ իրենց հաւաքած հարստութիւնը միայն օտար տոհմերի վրայ տպաւորութիւն թողնելու և նրանցից կին ձեռք բերելու համար էին գործադրում: Պատմութիւնը սրա վերաբերմամբ տուել է մի դասական օրինակ՝ սաբինուէիներին յափշտակելը: Կանանց այս ձևով ձեռք բերելը պատճառ է դառնում մշտական կռիւների տղամարդու և կնոջ ծնողների մէջ. ամենայն հաւանակաւորութեամբ սկիզբն այն հակաիրութեան, որ փեսան ունենում է աներանց դէմ և որը մինչև այսօր էլ ոչ միայն ֆրանսիական վէպերում, այլ դժբախտաբար և իրական կեանքում էլ գոյութիւն ունի: Հարաւային Փրանսիայի մի քանի տեղերում շատ տարածուած սովորութիւն է, որ երբ կինը արդէն ժարդու տունն է մտնում, սկսում է ախ ու վախը և վայնասունը հաւանօրէն յափշտակելով ամուսնանալու մի հին մնացորդ է: Լատին և Գերման ազգերի մէջ հարսանիքի բազմաթիւ և դարմանալի հանդէսները նոյնպէս կին փախցնելու անխուսափելի հետքեր են: Յաճախ է պատահում, որ յափշտակուած կնոջ ծնողներն ու եղբայրները յափշտակողից վրէժ առնելու ուխտ են դնում և նրան սպանում են. այս դէպքում ամուսնութիւնը փոխանակ ազգաբնակչութիւնը աճեցնելու պակասեցնում է: Այս պատճառով ժարդկութեան օրգանական զարգացման պահանջը, որ ժողովուրդը աստիճանաբար աճի, ոչնչացնում է վաղ կամ ուշ ամուսնութեան այս ձևը. ժողովուրդը հասկացաւ և տոաջ եկաւ ամուսնութեան փոխանակութեան ձևը, որ յափշտակողը կնոջ ծնողներին նուէրներով և փողով գրաւում էր, ապա առաջ է գալի դնման ամուսնութիւն, երբ տղամարդը կին առնելու համար, նրա ծնողների որոշած գինը վճարում էր:

Զարմանալի է տեսնել, թէ ինչպէս տնային նոր

դրութիւնը առաւել կամ պակաս լաւ և վերջնական ձևով հաստատում է, նայելով, թէ տղամարդու հարստութիւնը շատ է թէ քիչ: Երբ տղամարդու կարողութիւնը բաւական քիչ է, նա ապրում է կնոջ տանը և ընտանիքը մօր իրաւական առաջնութեան բնաւորութիւն ունի: Երբ ընտանիքը առանձին բնակութիւն է հաստատում, կնոջ կազմած ընտանիքը բնակալօրէն խառնուում է նոր ընտանիքի մէջ և այնտեղ իւր օրէնքներն է թելադրում: Երբ տղամարդու միջոցները բաւական չեն կին ձեռք բերելու համար, մի քանի տղամարդիկ միանում են նրան առնելու համար. այսպիսով բազմալրութիւնը հետևանք է ժարդկանց չբաւականացնող բանակութեամբ կարողութիւն հաւաքելուն: Յաճախ, երբ տղամարդը միջոց չունի կնոջ համար որոշուած ամբողջ գինը վճարելու, ձեռք է բերում կնոջ հաւատարմութեան այն մասը, որ համապատասխանում է կնոջ համար որոշուած վճարի որոշ մասին: Սպիտակ Նեզոսի ասսանիէթ-արաբները սովորութիւն ունեն, որ ժարդը շաքաթուայ որոշ օրերի վերաբերմամբ ամուսնական հաւատարմութիւն պահանջելու իրաւունք ունի, նայելով թէ կնոջ ծնողների պահանջած գնի ռը մասն է վճարել: Երբ ժարդու կարողութիւնը այնքան աճում է, որ նա կարող է արդէն կնոջ համար որոշուած գինը ամբողջովին վճարել, միայն այդ ժամանակ կազմակերպւում հրաշալի ձևով նահապետական ընտանիքը, ուր որ կինը տղամարդու սեփականութիւնն է, որը գնել է նրան և ինչպէս նրանից ծնուած երեխաները կնոջ վերաբերմամբ մահուան և կեանքի իրաւունք ունի, իսկ երեխաների վերաբերմամբ անպայման հայրական իշխանութիւն: Դեռ աւելին. մինչդեռ մօր իրաւական առաջնութեամբ կազմած ընտանիքում, որը բազմատեսակ և խառն ազգակցութիւն ունէր, կարո-

դուժեան ժառանգ էին նշանակուած շատերը և ամենահեռաւորներն իսկ, այստեղ բոլորովին նոր բան է կազմուած շնորհիւ տղամարդի ցանկութեանը, որ ցանկանուած էր իւր կարողութիւնը ազգակիցների ումենանեղ շրջանում պահել: Այսպիսի հակառակութիւն, որը այնքան աւելի բնական է դառնում և աւելի ուժեղանում, որքան տղամարդու անհատական կարողութիւնն է աճում, նպաստում է կնոջ իրաւական առաջնութեամբ կազմուած ընտանիքի մէջ եղած բաղմապիսի ազգակցութեան տեղ վաղ կամ ուշ աւելի սահմանափակ ու նեղ արիւնակցական ազգակցութեան առաջ դալու: Ինչպէս երևում է, տնային յարաբերութիւնների մէջ էլ տեսնում ենք, որ ուղղափառներին շատ սիրելի անփոփոխ մշտականութիւնը կորչում է և տեղի է տալի կարգերի ու ձևերի անհանգիստ փոփոխականութեան: Նահապետական ընտանիքը, որը դարեր է տևել մնալով կամ անփոփոխ կամ քիչ փոփոխութիւններ կրելով միշտ գոյութիւն չի ունեցել, այլ նրանից առաջ եղել է նրան բոլորովին հակառակ կազմակերպուած ընտանեկան կազմ, որի վրայ կառուցուել է սօցիալական այնպիսի դրութիւն և այնպիսի քաղաքակրթութիւն, որ մերին բոլորովին նման չէ: Այսպիսով մի կարգ, որը անցեալի փորձով է առաջ եկել, ապագայի պատմական բնոյթի ծրագիրն է տալի: Այժմ աւելի ևս անվիճելի փաստ է, որ ընտանիքի այսօրուայ դրութիւնից առաջ մի բոլորովին տարբեր և հակառակ կազմակերպութիւն է եղել. այս հանգամանքը մեզ իրաւունք է տալի եզրակացնելու, որ ընտանիքի ներկայ դրութիւնը, ինչպէս անցեալում մշտական չի եղել, նոյնպէս և ապագայում մշտական չի լինելու, որ ընդհանրապէս ընտանիքի ներկայ բնոյթը անմեռ չէ և որ կըզայ մի օր, երբ ներկայ տնային կարգը մի բոլոր-

վին տարբեր և աւելի բարձր ձևի տեղի կտար:

Սրանով մենք իհարկէ չենք մտածում ստորագրել այն ուսույթիստների ասածները, որոնք մօր առաջնութեամբ կազմուած ընտանեկան ձևը գտնելով բաւական են համարում ցոյց տալու, որ շատ շուտով ընտանեկան յարաբերութիւններում յեղափոխութիւն է լինելու և մարգարէանում են, որ կնոջ նախապատմական լու և մարգարէանում են, որ կնոջ նախապատմական զերիշխանութիւնը նորից վերագոռնալու է: Մարդկութիւնը չի կրկնում և պատմութիւնը, որը իւր խորհրդաւոր պրօցէսսի մթութեան մէջ, իբրև մի վարպետ անհրաժեշտ վերարտադրութիւններն է կատարում, այնուամենայնիւ երբէք մի անգամ թողած ձևերը չի կրկնում. միայն թէ նոյնը աւելի զարգացրած և աւելի բարձր դրութեամբ նորոգում է և կրկնում: Այս պատճառով կարելի է, առանց մարգարէ լինելու, առաջուց ասել, որ մօր իրաւական առաջնութեան օրերը այլևս երբէք չեն կրկնուի և որ ընտանեկան խմբակի այս ձևը երբէք յարութիւն չի առնի: Միաժամանակ կարելի է առաջուց ասել, որ ընտանիքի այսօրուան ձևը, որը ամենամանրիւ չափերով սրբազործում է տղամարդու բռնակալութիւնը, պէտք է տեղի տայ մի աւելի դու բռնակալութիւնը, պէտք է տեղի տայ մի աւելի մեղմ և աւելի մարդկային սեռական միակեցութեան ձևի: Բոլորովին հակառակ մօր իրաւական առաջնութեամբ կազմուած ընտանիքի, նահապետական ընտանիքը նզովում է կնոջը, ձգելով նրան մի մշտական մարդուն հպատակելու դրութեան մէջ և նրա կրքոտ ցանկութիւնների կոփման մէջ: Այդ ժամանակներում ենթարկուել իսկական ստրկութեան մի կոպիտ ձև էր ստացել. բայց մեր ժամանակներում էլ դեռ շարունակւում է ստրկութիւնը, թէև քիչ թէ շատ սքողուած ձևերով և աղտոտում է ամուսնութիւնն ու ընտանիքը ցաւալիօրէն: Կինը, ինչպէս արդէն հարիւր անգամ էլ

ասուեց, այսօր էլ դեռ անչափահաս է ճանաչում. օրէնքի տեսակէտից աւելի շուտ խակապէս խնամարկունքին, զրկութեանը և խելագարներին հաւասար է դրուում: Նա չի կարող առանց իւր մարդու վաւերացման որեւէ աչքի ընկնող բան կատարել. վերջապէս նա իւր վարձի արդիւնքից զրկուած է. նրանից խլուած է նրա իւր երեխաների վրայ ունեցած ազդեցութիւնն ու նրանց վիճակի որոշելը, նրանց կրթութիւնը և նրա կարողութիւնը: Իդուր են աշխատում արական սեռի պաշտպանները այս զրկումը արդարացնել ասելով, որ կանայք Ֆիզիկապէս, մտաւորապէս կամ բարոյապէս պակաս են: Այս պակասաւորութիւնը անպայման չի ապացուցուած և այս բանը կարելի է մօր իրաւական առջնութեամբ կազմուած ընտանիքի օրինակով միանգամից հերքել, որից երևում է, որ կինը իւր վատ կրթութեան շնորհիւ փշանալուց և իւր անօգուտ գոյութիւնը դատարկութիւններով ու ժառապառ անելուց առաջ ընդունակ էր ընտանիքի և հասարակութեան բախտը ղեկավարելու: Տղամարդկանց իրաւունքների կատարի առաջամարտիկները կարող են դադարել սովետական տպացոյցներով ընտանիքի մի այնպիսի դրութիւն պաշտպանել, որը առաջ է եկել սօցիալական ձեւերից և որը դատապարտուած է անհետանալու: Աւելի խելացի, նպատակայարմար և տրամաբանական է մի ըստինքեան իւր էութեամբ սխալ կարգի կարծման ենթարկուելը ընդունել և պատմութեան աշխատանքին նպաստել, որը անհրաժեշտաբար այն կողմն է ուղղուած, որ այդ ձեւը ոչնչացնուի:

Այս նպատակին է ձգտում կանանց շարժումը, որը մեծ մասամբ առաջադէմ ազգերի մէջ յաղթանակում է. որը ի հարկէ, ինչպէս իւրաքանչիւր նոր ծնող ազիտացիա, չափազանցութիւններ ու սխալներ ունի, բայց այ-

նուամենայնիւ մերժել այն շարժումը անօգուտ է, քանի ընտանեկան կարգերի պատմական լինելութեան մէջ ճշմարտութեան մեծ հիմքեր ունի և այժմուայ եղածի մէջ էլ արհամարհանք է դրուում: Անպայման կանանց շարժումը եղբերի կլինէր, եթէ նա ձգտէր մեր կանանցից մօյր իշխողներ պատրաստել կամ ընտանեկան միակեցութեան ամենահին ձեւը վերակենդանացնել: Բայց երբ նա այդպիսի պահանջներից հեռու է մնում և բաւականանում է հասնելու այն բանին, որ կինը ընտանիքում և այնտեղից դուրս տղամարդուն հաւասար ճանաչուի, մենք պէտք է այս դէպքում նոր քարողութիւնը ամբողջ սրտով համակրենք և ոգևորութեամբ նրա ջատագովների մէջ մտնենք:

Ի միջի այլոց յառաջադէմ ժողովրդների օրէնսդրութիւնը աճող ոյժով մօտենում է նոր քաղաքակիրթ օրէնքին: Այս բանը եղել է Նօրվէգիայի օրէնքներով յունիսի 29-ին 1888 թ.-ին. Ժընևի կոնտոնը 11-ն նոյեմբերի 1894 թ. դանիականը 1-ն օգոստոսի 1899 թ.: Նոր Զէլանդիայի և գերմանական քաղաքացիական օրէնքները, որ մինչև այժմ եղած օրէնսդրութիւններից զըրուած կնոջ անընդունակութիւնը ամենախայտառակ կերպով պահում էին, այժմ աճուսնացած կնոջ սեփականութեան իրաւունքը և իւր աշխատանքի պտուղների վայելումը ընդունում են: Միաժամանակ ամուսնալուծութիւնը քաղաքակիրթ երկրներում հնարաւոր է դառնում ոչ միայն կնոջ, այլև մարդի յանցանքի պատճառով և այսպիսով երկու ամուսինների հաւասարութիւնը մի այսպիսի ծանրակշիռ խնդրում վերականգնւում է: Միև կողմից այն թէ ով է մի երեխայի հայրը եղել, այդ բանը որոշելու դէմ եղած օրէնքի ընդդէմ մղուող ազիտացիան աւելի քան կազմակերպւում է և ընդարձակւում: Առաջադրւում կամ հաստատւում

են շատ ուրիշ օրէնքներ, որոնք նպաստում են գոնէ մասամբ երկու սեռերի իրաւական դրութեան հաւասարման գաղափարին:

Տղամարդուն կնոջը կատարելապէս իրաւապէս հաւասարեցնել անպայման, միշտ էլ անհնար կլինի, քանի որ կապիտալիզմի յատուկ տնտեսական տարբերութիւնը գոյութիւն կունենայ: Քանի որ իսկապէս տնտեսական տարբերութիւնները թոյլ են տալու և օրինաւոր են ճանաչելու մի դասակարգի միասին շահագործելը, դեռ ևս մի սեռի միւսին շահագործելը անպայման և անհրաժեշտ կլինի: Շահագործումը շարունակուում է աշխատաւոր դասակարգի մէջ, ուր որ տղամարդը կնոջը կամ դաշտն է քշում կամ գործարանը, որպէսզի նա աշխատի ընտանիքի պահպանութեան համար, պարզապէս և ցաւալիօրէն անտես առնելով մայրական պարտքերը չկատարելը: Սա է, ցաւում եմ ասել, ներկայումս կնոջ շահագործման հետեւանքը, որովհետեւ սօցիալական տեսակէտից աւելի տխուր բան չկայ, քան ամուսնացած կնոջ արհեստաւորական աշխատանքը և մանաւանդ մօրը, որի ոյժերը, երեխաներին բարձր և ընդարձակ դաստիարակութեան պարտքից խլուում են, հանուում: Իմ կարծիքով պատահական բան չէ, որ անգլիական փրլիսոփայական լեզուն իւր գոեհիկ արտայայտութեան մէջ միւսնոյն խօսքը (spinster) գործ է ածում աղջիկ և մանուկունի ասելու համար, միաժամանակ ցոյց տալու համար, որը գուցէ նախկին ժամանակներում, երբ գաւառական լեզուն է կազմուել և համապատասխան դրութիւն կար և որը բնութեան անդիմադրելի հրամաններին էր համապատասխանում, թէ միայն առնական կիներ արուարդութեան աշխատանքով կարող է զբաղուել: Սակայն հարուստ դասակարգը կանանց շահագործելը շարունակում է,

թէև այլ ձևով, որտեղ տղամարդը իւր կնոջ օժիտի շնորհիւ յաճախ իւր համար մի պատուաբեր դատարկապորտութիւն է ստեղծում. բարենորոգութեան ամեն մի փորձ, որ այս դէպքում եղել է, հանդիպել է ամեն տոհմի և ամեն դասակարգի տղամարդկանց կողմից արգելքի, որոնք բոլորն էլ, թէև զանազան պատճառներից դրդուած և զանազան չափով, մի ընդհանուր որոշումով վնասել են: Անօգուտ է ծածկել այդ բանը. ինչպէս կնոջ արտօնութիւնը համայնական սեփականութեան դրութեան բնական կազմի մի անհրաժեշտ մասն էր, նոյնպէս մարդու արտօնեալ դրութիւնը կապիտալիստական սեփականութեան բնական արդիւնքն է և այս կռուախնձորը միջից չի վերցնուի, մինչև որ նորից, թէև ուշ, այլ ևս անհնարին, ընդհանուր սեփականութեան դրութիւնը, այլ սեփականութեան մի այնպիսի դրութիւն ստեղծուի, երբ անպայման կերպով կապիտալիստական ամեն մի շահագործում վերջանար: Ուրիշ խօսքով — ուժեղ սեռի մենաշնորհը ճնշելու համար, պէտք է կապիտալիստական ստացուածքի մենաշնորհը ճնշել: Տնային և կապիտալիստական բարենորոգութիւնները սերտ կերպով կապուած են միմեանց հետ. մի աւելորդ ապացոյց, եթէ միայն սրա կարիքը լինէր, որ այն անքակտելի կապանքի, որով սօցիալական բազմանկիւնու բոլոր կողմերը տնտեսական գործօնի գոյութեան պայմաններով կապուած են:

* * *

Այսպիսի համառօտ գծերով վերջացնում եմ իմ շարաթական դասախօսութիւնները. մի նիւթ, որը աւելի խորը քննութիւն է պահանջում. ես կցանկանայի միայն, որ այս դասախօսութիւնները թէև դժգոյն և մութ, բայց մի գաղափար կարողանային տալ այն

նոր գիտութեան մասին, որը աշխատեցինք լուսաբանել, թէ նա ի՞նչ է, ի՞նչ է ձգտում և ի՞նչ է ուսուցանում: Կարծում եմ, որ ես ցնորքներ չեմ ստեղծում: Մի տպաւորութիւն, որ իւրաքանչիւր որ ստանում է ով որ իրեն նոր գիտութեանն է նուիրում, թէ և նա բախտ է ունենում մի այսպիսի դժուար խնդրի համար աւելի պատրաստի ուսուցչից, քան ես եմ, սովորելու, այն է, որ սօցիոլոգիան դեռ բաւական բաց տեղեր ու էական անկատարութիւններ ունի. այդ բացերը չպէտք է նոր գիտութեան տեսակին վերագրել և սրանով նրա նշանակութիւնը ու մտաւորական արժէքը հապճեպով թուլացնել: Այսպիսի մի եզրակացութեան դէմ պէտք է ամբողջ ոյժովս կռուեմ: Ես կարծում եմ որ մեծ մոլորակների վրայ ևս, եթէ նրանց նորագոյն գիտութեան միջոցներով դիտենք, աստղագէտների անուանած մթութիւններն ու բծերը կզրտենք: Սակայն ով որ կարողանայ այդ խորհրդաւոր համաստեղութիւններին մօտենալ և հասկանալ, գուցէ կարողանայ գտնել, որ այդ երեացող բծերը իսկապէս գեղեցիկ դաշտեր են կամ ծիծաղկոտ մարգագետիններ, ոսկէ արմատներով լի, շրջապատուած գեղարուեստական լիւններով և կանաչ անտառներով: Ո՞վ կարող է երաշխաւորել, որ այն ինչ որ սօցիոլոգիայում իբրև բիծ է երևում, նոյնպէս չպէտք է այն բանին վերագրել, որ մենք այս գիտութիւնը շատ հեռուից, մի անհրաժեշտօրէն անկատար խոշորացոյցով ենք դիտել, փոխանակ նրա սրբազան խորհրդաւորութիւնները հասկանալու: Հէնց որ մենք այդ բանին հասանք, գուցէ կտեսնենք, որ այդ բծերը հետզհետէ անյայտանում են, որպէսզի տեղ տան պտղաբեր և կանոնաւոր կարգաւորուած ճշմարտութեան տեսարանին: Թող մեր հոգիներից հեռու լինի վախկոտ երկշտութիւնը, որը

թուցիկ վայրկեանի ազդեցութեան տակ առաջ եկած դժուարութիւններից վախում է: Յառաջ, յառաջ կրկնապատիկ ոգևորութեամբ քննութեան դժուար կածանով ձեռք բերելու մեծ օրէնքները, որոնք խորհրդաւորութեան և անդորրութեան մէջ ծածկուած են: Միշտ յառաջ, յառաջ. եթէ միառժամանակ մեր ճանապարհը դէպի անապատն է տանում կամ եթէ նրա անդունդները արիւնով բծաւորուած լինին, այնուամենայնիւ կգայ այն օրը, երբ խաւարը կցրենք, ժայռերը կտեսնենք. ամեն կողմը կանաչ և լոյս կտարածուի. այն օրը մենք կստանանք մեր արժանի վարձատրութիւնը մեր ցաւերի և աշխատանքների համար, այն ժամանակ կհասնենք ճշմարտութեան խոստացեալ երկիրը:



Handwritten text in a cursive script, likely a historical document. The text is written in a dark ink on aged, slightly discolored paper. The script is dense and fills most of the page. There are two circular stamps or seals visible on the left side of the page, one near the top and one near the bottom. The text appears to be a formal or legal document, possibly a contract or a record of a transaction. The handwriting is consistent throughout, suggesting it was written by a single person or in a specific official style.

ՀՀ Ազգային գրադարան



NL0189720

